

ՀԱՐԱՄ ՏԵՂԵՆՈ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԳ

Ա. Շ Ա Ս Ի

ՈՒՐՈՒԱԿԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԾՆՈՒՆԴԻ

Հայոց Ն. Կ. Գոնոսյեան

82
7-48

ԲՈԼՈՐԻՆԱՐԻԹԻՒՆ
ԿԵՐՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՈՎԱՆԴԵՐՈՒԹՅՈՒՆ
1928



07 JUN 2005

16 OCT 2009

ԶԱՐԼԱ ՏԻՔԸՆԱ

82
7-48
Այց

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԳ

Ա. Ռ Զ Ա. Կ.

ՈՒՐՈՒԱԿԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԾՆՈՒՆԴԻ

1005
92081

Հայացուց Ն. Կ. Գոնսակեան



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԱՄԵՐԻԿԱՆ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
1928

03 APR 2013

2029

ԽՕՍՔ ՄԸ ԹԱՐԴՄԱՆՁԵՆ

Գրքովիս հեղինակն է Անգլիացի մեծանամբաւ պի-
պազիր Չարլս Ֆիբլիս (1812—1870): Աղյատիկ ծնողաց
զաւակ՝ անշակեց աղյատութեան բոլոր դառնութիւնները:
Հակառակ բուռն փափառին՝ ջրցաւ ասանազ բող թէ բարձր,
զեր նախնական համես կրուրիւն մը: Իր դպրոցն եղաւ
Աղյատութիւն, իսկ ուսուցիչը՝ Դիպուած: Ի ծիկ սուր դի-
տոյ, ուշիմ ուշադիր եւ աշխատակեր Ֆիբլիս խորապէս
սերեց իրական կեանիքը եւ ապա նկարեց վարսես նկար-
յի վրայինք: Իր զործերը հշանաւոր զանձարան են զուսա-
րափառութեան եւ սրախօսութեան: Գրուած լրաբոյ մարդ-
կային մեայուն զգացուաներու վրայ՝ հանդիպով կարդաց-
ուեան միշտ ու սփիտի կարդացուին: Ներկայ բարգևանու-
թիւնը կու տայ, կը յուսանի, դոյզն զաղախար մը հեղի-
նակին հնարամնութեան ու բարոյասիրութեան վրայ:

Ն. Կ. Գ.

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ «ՍԷԼԱՄԵԹ»

ԴԱՆԻԵԼ ՅՈՎՃԱՆՆԵՍԵԱՆ

Պայպը Հառով թիւ 2, Ֆինճանմըլար եօգուշու, Կ. Պոլիս

2079

ՆԱԽԱԲԱՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ

Ուրուականի այս գրքոյկին մէջ ջանացի յարուցանել Գալափարի մը Ուրուականը, որ գժտեցնելու չէ ընթերցողներս իրենց անձերուն հետ, իր արու հետ, եղանակին հետ, կամ ինձի հետ: Իցիւ թէ հաճելի կերպով յաճախէ իրենց տունը, իւ ոչ ոք փափարի փախցնել զայն:

**ԵՐԵՑ ԽԱԼԱՏԱՐԻՄ ՔԱՐԵԿԱՄԲ
ու ծառանի**

2. 8.

Դեկտ. 1843

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԿ	Էջ
ՏՈՒՆ Ա — Մարլիի Ոգին	4
ՏՈՒՆ Բ — Երեք Ոգիներուն Առաջինը	28
ՏՈՒՆ Գ — Երեք Ոգիներուն Երկրորդը	52
ՏՈՒՆ Դ — Երեք Ոգիներուն Վերջինը	84
ՏՈՒՆ Ե — Վախճանը	105

ՊՈՊ ՔԲԼՉԻԹ
ՓԻՄԸՐ ՔԲԼՉԻԹ
ԹԻՄ ՔԲԼՉԻԹ

Պ. ՖԷՇԻՈՒԻԿ
ՖՐԵՏ
ԱՆՅԵՍԱԼ ԾՆՈՒՆԴԻ ՈՒԻՒՆ
ՆԵՐԿԱՅ ԾՆՈՒՆԴԻ ՈՒԻՒՆ
ԱՊԱԳԱՅ ԾՆՈՒՆԴԻ ՈՒԻՒՆ
ՃԵԹՔԸՊ ՄԱՐԼԻԻ ՈՒԻՒՆ

ՃՕ

ԷՊԵՆԵԶԵՐ ՄՔՐՈՒՅՑ

Պ. ԹԱՂԲԼՐ,
ՏԵՔ ԹԻԵԼՔԻՆՑ
ՊԵԼ

ՔԱՐՈՒՅՑ

ՏԻԿԻՆ ՔԲԼՉԻԹ
ՊԵԼԻՆՏԱԿ ՄԱՐԹԱԼ ՔԲԼՉԻԹ
ՏԻԿԻՆ ՏԻԼՎՐՐ
ՖԷԼՆ
ՏԻԿԻՆ ՖԷՇԻՈՒԻԿ

ԼԱԳԻՆԵՎԼ ՍՐԲՈւճի զրագիրը
Գրազրին որդին
«Թայնի Թիմ» (Փոքրինի Թիմ), զրա-
զրին կրոսկազոյն որդին, կաղ
թարեսիրտ, զռարթ վաճառական մը
Սրբուճի բեռորդին (և ոչ եղօրորդին)
Անցեալ բաներ ցուցնող ուրուական
Բարփ, առասանեռն և ազնիւ բնու-
թեամբ ողի մը
Դալր բաներու ստուերները ցուցնող
ուրուական մը
Սրբուճի գործի նախորդ ընկերոջ ուր-
ուականը
Նաւային պատոյք վաճառող և զողօն
ընդունոլ մը
Կծի, ազահ մարդ մը, Սրբուճ և
Մարլի Ծնկեան վերապրող ան-
դամ և մօրեղայր ֆրէտի (և ոչ
հօրեղայր)
Ամուրի մը
Սրբուճի աշակերտակից մը
Գեղանի կին մը, Սրբուճի վաղեմի
սիրուեին
Սրբուճի պարտականներէն մէկուն
կինը
Պոպ ՔԲԼՉԻԹի կինը
Պոպի գուարերը
Լուացարարուեի
Սրբուճի բոյըը
Պ. ՖԷՇԻՈՒԻԿի արժանաւոր տիկինը

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԳ

ՏՈՒՆ Ա

ՄԱՐԼԻԿ ՈԳԻԿ

Նախ ըսենք թէ Մարլի մեռած էր։ Այդ մասին ուեէ
տարակոյս չկայ։ Թաղման արձանագրութիւնն ստորա-
գրուած էր եկեղեցականէն, թաղին գրազրին, մեռելա-
թաղէն և զլիսաւոր սգաւորէն։ Սքրուճ ստորագրեց
զայն, և Սքրուճի անունն հրապարակի վրայ ընդունե-
լի էր ոււէ բանի համար զոր ստորագրէր։ Այս, Մարլի
մեռած էր գուռի բեւեռի մը չափ։

Ուշագրութիւն։ Զեմ ուզեր ըսել թէ ես գիտեմ
անձնական ծանօթութեամբ թէ այդ բեւեռն իր մէջ ի՞նչ
բան ունի մասնաւորապէս մեռած։ Եթէ ինձի մնար,
կրնայի գագաղի բեւեռ մը երկաթեղէններու մէջ ամէ-
նէն մեռածն համարիլ։ Սակայն բանաձեւին կամ նմա-
նութեան մէջ մեր նախնեաց իմաստութիւնը կայ,
և իմ անսուրբ ձեռքերս պիտի չդպչին անոր, ապա թէ
ոչ՝ կը մեռնի երկիրը։ Ինձի պիտի ներէք ուրեմն ազ-
գուապէս կրկնել թէ Մարլի մեռած էր գուռի բեւեռի
մը չափ։

Սքրուճ գիտէ՞ր թէ մեռած է։ Հարկաւ։ Խճչպէս
կրնար չգիտնալ։ Սքրուճ եւ ինք գործի ընկեր էին՝
չեմ գիտեր քանի՛ տարիէ ի վեր։ Սքրուճ անոր միակ
ինամակալը, միակ գործակատարը, միակ փոխանորդը,
միակ ժառանգորդը, միակ բարեկամը և միակ սգաւորն
էր։ Եւ Սքրուճ անզամ այնքան սաստիկ չսարսկցաւ այս
տիրուր գէպքին համար, այլ՝ յուղարկաւորութեան օրն

իսկ գործի պատուական մարդ եղաւ և անվիճելիօրէն շահաւոր գործառնութեամբ մը տօնեց զայն :

Մարլիի յուզարկաւորութեան յիշատակումը ետ կը բերէ զիս դէպի մեկնակէտա : Տարակոյս չկայ թէ Մարլի մեռած էք : Պէտք է որ որոշ հասկուի այս, եթէ ոչ զարմանալի ոչ մէկ արդիւնք կրնայ ունենալ պատմութիւնը զոր պիտի ըսեմ ես : Եթէ կատարելապէս համոզուած չըլլայինք թէ Համլէթի Հայրը մեռաւ թատերախալին ներկայացումէն առաջ, արեւելեան հովի մը ժամանակ անոր գիշերային պտոյտն իր սեփական պատնէշներուն վրայ՝ ոչինչ պիտի ունենար աւելի ուշագրաւ քան ուեկ ուրիշ չափահաս մարդու գիշերային յանկարծական պարը հողմաշունչ վայրի մը վրայ, ըսենք զոր օրինակ՝ Սրբոյն Պօղոսի մայր եկեղեցին գերեզմանաւունը — նկարագրապէս ապէշեցնելու համար իր որդւոյն տիկար միտքը :

Սքրուձ երբեք ներկով չչնչեց Մարլիի անունը : Վաճառատան դրան վերեւ մնաց այն, տարիներ ետքը սապէս : Սքրուձ և Մարլի, Վաճառատունը կը ձանչցուէր իրը Սքրուձ և Մարլի, Նոր յաճախորդներ երբեմն Սքրուձ-Սքրուձ և երբեմն Մարլի կը կոչէին զայն : Բայց ինք երկու անունին ալ կը պատասխանէր : Ամէնք մէկ էր անոր :

Բայց, ո՞ն, յեսանողի սեղմ ափ ունէր Սքրուձ—ճըզմող, ճմլող, խլող, քերող, կորզող, կծծի հին մեղաւո՛րը : Կայծքարի պէս կարծր ու սուր, որմէ ոչ մէկ պողպատ կրցած էր սուստ կայծ հանել, ոստրէի պէս թաքուն, ինքնավար ու առանձնակեաց : Անոր ծոցին պաղութիւնը կը սառեցնէր անոր դէմքը, կը կծէր անոր սրածայր քիթը, կը կնճոստէր անար այտերը, կը ծանրացնէր անոր գնացքը, կը կարմրցնէր անոր աչքերը, կը կապուացնէր անոր նիշար չուրթները և նրբամութեամբ

կ'արտայայտուէր իր ձոնչող ձայնով : Եղեամի սպիտակութիւն մը կար զլիուն, յօնքերուն և ջղուտ ծնօտին վրայ : Իր հետ կը տանէր միշտ իր սեփական ցածրաբխառնութիւնը, կը սառեցնէր իր գրասենեակը ամրան կիզիչ օրերուն և մէկ աստիճան իսկ չէր հալեցներ ծննդեան Տօնին ժամանակ :

Սքրաքին չերմութիւն և պաղութիւն բնաւ չէին աղքեր Սքրուձի : Ուեէ տաքութիւն կարող չէր տաքցնել զայն : Ոչ ալ ձմեռնային ուեէ օդ կը պաղեցնէր զայն : Փչող ոչ մէկ քամի աւելի կծու էր քան ինք, տեղացող ոչ մէկ ձիւն աւելի շեշտակի կը դիմէր իր նպատակին և անձրեւի ոչ մէկ տարափ աւելի խուլ էր աղաչանքի քան Սքրուձ : Գէշ օզը չէր զիտեր թէ ո՛ւր կըրնար բանել զայն : Ամէնէն յորդ անձրեւը, ձիւնը, կարկուտը և անձրեւախառն ձիւնն ու կարկուտը կընային միայն մէկ առաւելութեամբ պարծիլ անոր վրայ : Իրենք շատ անզամ «չնորհքով կը տեղային»,» իսկ Սքրուձ ոչ :

Ոչ ոք երբեք կը կեցնէր զայն փողոցին մէջ, ըսելու համար ուրախ գէմքով, «Սիրելի Սքրուձ, ի՞նչպէս էք : Ե՞րբ պիտի զաք տեսնել զիս :» Մուրացիկներ երբեք չէին աղերսեր անոր որ չնչին ողորմութիւն մը տայ իրենց : Տզայք երբեք չէին հարցներ անոր թէ ժամը քանին է : Սքրուձի ամբողջ կեանքին մէջ ոչ մէկ այր կամ կին երբեք հարցուց անոր թէ այսինչ այնինչ տեղը երթալու ճամբան ո՛րն է : Կոյրերու շուներն անզամ կարծես կը ձանչնային զայն : Երբ կը տեսնէին թէ կու զայ, դէպի դոնամուտեր և զաւթակներ կը քաշէին իրենց տէրերը : Եւ ապա իրենց պոչերը կը շարժէին, իրը թէ ըսելով, «Աւելի լաւ է աչազուրկ ըլլալ քան չարաչք, ով կոյր տէր :»

Բայց Սքրուձի ի՞նչ հոգ : Իր ուզածը ճիշտ այդ էր : Կեանքի բազմաթիւ շատիւներուն մէջէն իիր ճամբան

բանալ, մարդկային ամէն համակրութիւններու ազգարարելով որ հեռու կենան իրմէ. ահա ինչ որ խորամանկներ «հաճոյք» կը կոչէին Սքրուճի համար:

Օր մը, տարւոյն բոլոր բարի օրերէն Ծննդեան Տօնի խթման օրը, իր գրասենեակին մէջ նստած կ'աշխատէր: Օդը ցուրտ, տիտուր և միանգամայն մասախլապատ էր: Կը լսէր իր տեղէն որ մարդիկ գուրսի գաւթին մէջ վեր վար կ'երթային հեւալով և ձեռքով իրենց կուրծքերը ու ոտքով գետնի քարերը կը ծեծէին տաքնալու համար: Քաղաքին մեծ ժամացոյցները գեռ միայն երեք զարկած էին: Բայց արդէն իսկ բոլորովին մութէր—օրն ի բուն լոյս չէր եղած—և մօտակայ գրասենեակներու պատուհաններուն մէջ ճարգներ կը փալիքային չօշափելիքէն մութ օգին վրայ նետուող կարմիր բիծերու նման: Մառախուզը ներս կը խուժէր ամէն ճեղքէ և բանալիի ծակէ, և այնքան թանձր էր գուրսը որ, թէն գաւիթն ամէնէն նեղերէն էր, դիմացի տուները բոլորովին ուրուական երեւոյթներ առած էին: Երբ մարդ կը տեսնէ մութ ամպին վայրէջքը որ ամէն բան կը խաւարեցնէ, կը փորձուի խորհիլ թէ Բնութիւնը չատ մօտ կ'ապրի և կ'եռայ ընդարձակ չափով:

Սքրուճի գրասենեակին գուռը բաց էր, որպէս զի տէրը կարենար հսկել գրագրին վրայ որ անդին նամակ կ'ընդօրինակէր տեսակ մը աւազանի նմանող տիտուր խցիկի մը մէջ: Սքրուճ չատ փոքրիկ կրակ մը ունէր, իսկ գրագրին կրակն այնչափ աւելի փոքր էր որ վառ ածուխի կտոր մը կը թուէր: Սակայն մարզը չէր կրնար նոր ածուխ գնել, վասն զի Սքրուճ ածուխի աման իր սենեակին մէջ կը պահէր, և եթէ գրագիրը թիով ներս գար, տէրն անվրէպ կը նախտայնէր. թէ հարկ պիտի ըլլայ իրաբմէ բաժնուիլ: Ուստի գրագիրն իր վրայ կ'առնէր ճերմակ իր շալը և կը ջանար տաք-

նալ ճրագին բոցով, բայց գօրաւոր երեւակայութեան տէր չըլլալով չէր յաջողեր այդ ձիգին մէջ:

«Ծնորհաւոր Ծնունդ, հօրեղբայր: Աստուած պահէ քեզ,» գոչեց զուարթ ձայն մը: Սքրուճի եղբօրորդւոյն ձայնն էր: Այնքան շուտ եկած էր եղբօրորդին որ այս եղաւ անոր մերձեցման առաջին լուրը Սքրուճի համար:

«Վա՛շ,» ըսաւ Սքրուճ: «Պարա՛պ խօսք:»

Սքրուճի այս եղբօրորդին ցուցաին ու մասախուզին մէջ արագ քալելով այնչափ տաքցած էր որ կը փայլէր ամբողջովին: Դէմքը կարմրած էր և գեղեցկացած, աչքերը կը շողային և շունչը կը գոլորշիանար:

«Ծնունդը պարա՛պ խօսք,» ըսաւ Սքրուճի եղբօրորդին: «Վատահ եմ թէ այդպէս ըսել չէք ուղեր:»

«Կ'ուղեմ,» ըսաւ Սքրուճ: «Ի՞նչ իրաւունք ունիք չնորհաւորելու: Ի՞նչ պատճառ ունիք ուրախանալու դուք որ բաւական աղքատ էք:»

«Ին, ուրեմն,» պատասխանեց եղբօրորդին զուարթութեամբ: «Դուք ի՞նչ իրաւունք ունիք տիտուր ըլլալու, ի՞նչ պատճառ՝ դաժան ըլլալու դուք որ բաւական հարուստ էք:»

Սքրուճ, չունենալով անմիջապէս տալու պատրաստ աւելի լաւ պատասխան մը, «Վա՛շ,» ըսաւ նորէն ու աւելցուց նոյն դիտողութիւնը, «Պարա՛պ խօսք:»

«Մի բարկանար, հօրեղբայր,» ըսաւ եղբօրորդին:

«Ի՞նչպէս չբարկանամ,» պատասխանեց հօրեղբայրը, «երբ յիմարներու այսպիսի աշխարհի մը մէջ կ'ապրիմ: Ուրախ զուարթ Ծնունդ: Կորսուի՛ ուրախ զուարթ Ծնունդը: Ծնունդի ժամանակն ի՞նչ է ձեզի համար: Ո՞չ ապագին ժամանակ պարտք վճարելու՝ դըրամ չունենալով, ժամանակ տարի մը եւս մեծնալու և ոչ թէ ժամ մը աւելի հարստանալու, ժամանակ ձեր տամարներն հաւասարակշռելու և տասներկու ամսուան

շրջանի մը մէջ տեղի ունեցած ամէն գործառնութիւնն ձեզի դէմ դիլուած գտնելու : Եթէ կարենայի ես իմ կամքս քալեցնել, » ըսաւ Սքրուճ բարկութեամբ, «Ուրախ զուարթ Ծնունդ» ըսելով շրջադայող ամէն ապուշ իր փուտինին (*) հետ կը նետուէր եռացող կաթսայի մը մէջ և կը թագուէր սրտին մխուած հոյիի (**) ցիցով : Այս, անշուշտ :

«Հօրեղբա՛յր, » աղաղակեց եղբօրորդին աղերսագին : «Եղբօրորդի՛, » փոխադարձեց հօրեղբայրը խստութեամբ : «Դուք ձեր կերպով տօնեցէք Ծնունդը, ես ալ իմ կերպովս տօնեմ : »

«Ճօնէ՛ք, » կրկնեց Սքրուճի եղբօրորդին : «Բայց դուք չէք տօնեք : »

«Զգեցէք որ չտօնեմ, ուրեմն, » ըսաւ Սքրուճ : «Շատ բարիք բերէ՛ ձեզի, շատ բարիք բերա՛ծ է ձեզի : »

«Շատ բաներ կան որոնցմէ կրնայի բարիք քաղել և օգտուած չեմ, կրնամ ըսել, » պատասխանեց եղբօրորդին — «և մին է Ծնունդը : Բայց վստահ եմ թէ Ծնունդի տօնը, երբ զայ — իր անուան ու ծագման արժանավայել պատկառանքէն զատ, եթէ կարելի է անոր փերաբերնեալ բան մը զատել իրմէ — միշտ նկատած եմ իր բարի ժամանակ : աղնուութեան, ներման, սիրոյ և ուրախութեան ժամանակ : իր տարւոյն երկար ընթացքին մէջ ինծի ծանօթ միակ ժամանակը, երբ այսիր ու կիներ կարծես միաբանութեամբ իրենց փակ սիրտերը կամաւ կը բանան և իրենցմէ զար մարդոց

(*) Անզիացիներու սիրական ուտելիք մը անուշ ապուրի թիշ շատ նման, որ կը շնուիլալիւրով, կաթով, շաբարով եւ պոտզով :

(***) Փշազարդ եւ կարմիր հատիկով մշտադալար տունկ'մը (Փրեմու), որով կը զարդարուի Անզիացիներու տունը Ծնունդի ժամանակ :

վրայ կը խորհին իբր իրապէս դէպի ի գերեզման դիմող ուղեկիցներու և ոչ թէ այլուր ճամբորդող արարածներու տարբեր ցեղի մը վրայ : Եւ ուստի, հօրեղբայր, թէպէտ Ծնունդը բնաւ փշուր մը ոսկի : Կամ արծաթ դըրած չէ իմ գրապանս, կը հաւատամ թէ ինծի բարիք ըրած և պիտի ընէ : Կ'ըսեմ ուրեմն, Աստուած զայն օրհնէ՛ : »

Աւազանաբնակ գրագիրն աստանց զգալու ծափահարեց : Սակայն անմիջապէս անպատշաճութիւնն զգալով՝ կրակը խառնեց ու առ յաւէտ մարեց անոր վերջին տկար կայծը :

«Եթէ ուրիշ ձայն մը եւս լսեմ իզելի, » ըսաւ Սքրուճ, «գիրքդ կորսնցնելով կը տօնես Ծնունդդ : — Դուք բաւական պիրճախօս էք, պարոն, » յարեց՝ իր եղբօրորդին զառնալով : «Կը զարմանամ որ Խորհրդարան չէք երթար : »

«Մի բարկանաք, հօրեղբայր : Վաղը եկէք, մեղի հետ ճաշեցէք : »

Սքրուճ ըսաւ, «Կորսուէ, զնա : » Իւրաքանչիւր բառի վրայ ծանրանալով կրկնեց այս խօսքը :

«Բայց ինչո՞ւ, » աղաղակեց Սքրուճի եղբօրորդին, «ինչո՞ւ : »

«Ինչո՞ւ ամուսնացար, » հարցուց Սքրուճ :

«Վասն զի սիրահարեցայ : »

«Վասն զի սիրահարեցա՛ր, » մրմիջեց Սքրուճ, «որպէս թէ աշխարհի վրայ միակ բանն ըլլար այդ՝ աւելի ծիծաղելի քան չնորհաւոր Ծնունդը : «Երթա՛ք բարով, »

«Սակայն, հօրեղբայր, այդ գէպքէն առաջ ալ դուք երբեք եկած չէք զիս տեսնել : Ինչո՞ւ չգալու իբրեւ պատճառ կու տաք զայն հիմա : »

«Երթա՛ք բարով, » ըսաւ Սքրուճ :

«Ես բան մը չեմ ուզեր ձեզմէ, բան մը չեմ ինդրեր : Ինչո՞ւ չկրնանք սիրով ըլլալ իրարու հետ : »

«Երթա՛ք բարով,» ըստ Սքրուճ։
 «Կը ցաւիմ բոլոր սրտով, որ այսքան անդրդուելի
 կը գոնիմ ծեզ երթեք ունեցած չենք կու մը, որու
 մէջ ես մաս ունենայի։ Բայց ես փորձն ըրի ի յարդանս
 Ծնունդի, և մինչեւ վերջը պիտի պահեմ իմ Ծնունդի
 տրամադրութիւնս։ Ուստի, ուրախ Ծնո՞ւնդ, հօրեղ-
 բայր։»

«Երթա՛ք բարով,» ըստ Սքրուճ։
 «Եւ երջանիկ նոր Տարի։»
 «Երթա՛ք բարով,» ըստ Սքրուճ։
 Եղբօրորդին մեկնեցաւ, սակայն առանց բարկու-
 թեան խօսքի։ Դուրսի դրան վրայ կանգ առաւ օրուան
 ողջոյն ու մաղթաները մատուցանելու համար զրա-
 զրին, որ մաելով հանդերձ Սքրուճէ աւելի տաք էր,
 վասն զի սիրալիր կերպով փոխադարձեց զանոնք։
 «Ահա ուրիշ մը,» մրմինեց Սքրուճ, լսելով անոր
 պատասխանը։ «Իմ գրագիրս, շարաթական տասնըհինգ
 շլին առնող, որ կին ու ընտանիք ունի և ուրախ
 Ծնունդի վրայ կը բարբառի։ Ես յիմարանոց պիտի քաշ-
 ուիմ։»

Այդ յիմարը, Սքրուճի եղբօրորդին ձամբելու պա-
 հուն, ուրիշ երկու մարդ առաւ ներս։ Պատկառելի ու
 վայելագեղ էին անոնք, և զլխարկ հանելով կեցան
 Սքրուճի գրասենեակին մէջ։ Տօմարներ և թուղթեր ու-
 նէին իրենց ձեռքը և խոնարհութիւն ըրին անոր։

«Սքրուճի և Մարլիի գրասենեակն է, կարծեմ,» ըստ
 երկուքն մին, իր ցանկին վրայ նայելով։ «Պ. Սքրուճի թէ Պ. Մարլիի հետ խօսելու պատիւն ունիմ։»

«Պ. Մարլի մեռած է եօթը տարիէ ի վեր,» պատ-
 ասախանեց Սքրուճ։ «Եօթը տարի առաջ մեռաւ, ձիշտ
 այս զիշեր։»

«Տարակոյս չունինք թէ անոր վերապրող ընկերը

լաւ։ Ներկայացուցիչն է անոր առատաձեռնութեան,» ըստ պարոնը, իր յանձնարարականները ներկայացնե-
 նելով։

Սքրաբեւ էր երկուքն համասեռ ողիներ էին։ «Ա-
 ռատաձեռնութիւն» չարագուշակ բառը լսելուն պէս
 Սքրուճ խոժուեցաւ և զլուխը երեցցնելով ետ տուաւ
 յանձնարարականները։

«Տարւոյն տօնական այս եղանակին մէջ, Պ. Սքրուճ,» ըստ պարոնը՝ զրիչ մը առնելով, «ոովորականէն աւ-
 ելի բաղձալի է որ թեթեւ օգնութիւն մը ընկնք աղ-
 քատաներու և կարօտեալներու, որոնք մնեապէս կը
 տառապին ներկայ ժամանակիս մէջ։ Հազարաւորներ
 զուրկ են հասարակ պէտքերէ, բիւրաւորներ ալ՝ հասա-
 րակ վայելքներէ։»

«Բանտեր չկա՞ն,» հարցուց Սքրուճ։

«Ճա՞տ,» ըստ պարոնը, զրիչը դարձեալ վար դը-
 նելով։

«Պետական աղքատանոցնե՞ր,» հարցուց Սքրուճ։

«Տակաւին կա՞ն անոնք։»

«Այս, տակաւին,» պատասխանեց պարոնը։ «Երա-
 նի՛ թէ կարելի ըլլար ըսել թէ չկան։»

«Աղքատախամամի Օրէնքը կանոնաւոր գործունէու-
 թեան մէջ է ուրիմն,» ըստ Սքրուճ։

«Այս, այս, պարոն։»

«Լսելով ինչ որ ըսիք առաջ՝ վախցայ թէ բան մը
 պատահած է անոնց օգտակար գործունէութիւնը դադ-
 րեցնող,» ըստ Սքրուճ։ «Ճատ ուրախ եմ որ կը շա-
 րունակեն։»

«Համազուած ըլլալով թէ անոնք հաղիւ հազ մտքի
 կամ մարմնի Քրիստոնէական սփոփանք կու տան բազմու-
 թեան,» պատասխանեց պարոնը, «մենք, քանի մը հո-
 գիի հետ միանալով, ձեռնարկեցինք զումար մը հան-

գանակել և անով քիչ մը ուտելիք, խմելիք և ջերմութեան միջոց գնել աղքատներու համար։ Ձեռնարկիս համար այս ժամանակը կ'ընտրենք, վասն զի ամէն ուրիշ ժամանակէ աւելի այս ժամանակ սուր կերպով կը զգացուի Կարօտութիւնը և կը ցնծայ Առատութիւնը։ Ի՞նչ գումար նշանակեմ ձեր անուան դէմ։»

«Ոչի՞նչ,» պատասխանեց Սքրուճ :

«Անծանօթ կ'ուզէք մնալ։»

«Կ'ուզեմ հանգիստ թողուիլ,» ըստ Սքրուճ։ «Քանի որ կը հարցնէք թէ ի՞նչ կ'ուզեմ, պարոններ, այդ է իմ պատասխանս։ Ես ինքս չեմ ուրախանար Ծնունդին, և գործիս չգար ծոյլեր ուրախացնել։ Ես կը նպաստեմ այն հաստատութիւններուն զորս յիշեցի։ Բաւական ծախք է այս արդէն, և անոնք որ կարօտ են՝ անոնց դիմելու են։»

«Շատեր չեն կրնար անոնց դիմել, շատեր ալ նախամեծար կը համարին մեռնիլ։»

«Եթէ նախամեծար կը համարին մեռնիլ,» ըստ Սքրուճ, «լաւ է որ մեռնին և բնակչութեան աւելորդը նուազեցնին։ Ասկէ զատ — կը ներէք — ես չեմ դիտեր այդ կէտը։»

«Բայց կրնաք դիտնալ,» յարեց պարոնը :

«Իմ գործս չէ այդ,» պատասխանեց Սքրուճ։ «Մարդու մը բաւականէ իր սեփական գործն հասկնալ եւ ուրիշներու գործին չխառնուիլ։ Իմս անդադար կ'զբազեցնէ զիս։ Երթա՛ք բարով, պարոններ։»

Որոշ տեսնելով թէ անօգուտ պիտի ըլլար իրենց նպատակն հետապնդել, մեկնեցան մարդիկը։ Սքրուճ իր ախատութիւնը վերակաւ իր անձին վրայ աւելի լաւ համարումով և իրեն համար սովորականէն աւելի զուարթ տրամադրութեամբ։

Միեւնոյն ժամանակ մառախուղն ու խաւարն այն.

քան կը թանձրանային որ մարդիկ բոցավառ ջահերով հոս հոն կը վազվազէին՝ առաջարկելով կառքի ձիերու առջեւէն երթալ և առաջնորդել անոնց։ Եկեղեցիի մը հինաւուրց աշտարակը, որու խռպոտ զանգակը միշտ կը յաջողէր վար Սքրուճի երեւիլ պատին Գոթական մէկ պատուհանէն, անտեսանելի եղաւ և ամպերուն մէջ ժամեր ու քառորդներ կը զարնէր, յետոյ կը գորդղար թըրթութեարով, իբր թէ զլուխը սառած էր վերը և ակուաներն իրար կը զարնուէին։ Յուրաքանչեացաւ Պըլլար սաստկացաւ։ Պըլլարու վաղոցին մէջ, գաւթին անկիւնը, քանի մը զործաւորներ օգային կազի խողովակներ կը նորոգէին։ Վասարանի մը մէջ մեծ կրակ մը վասած էին, որու շուրջ հաւաքուելով կարգ մը ցնցուազգեստ մարդիկ ու աղայք իրենց ճեռքերը կը տաքցնէին, և զմայլումով իրենց աչքերը կը թարթէին բոցին տաշեւ։ Խոզովակին խիցը անինամ թողուած ըլլարով չուրը կը հոսէր և յուսահատական սառի կը փոխուէր։ Պայծառութիւնը խանութեարուն, ուր նոյնի սատեր ու հատապտուղներ կը ձարձատէին պատուհաններու ձրագներուն տաքութեան մէջ, կը կարմրցնէր անցորդներու տժգոյն դէմքերը։ Սքանչելի զուարձալիք ու փառաւոր հանդէս եղան հաւավաճառներու և նպարավաճառներու զբաղումները, որոնց հետ գրեթէ անկարելի էր հաւատալ թէ ուեւէ զործ ունէին սակարկութեան ու զեղչով վաճառման պէս տիմար սկըզբունքներ։ Լորտ Քաղաքապետը քաղաքապետարանի ամրոցէն իր յիսուն խոհարաններուն և սեղանապետներուն հրամայեց Ծնունդը տօնել Լորտ Քաղաքապետին տան արժանավայել կերպով։ Փոքք գերձակն իսկ, որ նախորդ երկուշաբթի հինգ շիլին տուգանքի զատապարտած էր խմած և փողոցներու մէջ չարութիւն գործած ըլլարուն համար, իր ձեղնայարկին մէջ վազուան փուտինեկը կը շազէր, մինչ իր նիհար կինն ու մանկիկը զուրս ելան եղան միտ զնել։

Հետզհետէ կը թանձրանար մառախուղը և կը սաստականար ցուրտը, թափանցող, խայթող ցուրտը: Եթէ բարին Ար, Տընթըն, վոխանակ իր սովորական ունելին գործածելու, այսպիսի օդի միջոցով խայթած ըլլար Զար Ոգիին քիթը, այն ժամանակ արդարեւ նպատակայարմար ուժգնութեամբ պիտի մոնչքը ան: Անօթի ցուրտէն կրծող ու ծամուղ, ինչպէս ոսկրներ կը կըրծուին ու կը ծամուին շուներէ, ճղճիմ քիթով տղայ մը Սքրուճի գրան բանալիի ծակին առջեւ ծուեցաւ՝ Ծնունդի երդով մը զայն ուրախացնելու համար: Բայց ի լուր առաջին սա բառերուն,

«Ուրախ պարոն, Տէրն թեզ օրինէ՝»

Ոչինչ երբեք թող թեզ խոռվի՛»

Սքրուճ այնքան փութով խեց քանակը որ երգիչը սարսափանար փախաւ՝ թողլով ծակը մառախուղին ու աշելի եւս արժանավայել եղեամին:

Գրասենեակը փակելու ժամը վերջապէս հասաւ, Սքրուճ սրաի նեզութեամբ աթուէն ելաւ և լրիկ հասկըցուց իրողութիւնը աւազանաբնակ ակնկալու գրագին, որ իսկոյն ճրագը մարեց փութով և զլխարկը դուխը դրաւ:

«Դուք կ'ուզէք վաղը ամբողջ օրն ազատ ըլլալ կարծեմ,» ըստ:

«Եթէ պատշաճ կը համարիք, պարոն:»

«Պատշաճ չեմ համարիք,» ըստ Սքրուճ, «և շիտակ չէ: Եթէ երկու շլիին զեղչեմ ատոր համար, վստահ եմ թէ դուք ձեզ անիրաւուած պիտի համարիք:»

Գրագիրը թեթեւ ժպիտով մը պատախանեց:

«Եւ սակայն,» շարունակեց Սքրուճ, «գուք զիս անիրաւուած չէք համարիք, երբ օրական մը տամ փոխարէն ոչ մէկ գործի:»

Գրագիրն ըստ թէ այս՝ տարին միայն մէկ անգամ կը պատահի:

«Մե՛զձ պատճառանիք մարդու մը քսակը ամեն Դեկտեմբերի քսանըին կողոպտելու համար,» ըստ Սքրուճ, իր մեծ վերարկուն կոճկելով մինչեւ վիզը: «Բայց կարծեմ ազատ ըլլալու էք ամբողջ օրը: Յաջորդ օրն աւելի կանուխ եկէք:»

Գրագիրը խստացաւ և Սքրուճ մեկնեցաւ մրմրուալով: Գրասենեակն ակնթարթի մէջ զոցուեցաւ, և գրագիրը, որու մէջքէն վար կը կախուէին իր ճերմակ շալին երկար ծայրերը (խեղճը չունէր մեծ վերարկու), գնաց մանչերու խումբի մը միացաւ և քսան անզամ Քորնչիլի բլուրէն վար սահեցաւ Ծնունդի նախօրէին ի պատիւ, և յետոյ արագաքայլ գէպ ի տուն զիմեց աչք-կապուկ խաղալու համար:

Սքրուճ իր տիտուր ճաշն ըրաւ սովորական իր տիտուր ճաշարանին մէջ: Ապա բոլոր թերթերը կարգալէ և մնացեալ ժամերը սեղանաւորի իր տոմարին նուիրելէ ետեւ պառկիլ զնաց: Կը բնակէր այն սենեակներուն մէջ որ ժամանակաւ իր հանգուցեալ ընկերոջ կը պատկանէին: Տիտուր սենեակներ էին անոնք չնոքերու մասյլ կոյտի մը մէջ և շրջափակով մը, ուր բնաւ չէին ակնկալուեր: Սյնպէս որ մարդ կը փորձուի կարծել թէ այդ կոյտը, երբ գեռ պղտիկ տուն էր, հնն վազեց, ուրիշ տուներու հետ պահուըտուք խաղալով, և յետոյ մոռցաւ ձլքի ճամբան: Հիմա բաւական հին էր և բաւական ամայի, վասն զի ոչ ոք կը բնակէր հոն բաց ի Սքրուճ: Միւս սենեակները վարձու կը տրուէին իրը գրասենեակի: Շըշափակն այնքան մութ էր որ Սքրուճ անզամ, որ անոր մէն մի քարը կը ճանչնար, կ'ստիպուէր իր ճեռքերով խարիսափել: Մառախուղն ու եղեամը տան հին սեւ մուտքին վրայ

այնքան ծանրացած էին որ կարծես թէ Օդին Ոգին անոր սեմին վրայ նստած կը մտածէր տիսուր տիսուր :

Արդ իրաւ է թէ դրան ուռնակը բնաւ ուշագրաւ բան մը չունէր . միայն շատ խոշոր էր : Իրաւ է նաև թէ Սքրուճ իրկուն առտու տեսած էր զայն ամբողջ իր հոդ բնակութեան միջոցին , նաև թէ Սքրուճ երեւակայութիւն ըսուած բանէն այնչափ զուրկ էր որչափ և ունտոն քաղաքի ուէ բնակիչ , հաշուի մէջ առնելով նաև — ինչ որ խիզախ խօսք է — և որտ Քաղաքապետը , խորհրդականները և անոնց համազգեստը կրողները : Պէտք է յիշել նաև թէ Սքրուճ երբեք մտածած չէր Մարլիի վրայ այդ օրուան վերջին յիշատակումէն ի վեր թէ իր ընկերն էր եօթը տարիէ ի վեր մեռած : Ապա , ով որ կ'ուզէ , եթէ կրնայ , թող ինձի բացատրէ թէ ի'նչպէս եղաւ որ Սքրուճ , իր բանակին դրան կըզպանքին մէջ զնիլէ ետեւ , ուռնակին վրայ որ ուէ փոփոխութիւն կրած չէր՝ ուռնակ չտեսաւ , այլ Մարլիի դէմքը :

Մարլիի դէմքը : Անթափանցելի ստուերի մէջ չէր այն՝ բակին միւս առարկաններուն նման , այլ իր շուրջ աղօտ լոյս մը ունէր մութ մառանի մէջ գտնուող խեչափի մը նման : Բարկացած կամ կատաղի երեւոյթ չունէր , այլ Սքրուճի կը նայէր Մարլիի սովորական նայուածքով , ուրուական ակնոցը ուրուական իր ձակտին վրայ վեր առած : Մազերն հետաքրքրական կերպով կը շարժէին՝ կարծես շունչով կամ տաք օդով , և աչքերը , թէեւ լայնօրէն բաց , կատարելապէս անշարժ էին : Այդ և անոր կապար զսյնը սարսափելի կը դարձնէին զայն : Բայց սարսափերիութիւնը կարծես դէմքին հակառակ և դէմքէն բոլորսվին անկախ էր , ոչ թէ մէկ մասն անոր արտայայտութեան :

Երբ Սքրուճ ուշագրութեամբ դիտեց այս երեւոյթը , դարձեալ ուռնակ եղաւ այն :

Հսկէ թէ Սքրուճ չահաբեկեցաւ , կամ թէ անոր արիւնը չկրեց սարսափի այն տպաւորութիւնը որուանտեղեակ մնացած էր ինք մանկութենէն ի վեր , ձմարիա չըլլար : Սակայն իր ձեռքը դրաւ բանալիին վրայ զոր թողած էր , արիաբար դարձուց ու ներս մանելով վառեց իր մոմը :

Դուռը զոցելէն առաջ կանգ առաւ՝ վայրկեան մը երկմտելով : Զգուշութեամբ նայեցաւ նախ անոր ետին , կարծես ահաբեկելու յուսով Մարլիի դէպի ի նրբանցը երկարող ձամէն : Սակայն ոչինչ գտնուեցաւ դրան ետին բաց ի պտուտակներէն ու պտուտակալիներէն որոնցմով ուռնակն անոր վրայ հաստատուած էր : Ուստի արհամարհական ձայնարկութեամբ մը ուժգին փակեց գուոր :

Փակման ձայնն ամբողջ տունը գզրգեց որոտման նման : Վերի բոլոր սենեակները և վարի գինեվաճառի մառաններուն բոլոր տակառները կարծես առանձին առանձին արձագանցեցին գզրգիւնը : Սքրուճ արձագանցներէ վախցող մարդ չէր : Դրան նիգը դրաւ , նըրբանցին մէջ քալեց և կամաց կամաց սանդուխէն վեր ելաւ , մէկ կողմէ մոմն յարդարելով :

Կրնաք տարտամօրէն խօսիլ վեց ձիու լծուած կառք մը հին խոշոր սանդուխէ մը վեր քշելու վրայ : Հսկէ կ'ուզէմ թէ կրնայիք այդ սանդուխն ի վեր մեռելակառք մը հանել լայնքին ուզզութեամբ , նետը պատին և զուուր բազրիքներուն կողմ պահելով , և դիւրաւ հանել : Ասոր համար ընդարձակ տեղ կար և կ'աւելնար ալ : Այդ պատճառով թերեւս խորհեցաւ Սքրուճ թէ մութին մէջ մեռելակառք մը վեր կ'երթար իր առջւէն : Փողոցի օգային կազի վեցեակ մը լամբարներ

պիտի չկրնային լիովին մուտքը լուսաւորել։ Ուստի կրնաք հասկնալ թէ Սքրուճի մոմով ամբողջովին մութ կը մնար այն։

Սքրուճ վեր ելաւ, բնաւ կարեւորութիւն չընծայելով։ Մութն աժան է և Սքրուճ կը սիրէր։ Սակայն իր ծանր դուռը չգոցած՝ սենեակներն աչքէ անցուց նայելու համար թէ ամէն բան աղէ՛կէ։ Մարլիի դէմքը դեռ այնչափ կը յիշէր որ փափաքեցաւ այզպէս ընել։

Նստելու սենեակ, պառկելու սենեակ և աւելրդ բաներու սենեակ, ամէնը սովորականին պէս էին։ Ոչ ոք կար սեղանին տակ, ոչ ոք բազմոցին տակ։ Կրակարանին մէջ փոքրիկ կրակ մը։ Դղալ և պնակ պատրաստ։ Փոխինդի պղտիկ սանը (Սքրուճ սաստիկ պաղ առած էր,) վառարանին քով։ Ոչ ոք անկողնին տակ, ոչ ոք պահարանին մէջ, ոչ ոք գիշերանոցին մէջ, որ պատէն կախուած էր կասկած յարուցանող դիրքով։ Աւելրդ բաներու սենեակը սովորականին պէս—կրակարանի հին կափարիչ մը, հին ոտնամաններ, ձուկի երկու սակառ, լուացարանի մը եռոտանի և ակիշ մը։

Բոլորովին զոհ մնալով փակեց իր դուռը և կղզեց, ու կրկին կղզեց հակառակ իր սովորութեան։ Այսպէս, ամէն անակնկալի դէմ ապահովուած, իր փողկապն հանեց, գիշերանոցը, բապուճները և գիշերային գդակը հագաւ ու կրակին առջեւ նստաւ իր փոխինդն ուտել։

Շատ խեղճ կրակ էր արդարեւ, ոչինչ՝ այսպիսի ցուրտ գիշերուան մը համար։ Ստիպուեցաւ շատ մօտ նստիլ և խոկալ՝ ջերմութեան ամենաթեթեւ զգացում մը չկրած այդ բուռ մը կրակէն։ Վառարանն հին էր, չոլանտացի վաճառականէ մը շինուած շատ կանուխ, և ամբողջովին չոլանտական սիրուն աղբւաներով շրջանակուած, որոնք Սբ։ Քրոց դէմքեր ու դէպքեր կը ներ-

կայացնէին։ Զոր օրինակ, կայէններ և Սբէլներ, Փարաւոնի աղջիկներ, Սաբայի թագուհիներ, օգին մէջէն ամպերով իբր փետրալից անկողիններով իշնող հրեշտակային պատզամաւորներ, Սբրահմաններ, Պաղտասարներ, կարպամաններով գէպ ի ծով մեկնող առաքեալներ, որ կրնային Սքրուճի ուշադրութիւնը գրաւել։ Սակայն Մարլիի, եօթը տարի առաջ մեռած այդ մարդուն, գէմքը վաղեմի Մարգարէին գաւազանին նման եկաւ կլեց այդ ամէնը։ Եթէ այդ ողորկ աղիւսներուն իւրաքանչիւրը սկիզբէն անզիր ըլլար և կարենար Սքրուճի խորհուրդներուն անկապ բեկորներով պատկեր ձեւակերպել ու կրել իր վրայ, Մարլիի գլխուն մէկ պատկերը պիտի ձեւանար իւրաքանչիւրին վրայ։ «Պարապ բան» ըստ Սքրուճ և սկսաւ սենեակին մէջ քալել։

Քանի մը շրջանէ ետեւ նորէն նստաւ։ Երբ իր գլուխը ետ հրեց աթոռին մէջ, իր ակնարկն ինկաւ զանգակի մը, անզործածելի զանգակի մը, վրայ որ սենեակին մէջ կախուած էր և այժմ մոռցուած նպատակով մը հազորզակցութիւն ունէր չէնքին ամենավերի յարկին մէկ սենեակին հետ։ Մինչ կը գիտէր, մեծ զարմացումով և տարօրինակ ու անբացատրելի երկիւղով տեսաւ թէ այդ զանգակն սկսաւ շարժիլ։ Նախ այնքան մեղմով որ հազիւ թէ ձայն կը հանէր։ Բայց քիչ յետոյ շատ բարձր հնչեց, նմանապէս տան մէջ գանուող ամէն զանգակ։

Այս տեւեց թերեւս կէս վայրկեան կամ մէկ վայրկեան, բայց ժամ մը թուեցաւ։ Զանգակները մէկտեղ դագրեցան, ինչպէս մէկտեղ սկսած էին։ Անոնց յաջորդեց շառաչուն աղմուկ մը, վարը, շատ վարերը։ Կարծես մարդ մը ծանր շլթայ մը կը քաշէր գինեվաճառի մառանին տակառներուն վրայէն։ Սքրուճ այն ժամա-

նակ յիշեց թէ լսած էր որ ողիներ շղթայ կը քաշեն յաճախեալ տուներու մէջ :

Մառանին դուռը մէծ դղրդումով բացուեցաւ: Աղմուկն հետքեատէ բարձրացաւ վարի յարկերուն մէջ, ապա սանդուխներէն վեր գալով հասաւ ուղղակի Սքրուճի դուռը :

«Խաբէութիւն դարձեալ,» ըսաւ Սքրուճ: «Պիտի չհաւատամ:»

Սակայն իր գոյնը փոխուեցաւ, երբ աղմուկն, առանց դադրելու, ծանր զոնէն թափանցելով սենեակը մտաւ աչքերուն առջեւ: Երբ սենեակը մտաւ այն, մահամերձ բոյը վեր ցատկեց, կարծես աղաղակելով, «Կը ձանչնա՞մ, կը ձանչնա՞մ, Մարլիի Ռղին,» և նորէն իջաւ:

Նոյն դէմքը—ձիշտ նոյնը: Մարլի իր մազի հաստ ու երկար հիւռքով, սովորական բաճկոնակով, սեղմ տաշփատով ու կօշիկներով, վերջիններուն ծոպերը ծամին պէս ցցուն, և վերարկուին ծալրերով ու զիխուն մազերով: Շղթան զոր կը քաշէր՝ կոճկուած էր մէջքին վրայ: Երկայն էր և պոչի պէս անոր շուրջ փաթթուած: Շինուած էր (վասն զի Սքրուճ ուշադրութեամբ դիտեց) հնչուն զրամի արկղերէ, բանալիներէ, կղպանքներէ, մայր տոմարներէ, կալուածազրերէ և պողպատեայ ծանըր քսակներէ: Մարմինը թափանցիկ էր, այնպէս որ Սքրուճ զայն դիտելով և անոր բաճկոնակին մէջէն նայելով կրնար անոր վերարկուին ետեւի երկու կուծակները տեսնել:

Սքրուճ չատ անգամ լսած էր թէ Մարլի աղիք չունի, բայց բնաւ չէր հաւատացած մինչեւ հիմա:

Ոչ, հիմա իսկ չհաւատաց: Թէպէտ զննեց, դիտեց ուրուականը կատարելապէս և տեսաւ զայն իր առջեւ կեցած—թէպէտ զգաց անոր մահաբոյր աչքերուն սարսու:

ուալի ազգեցութիւնը և նկատեց գործուածքն իսկ անոր գլխուն ու ծնօտին շուրջ փաթթուած ծալ ծալ վարչամակին, զոր առաջ չէր դիտած — տակաւին չէր հաւատար և իր զգայարաններուն դէմ կը կոռւէր:

«Ի՞նչ կայ,» ըսաւ Սքրուճ սովորականին պէս կըծու և ցուրտ շեշտով: «Ինձմէ ի՞նչ կ'ուզես:»

«Եաս բան:» — Մարլիի ձայնն էր անկասկած:

«Դուք ո՞վ էք:»

«Հարցուր թէ ո՞վ էի:»

«Ո՞վ էի ուրեմն,» ըսաւ Սքրուճ, ձայնը բարձրացնելով: «Դուք բժաննդիր էք—իբրեւ ուրուական:» Պիտի ըսէր «վերին աստիճան,» բայց փոխեց վաւելչութեան համար:

«Ողջութեանս՝ ձեր ընկերն էի, ձէյքը Մարլի:»

«Կրնա՞ս—կրնա՞ս նստիլ,» հարցուց Սքրուճ, տարակոյսով նայելով անոր:

«Կրնամ:»

«Նստէ ուրեմն:»

Սքրուճ այս հարցումն ըրաւ, վասն զի չէր զիտեր թէ այսքան թափանցիկ ողի մը կրնա՞յ արգեօք աթոռի մը վրայ նստելու վիճակի մէջ զնել ինքզինք, և զգաց թէ, եթէ չյաջողի, դժուարին բացատրութեան մը անհրաժեշտ հարկ պիտի ծազի: Սակայն ոգին նստաւ կրակարանին գիմացի կողմը, բոլորովին վարժ էակի մը պէս և ըսաւ,

«Դուք ինձի չէք հաւատար:»

«Չեմ հաւատար,» պատասխանեց Սքրուճ:

«Իմ իրականութեանս ի՞նչ վկայ կ'ուզէք բաց ի ձեր զգայարաններուն վկայութենէն:»

«Չեմ զիտեր,» պատասխանեց Սքրուճ:

«Ինչու կը տարակուսիք ձեր զգայարաններուն վրայ:»

«Վասն զի,» ըսաւ Սքրուճ, «պղտիկ բան մը կ'ազդէ անոնց : Ստամոքսի թեթեւ տկարութիւն մը խարբեայ կ'ընէ զանոնք : Կրնաք դուք կտոր մը անմարս միս ըլլալ, պաղուց մը մանանեխ, փշուր մը պանիր, պատառ մը կիսեփ գետնախնձոր : Ի՞նչ ալ ըլլաք, ձեր վրայ աւելի թացան ունիք քան տապան (*) :»

Սքրուճ շատ սովորութիւն չունիք կատակելու, ոչ ալ տրամադրութիւն ունիք հիմա կատակելու : Բնաւ : ձշմարտութիւնը սա է թէ ջանաց ճարպիկութիւն ի գործ գնել իր իսկ ուշադրութիւնն այլուր դարձնելու և իր սարսափը նուաճելու համար, վասն զի ուրուականին ձայնը կը վրգովէր անոր ուկիներուն մինչև իսկ ծուծը :

Սքրուճ զգաց թէ պատ մը նստիլ ու լութեամբ այն սեւեռուն ու ապակեփայլ աչքերուն յառիլ պիտի լմացնէր իր գործը : Շատ ահաւոր ուրիշ բան մը ևս սա էր որ ուրուականը դժոխային ինքնայասուկ մթնոլորտ մը ունիք : Սքրուճ անձամբ չէր զգար զայն, բայց իր սովորութիւնն այդ էր, վասն զի թէեւ ուրուականը կատարելապէս անշարժ նստաւ, մարերը, քղանցներն ու ծովերը տակաւին կը շարժէին կարծես հնոցի մը տաք չոպիէն :

«Կը տեսնէք այս քչփորիկը,» հարցուց Սքրուճ, շուտով յարձակողական զիրք բոնելով նորէն վերոյիշեալ պատճառով, և փափաքելով գէթ երկվայրկեան մը իրմէ անդին դարձնել տեսուականին քարեղէն նայուած քը :

«Այս,» պատասխանեց Ողին :

«Անոր չէք նայիր,» ըսաւ Սքրուճ :

«Բայց կը տեսնեմ,» պատասխանեց Ողին :

«Եւաւ,» ըսաւ Սքրուճ : «Կը բաւէ որ կլեմ զայս, և ահա կեանքիս մնացեալ բոլոր օրերն ուրուականնե-

րու լեզոններէ պիտի հալածուիմ, ամէնն ալ իմ խելապատակէս ելած : Խարէութիւն, դարձեալ կ'ըսեմ, խարէութիւն :»

Յայնժամ ոգին ահոելի աղաղակ մը արձակեց և իր շղթան այնպիսի սարսուազզեցիկ ու սարսափելի աղմուկով մը շարժեց որ Սքրուճ իր աթոռին փակաւ ամրապէս, որպէս զի նուազելով վար չիյնայ : Բայց ո'քափ աւելի սարսափահար եղաւ ինք, երբ ուրուականն իր գլխուն պատասխ հանեց՝ իբր թէ չէնքին մէջ շատ տաք ըլլալուն համար, և ստորին ծնօտն անոր կուրծքին վրայ ինկաւ :

Սքրուճ ծունկերուն վրայ ինկաւ և ձեռքովն իր երեսը ծածկեց :

«Գթութիւն,» ըսաւ : «Ահարկու տեսիլ, ինչո՞ւ զիս անհանդիստ կ'ընես :»

«Ով աշխարհանէր մարդ,» պատասխանեց Ողին, «ինձի կը հաւատա՞ս թէ ոչ :»

«Կը հաւատամ,» ըսաւ Սքրուճ : «Պարտաւոր եմ հաւատալ : Սակայն ինչո՞ւ ողիներ կը շրջին երկրի վրայ և ինչո՞ւ ինձի կու գան :»

«Ամէն մարդէ կը պահանջուի որ,» պատասխանեց Ողին, «իր ոգին շրջագայի իր նմաններուն մէջ և մօտ ու հետո տեղեր ճամբորդէ, և եթէ չերթայ կենդանութեան ժամանակ, կը դատապարտուի երթալ մեռնելէն ետեւ : Կը դատապարտուի շրջիլ աշխարհի վրայ — վայ ինձի — և տեսնել ինչ որ չկրնար հիմա վայելիլ, բայց կրնար վայելիլ երկրի վրայ ու երջանկութեան վերածել :»

Դարձեալ տեսիլն աղաղակ մը արձակեց, շարժեց իր շղթան և ստուերային իր ձեռքերը դալարեց :

«Ծղթայակապ էք,» ըսաւ Սքրուճ դողալով : «Բայց թէ ի՞նչու շղթայակապ էք :»

(*) Բառախաղ Անգղ. կրէյփի եւ կրէյփ բառերով:

«Կը կրեմ այն շղթան զոր ես դարբնեցի իմ կենացանութեանս,» պատասխանեց Ոգին: «Ես շինեցի զայն օղակ և կանգուն կանգուն: Ես անցուցի մէջքս իմ ազատ կամքովս, և կրեցի զայն իմ ազատ կամքովս: Անոր ձեւը զարմանալի՞ է ձեզի:»

Սքրուճի դողը սասակացաւ:

«Կամ կ'ուղէ՞ք զիտնալ,» շարունակեց Ոգին, «ծանրութիւնն ու երկարութիւնը ամուր այն զալարին դոր դուք կը կրէք: Լման ասոր չափ ծանր ու երկար էր ծնունդի եօթը Խթում առաջ: Անկէ ի վեր աշխատած էք անոր վրայ: Մանր շղթայ է:»

Սքրուճ իր շուրջ նայեցաւ գետնին վրայ, յիսուն վաթուն գրկաչափ երկաթ պարանով մը ինքզինք շղապատուած դտնելու ակնկալութեամբ: Բայց բան մը չտեսաւ:

«Ճէյքըպ,» ըստ աղաչական շեշտով — «սիրելի Ճէյքըպ Մարլի, աւելի բան յայտնէ ինծի: Միիթարական խօսքեր խօսէ, Ճէյքըպ:»

«Չունիմ որ խօսիմ,» պատասխանեց Ոգին: «Միիթարութիւնն ուրիշ զաւառներէ կու դայ, իսկէնէ գէր Սքրուճ, և ուրիշ պաշտօնեաներու ձեռամբ կը տրուի ուրիշ տեսակ մարդոց: Ոչ ալ կրնամ ըսել քեզի ինչ որ կ'ուղեմ: Քիչ մը բան եւս արտօնուած եմ ըսել, աւելի՝ ոչ: Չեմ կրնար կենալ, չեմ կրնար մնալ, չեմ կրնար յամենալ ուեէ տեղ: Իմ ոգիս երբեք չէր շրջեր մեր գրասենեալէն անդին — միտ դիր խօսքիս — իմ ոգիս կենդանութեանս ժամանակ բնաւ չէր երթար մեր սեղանաւորի ծակին նեղ սահմաններէն անդին, և խոնչեցուցիչ ճամբորդութիւններ կան իմ առջևս:»

Սքրուճ, սովոր էր, ո՛ր ատեն որ մտածկոտ ըլլար, ձեռքերը տափատին գրպանները դնել: Հիմա այդ պէս ըլլար՝ Ոգին խօսքերուն վրայ մտածելով, բայց

առանց աչքերը վեր առնելու, կամ ծնրադրելէ դադրելու:

«Շատ դանդաղ շարժած ըլլալու ես, Ճէյքըպ,» ըստ Սքրուճ՝ գործի տեղեակ մարդու ոճով, թէեւ խոնարին ու յարգալից շեշտով:

«Դանդաղ,» կրկնեց Ոգին:

«Եօթը տարի է որ մեռած ես, և բոլոր ժամանակը կը ճամբորդե՞ս:»

«Բոլոր ժամանակը,» պատասխանեց Ոգին, «անդուլ, անդադար: Խղձի անընդհատ տանչանք:»

«Արագ կը ճամբորդե՞ս,» հարցուց Սքրուճ:

«Հովի թեւերով,» պատասխանեց Ոգին:

«Անագին քանակութեամբ տեղ շրջած պիտի ըլլաս եօթը տարուան մէջ,» ըստ Սքրուճ:

Ոգին, զայս լսելով, ուրիշ աղաղակ մը արձակեց և գիշերուան խոր լուսթեան մէջ այնքան սոսկալի ցունցով մը շարժնց իր շղթան որ Պահակն իրաւունք պիտի ունենար անոր դէմ դատ բանալ անհանգստութիւն և նեղութիւն տալուն համար:

«Ով գերի, կալանաւոր և կրկնաշղթայ կրող,» աղաղակեց տեսիլը, «չգիտնա՛լ թէ այս երկրի համար անմահ էակներու անդուլ աշխատանքը մինչեւ յաւիշեան պիտի տեւէ ամբողջովին բերելու համար այն պառողը զոր կրնայ բերել: Զգիտնա՛լ թէ իր փոքրիկ ոլորտին մէջ, ուր ալ ըլլայ այդ, սիրով գործող Քրիստոնեայ ուեէ անձ իր մահկանացու կեանքը շատ կարծ պիտի զտնէ իբր ընդարձակ միջոց օգտակարութեան: Զգիտնա՛լ թէ վշտի ոչ մէկ քանակութիւն կրնայ փոխարինել կեանքի մը չարաչար գործածուած պատեհութիւնները: Եւ սակայն այդպիսի էի ես, ոհ, այդպիսի էի ես:»

«Բայց դուք միշտ զործի մարդ էիք ճարպիկ, Ճէյ-

Քըպ, » կակազեց Սքրուճ, որ սկսաւ իր վրայ առնել այս դիտողութիւնը :

«Դուք, » աղազակեց Ոգին, ձեռքերը դարձեալ զաւարելով: «Մարդկութիւնն էր իմ զործու: Հանրային բարօրութիւնն էր իմ զործու: Սէր, զթութիւն, համբերութիւն ու բարեսիրութիւն էին իմ զործու: Իմ ասպարէզիս զործաննութիւնները լոկ կաթիլ մը ջուր էին իմ զործիս ընդարձակ ովկիանոսին մէջ:»

Ծըթան վեր վերցնելով հեռի բռնեց, որչափ կրնար իր թեւով, իբր պատճառը բոլոր իր ապարդիւն վշտին, և դարձեալ վար նետեց անեղ շառաչիւնով:

«Թաւալող տարւոյն այս եղանակին մէջ, » ըստ տեսիլը, «ամէնէն աւելի կը տառապիմ: Ինչո՞ւ ես իմ ընկերներուն բազմութիւններուն մէջ շրջեցայ աչքերս վար դարձուցած և բնաւ վեր չառի նայելու համար օրհնեալ այն Աստղին, որ մոգերուն առաջնորդեց զէպի խեղճ բնակարան մը: Զկայի՞ն աղքատ տուներ որոնց առաջնորդէր զիս անոր լոյսը:»

Սքրուճ շատ զարհուրեցաւ ուրուականին այս ոճով խօսուածքը լսելով և սկսաւ սաստիկ դողալ:

«Ինձի մտիկ ըրէ, » դոչեց Ոգին: «Իմ ժամանակս լրանալու վրայ է:»

«Մտիկ կ'ընեմ, » պատասխանեց Սքրուճ: «Բայց մի յանդիմաներ զիս: Ծաղկաւէտ ոճ մի զործածեր, ձէյքը, կ'աղաչեմ:»

«Բեղի չեմ ըսեր թէ ի'նչպէս եղաւ որ քեզի կ'երեւիմ այնպիսի կերպարանով մը զոր կրնաս տեսնել: Շատ, շատ օրեր նստած եմ քովդ անտեսանելի կերպով:»

Հաձելի զաղափար մը չէր այս: Սքրուճ դողաց և ձակտին քրտինքը սրբեց:

«Իմ տանջանքիս թեթեւ մէկ մասը չէ այս, » շարունակեց Ոգին: «Այս զիշեր եկած եմ հոս իմացնել

քեզի թէ դեռ առիթ ու յոյս մը ունիս ինձի բախտակից ըլլալու: Սովոր ու յոյս մը զոր ես կը հայթայթեմ, էպէնէզէր:»

«Դուք միշտ բարի բարեկամ էիք ինձի, » ըստ Սքրուճ: «Ճնորհակալ եմ:»

«Երեք ոգիներ պիտի այցելեն քեզ, » ըստ Ոգին՝ վերսկսելով:

Սքրուճի դէմքը վար ծուեցաւ գրեթէ նոյնչափ, որչափ ծուած էր Ոգին դէմքը:

«Այդ է առիթն ու յոյսը զոր յիշեցիր, ձէյքը, հարցուց դողով ձայնով:»

«Այս,»

«Ես — ես — պիտի չուզէի այդ բանը, » ըստ Սքրուճ:

«Առանց այդ այցելութիւններուն, » ըստ Ոգին, «չես կրնար յուսալ խոյս տալ այն ճամբէն ուր ես կը գտնուիմ: Առաջինն սպասէ վաղը, երբ զանդակը Մէկ հնչէ:»

«Չեմ կրնար ամէնը մէկէն ընդունիլ և լմացնել, ձէյքը, » թելադրեց Սքրուճ:

«Երկրորդն սպասէ յաջորդ զիշերը նոյն ժամուն: Երրորդն հետեւեալ զիշեր երբ Տասներկուքի վերջին հարուածը դազրի թրթռալէ: Մի յուսար այլեւս տեսնել զիս: Նայէ որ քու օգտիդ համար յիշես ինչ որ մեր միջնեւ տեղի ունեցաւ:»

Այս խօսքերն ըսելէ ետեւ տեսիլն իր փաթթոցն առաւ սեղանէն և առաջուան պէս իր զլուխը պատեց անով: Սքրուճ գիտցաւ զայս այն սուր ձայնէն զոր ակռաներն հանեցին, երբ ծնօտներն իրար միացան պատափին միջոցով: Ինք համարձակեցաւ վերստին իր աչքերը վերցնել, և ուզիզ գիրքով իր առջեւ ցցուած գտաւ գերբնական իր այցելուն շղթայակապ մէջքով ու թեւով:

Տեսիլը ետ ետ երթալով հեռացաւ և իր ամէն քայլին հետ պատուհանը քիչ քիչ բացուեցաւ, այնպէս որ երբ այցելուն հոն հասաւ, ամբողջովին բաց էր: Սքրուճի նշան ըրաւ որ մօտենայ, և ան հնազանդեցաւ: Երբ երկու քայլ մնաց իրենց միջեւ, Մարլիի Ոգին վեր առաւ իր ձեռքը՝ հասկցնելու համար որ այլեւս չմօտենայ: Սքրուճ կանգ առաւ:

Ոչ այնքան հնազանդելով որքան զարմանալով ու զարհուրելով, վասն զի, երբ այն ձեռքը բարձրացաւ, Սքրուճ շփոթ աղմուկներ լսեց օղին մէջ — կցկառւր ձայներ լացի և վշտի, կոծեր անբացատրելիօրէն տխուր ու ինքնապարսաւական: Տեսիլը, պահ մը մտիկ ընելէ ետեւ, միացաւ ողբալի կոծին և սահեցաւ գնաց տխուր ու խաւար զիշերին մէջ:

Սքրուճ ծայրայեղ հետաքրքրութեամբ գնաց պատուհանը և դուրս նայեցաւ:

Օքը լիցուն էր ուրուականներով որ հոս հոն կը թափառէին անդուլ աճապարանքով ու լացուկոծով: Անսոց իւրաքանչիւրը շղթայ կը կրէր Մարլիի Ողիին նման: Ոմանք (թերեւս յանցաւոր կառավարութիւններ) միասին շղթայուած էին: Իսկ ազատ ոչ ոք կար: Շատեր իրենց կենդանութեան ժամանակ անձամբ ծանօթ էին Սքրուճի: Ինք լիովին ծանօթ էր ձերմակ բաժկոնակ հազած և կոճղին կապուած ահազին երկաթ դրամարկղ մը կրող Ողիի մը, որ ողբաձայն կու լար չկընալուն համար օդնել երախայ մը ունեցող թշուառ կնոջ մը, զոր վարը կը տեսնէր զրան մը սեմին վրայ: Ամէնուն ալ թշուառութիւնը սա էր յայտնապէս թէ կ'աշխատէին ի բարին ծառայել մարդկային բաներու մէջ և ի սպառ կորուսած էին այդ կարողութիւնը:

Այդ էակները մառախուղի՞ վերածուեցան թէ մառախուղը պատնեց զանոնք, Սքրուճ չէր կրնար ըսել:

Բայց անոնք ու իրենց ուրուական ձայները մէկտեղ անհետացան և զիշերն այնպէս եղաւ ինչպէս էր, երբ ինք տուն եկաւ:

Սքրուճ փակեց պատուհանը և քննեց գուռը որմէ մտած էր Ողին: Կրկնապէս կղպուած էր այն, ինչպէս իր խակ ձեռքով կղպած էր, և նիգերը գրուած էին: Փորձեց «Խարէութիւն» ըսել, բայց կեցաւ առաջին վանկին վրայ: Եւ այն յուզման համար որու ենթարկուեցաւ, կամ օրուան յոզնութիւններուն համար, կամ այն նշմարին համար զոր Անտեսանելի Աշխարհին վրայ ստացաւ, կամ Ողիին տխուր խօսակցութեան և ժամուն ուշ ըլլալուն համար, հանգստեան պէտք ունենալով ուղղակի անկողին մտաւ առանց հանուելու և անմիջապէս քնացաւ:

ՏՈՒՆ Բ

ԵՐԵՎԻ ՌՊԻՆԵՐՈՒՆ Ա.Ռ.Ս.ԶԻՒՆԸ

Երբ արթնցաւ Սքրուճ, այնքան մութ էր որ անկողնէն դուրս նայելով հազիւ կրցաւ թափանցիկ պատուհանը զանազանել սենեակին անթափանց պատերէն։ Զանաց իր վայրաքիսի աչքերով թափանցել մութը, և ահա մօտակայ եկեղեցւոյ գաշնաւոր զանդակաշարը չորս քառորդ զարկաւ։ Ուստի մտիկ ըրաւ ժամն իմանալու համար։

Մեծ եղաւ իր զարմանքը, երբ ծանր զանգը վեցէն եօթը գնաց, եօթնէն ութ և կանոնաւորապէս մինչեւ տասներկու և ապա կեցաւ։ Տասներկու։ Երբ պառկեցաւ ինք, ժամը երկուքն անցած էր։ Սխալ էր ժամացոյցը։ Սառի կտորիկ մը մտած ըլլալու է գործիքին մէջ։ Տասներկու։

Դպաւ իր կրկնահարին զսպանակին, որպէս զի ուղղէ այս այլանդակ ժամացոյցը։ Արագաշարժ փոքրիկ զրապանակը տասներկու զարկաւ ու կեցաւ։

«Բայց կարելի՛ չէ» ըստ Սքրուճ, «որ ամբողջ ցերեկ մը և աւելի ալ մինչեւ ուրիշ գիշեր մը քնացած ըլլամ։ Կարելի՛ չէ որ բան մը պատահած ըլլայ արեւին, և այս կէսօրի տասներկուք է»։

Դպափարը վրդովիչ ըլլալով անկողնէն ելաւ ու պատուհանը գնաց խարխափելով։ Ստիպուեցաւ գիշերանցին թեզանիքով պափակին սրբել՝ բան մը տեսնել կարենալու համար, և շատ քիչ բան կրցաւ տեսնել։ Ինչ որ կրցաւ համկնալ՝ միայն սա էր թէ օդը տակաշին շատ մառախլապատ էր և վերջին աստիճան ցուրտ,

և թէ հոս հոն վազող և մեծ ժխոր հանող մարդոց աղմուկ չկար, ինչպէս անշուշտ պիտի ըլլար, եթէ գիշերը պայծառ ցերեկին յաղթած և աշխարհի տիրապետած չըլլար։ Այս շատ սփոփարար էր, վասն զի այս առաջին փոխանակազրով տեսօրէ երեք օր յետոյ զարեցէք Պ։ Էպէնէզէր Սքրուճի կամ հարամանին» ևն։ բոլորովին անարժէք փոխանակազիր մը պիտի ըլլար, եթէ հնար չըլլար օր հաշուել։

Սքրուճ դարձեալ պառկեցաւ, և խորհեցաւ ու խորհեցաւ, և կրկին ու կրկին խորհեցաւ, բայց չկըրցաւ բան մը հասկնալ։ Խորհելով, խորհելով աւելի շրջովթեցաւ և չխորհել ջանալով աւելի խորհեցաւ։ Մարմիկի Ողին չափազանց կը նեղէր զայն։ Ամէն անզամ որ հասուն քննութենէ ետեւ որոշում տար թէ ամէն ինչ երազ էր, անոր միտքը թող տրուած զօրաւոր զսպանակի մը պէս՝ ետ դէպ իր առաջին դիրքը կը զառնարդարձեալ ու նոյն խնդիրը կը ներկայացնէր լուծելու համար։ «Երա՞զ էր թէ ոչ»։

Սքրուճ այս վիճակին մէջ միաց մինչև զանգակաշարը երեք քառորդ եւս զարկաւ, և ինք յանկարծ յիշեց թէ Ողին ըստած էր թէ այցելութիւն պիտի ընդունի երբ զանգակը Մէկ զարնէ։ Որոշեց արթուն պառկիլ մինչև սփդ ժամն անցնի։ Եւ նկատելով թէ քնանալ նոյնչափանկարելի էր որչափ երկինք երթալ, թերեւս այս ամէնէն իմաստուն որոշումն էր զոր հնար էր տալ։

Քառորդն այնչափ երկար եղաւ որ Սքրուճ աւելի քան մէկ անզամ համոզուեցաւ թէ անգիտակցարբուրափած և ժամն անցուցած է։ Վերջապէս հնչեց այն անոր ուշագլու ականջին։

«Տի՛նկ, տա՞նկ»։

«Բառորդ անցած» ըստ Սքրուճ, հաշուելով։
«Տի՛նկ, տա՞նկ»։

«Կէ՞ս»՝ ըսաւ Սքրուճ։
 «Տի՞նկ, տա՞նկ»։
 «Քառորդ մնաց»՝ ըսաւ Սքրուճ։
 «Տի՞նկ, տա՞նկ»։
 «Բուն ժամը»՝ ըսաւ Սքրուճ յաղթանակաւ, «և
 ուրիշ ոչի՞նչ»։

Ինք կը խօսէր ժամահար զանգակին հնչելէն ա-
 ռաջ, և ահա խոր, խուլ և երկար ու տիսուր հնչումով
 Մէկ հնչեց այն։ Անմիջապէս լոյս մը շողաց սենեակին
 մէջ և մարդուն անկողնին վարագոյրները քաշուեցան։

Մարդուն անկողնին վարագոյրները մէկ կողմ քաշ-
 ուեցան, կ'ըսեմ, ձեռքով մը։ Ոչ թէ ոտքերուն կողմի
 վարագոյրները, կամ կրնակի կողմի վարագոյրները,
 այլ անոնք որոնց ուղղուած էր անոր երեսը։ Անկող-
 նին վարագոյրները մէկ կողմ քաշուեցան, և Սքրուճ
 ընդուռ ելելով և կէս պառկած, կէս նստած դիրք մը
 առնելով դէմ առ դէմ գտաւ ինքինք անդրերկրային
 այցելուի մը հետ, որ կը քաշէր զանոնք — այս, այն-
 չափ մօտ անոր որչափ եռ ձեղի մօտ եմ հիմա, և եռ
 հոգիով ձիչտ ձեր քով եմ։

Օտարոտի դէմք մը — տղու նման, և սակայն ոչ
 այնչափ տղու նման որչափ ծերի, գերբնական միջնոր-
 դի մը ձեռամբ դիտուած, որ տեսութիւններ փախած
 և տղու փոքր համեմատութիւններ ստացած մարդու մը
 երեւոյթ կու տար անոր։ Մաղերը որ անոր զգին վրայ
 և կոնակն ի վար կը կախուէին՝ ձերմակ էին կարծես
 ծերութեան պատճառով։ Եւ սակայն դէմքին վրայ
 խորշոմ չկար և մորթն ամենափափուկ էր։ Թեւերը
 չափ երկար և զօրել էին, ձեռքերը նմանապէս, կար-
 ծես արտասովոր ուժով։ Սրունքներն ու ոտքերը,
 փափօրէն բարեձե, մերկ էին վերին անդամներուն
 նման։ Հազար էր ձիւնափայլ պարեգուած մը և մէջքը

կապած էր լուսաւոր գօտի մը, որու փայլը գեղեցի
 էր։ Ձեռքն ունէր թարմ կանանչ հողինի ձիւղ մը, իսկ
 զգեստը, զլխովին հակառակ ձմեռնային այս խորհըր-
 գանիշին, ամառնային ծաղիկներով զարդարուած էր։
 Սակայն ամէնէն տարօրինակ բանը ուա էր որ զլխուն
 գագաթէն լոյսի պայծառ ցոլք մը կը բխէր որոշ, որով
 ամէնը տեսանելի կ'ըլլար և որու պատճառով ան-
 տարակոյս իր տխուր վայրկեաններուն մէջ իբր զլխարկ
 կը գործածէր մեծ շիջուցիչ մը, զոր հիմա թեւին տակ
 առած էր։

Այս իսկ, սակայն, երբ Սքրուճ աւելի ուշադրու-
 թեամբ զննեց, անոր ամէնէն տարօրինակ յատկու-
 թիւնը յիշ։ Վասն զի ձիշտ ինչպէս անոր գօտին մերթ
 մէկ մասով, մերթ ուրիշ մասով, կը շողար ու կը փալ-
 ֆլար և այն մասը որ լոյս էր հիմա՝ մութ կ'ըլլար ու-
 րիշ անդամ, նոյնպէս տեսլականն ալ փոփոխութիւն
 կը կրէր որոշութեան մասին, մերթ միաթեւ երեւելով,
 մերթ միասրուն, մերթ քսանոտանեան, մերթ անդուխ
 երկոտանի, մերթ անմարմին զլուխ, և այս լուծուող
 մասերուն ուրուագիծը չէր տեսնուեր թանձր խաւա-
 րին մէջ ուր կը հալէին անոնք։ Եւ զարմանալին այն
 է որ կը դառնար ձիշտ ինք կ'ըլլար դարձեալ — որոշ
 ու յստակ։

«Դուք այն Ոզին էք, տէր, որու զալուստը նա-
 խաձայնուեցաւ ինծի,» հարցուց Սքրուճ։

«Այն, այն եմ։»

Զայնը մեղմ և անոյշ էր — եղականօրէն ցած, որ-
 պէս թէ այնքան մօտ ըլլալուն հակառակ շատ հեռու
 ըլլար։

«Ո՞վ և ի՞նչ էք զուք,» հարցուց Սքրուճ։

«Ես Սնցեալ Ծնունդի Ոզին եմ։»

«Վաղո՞ւց անցած,» հարցուց Սքրուճ, անոր թը-
 զուկ հասակը զիտելով։

«Ոչ, ձեր անցեալ Ծնունդին :»

Թերեւս Սքրուճ չէր կրնար ըսել, եթէ կարենար մէկը անոր հարցնել, թէ ինչո՞ւ կը փափաքի որ Ոգին Կիվարկ գնէ : Բայց կը փափաքէր զլխարկաւոր տեսնել դայն, ուստի ինչը որ ան ծածկէ իր գլուխը :

«Ի՞նչ» գոչեց Ոգին, «այդչափ շուտ կ'ուզես մարել աշխարհային ձեռքերով այն լոյսը զոր կու տամ ես: Միթէ չը բաւեր որ զուն անոնցմէ ես որոնց կիրքերը կազմեցին այս զլխարկը և կ'ստիպեն զիս տարիներով, տարիներով ձակտիս վրայ կրել զայն :»

Սքրուճ խոնարհութեամբ յայտարարեց թէ բնաւ մտադրութիւն չունի զայն վշտացնելու, կամ թէ բնաւ չփիտեր թէ իր կեանքին ուեէ մէկ շրջանին մէջ կամաւ զլխարկ գնել տուած է Ոգիին: Ապա համարձակեցաւ հարցնել թէ ի՞նչ գործի համար եկած է :

«Քու բարօրութեանդ համար,» պատասխանեց Ոգին:

Սքրուճ չորհակալութիւն յայտնեց, բայց չկրցաւ չմտածել թէ անընդհատ քոնի գիշեր մը այդ նպատակին աւելի պիտի ծառայէր: Կ'երեւի թէ Ոգին լսեց անոր մտածումը, փան զի ըստաւ անմիջապէս.

«Քու փրկութեանդ համար, ուրեմն: Զգուշացիր :»

Միեւնոյն ժամանակ Ոգին երկարեց իր զօրեղ ձեռքը և մեղմով բռնեց անոր թեւէն:

«Ել, և ինծի հետ քալէ :»

Սքրուճի համար զուր ջանք պիտի ըլլար առարկել թէ օդը ցուրտ է և ժամն անյարմար՝ հետի ճամբորդութիւններու, թէ անկողինը տաք է և չերմաչափը սոսուցման կէտէն շատ վար, թէ ինք շատ թեթև հագուստ կը կրէ՝ բապուճ, զիշերանոց և զգակ միայն հագած ըլլարով, և թէ արդէն իսկ պալասութենէ կը նեղուի: Ոգիին ձեռքը, թէն կնոջ մը ձեռքին չափ

փափուկ, անդիմագրելի էր: Ելաւ Սքրուճ, բայց տեսնելով թէ Ոգին գէպի պատուհան կ'ուղղուի, աղաւելով կոճկեց իր գէշերանոցը և ըստաւ,

«Ես մահկանացու եմ և անկումի ենթակայ :»

«Միայն թող որ ձեռքս գնեմ հոս,» ըստաւ Ոգին, գնելով զայն անոր սրտին վրայ, «և պիտի պահպանուիս այս և աւելի մեծ բաներու մէջ :»

Այս խօսքերուն հետ անցան պատին մէջէն և կանգառին բաց դաշտի ձամբու մը վրայ, որու երկու կողմը արտեր կային: Քաղաքն ամբողջովին աներեւոյթ եղած էր: Անոր ոչ մէկ հետքը կը տեսնուէր: Անհետ եղած էին նաև խաւարն ու մառախուզը, վասն զի ձմրան պարզ ցուրտ օր էր և գետինը ծիւնով ծածկուած :

«Ասառուած իմ,» աղաղակեց Սքրուճ՝ երկու ձեռքերը միացնելով, երբ իր շուրջ կը նայէր: «Ես այս տեղ մեծցայ: Հոս անցուցի իմ աղայութիւնս :»

Ոգին քաղցրութեամբ նայեցաւ անոր: Իր մեղմ հպումը, թէն թեթև ու վայրկենական, տակաւին զգալի էր անոր: Սքրուճ հազարաւոր բոյրեր առաւ օդին մէջ ծփուն, որոնց իւրաքանչիւրը կապակցեալ էր վաղուց մոռցուած հազարաւոր խորհուրդներու, յոյսերու, ուրախութիւններու և հոգերու հետ:

«Ճրթունքը կը դողայ,» ըստաւ Ոգին: «Եւ ի՞նչ է այն որ երեսիդ վրայ կ'երեւիք:»

Սքրուճ մրմիջեց ձայնի անսովոր գեղեւումով թէ բշտիկ է, և խոնդրեց տանիլ զինք ո՛ւր որ կ'ուղէ:

«Ճամբան կը յիշէ՞ք» հարցուց Ոգին:

«Կը յիշե՞մ,» գոչեց Սքրուճ եռանդագին: «Աչքերս կապուած կրնամ երթաւ:»

«Զարմանալի է որ մոռցար այնքան տարիներ,» պատասխանեց Ոգին: «Երթանք:»

«Բալեցին անոնք — Սքրուճ կը ձանչնար ամէն դուռ,

սիւն և ծառ մինչեւ երեւցաւ հեռուէն փոքրիկ զիւղարաղաք մը իր կամուրջով, եկեղեցիով ու ոլորապայտ գետով: Յետոյ երեւցան քանի մը թաւամաղ մտրուկներ որ իրենց կողմը կու զային արագ: Անոնց վրայ հեծած տղայք կը պոռային ուրիշ տղայոց որ շինական սայլակներու և կառքերու մէջ էին: Ամէնն ալ շատ ուրախ էին և իրարու կը պոռային, այնպէս որ լայն արաերը կը թնդային անոնց երգերէն և ցուրտ օդը կարծես կը ծիծաղէր:

«Ասոնք անցեալ բաներու ստուերներ են լոկ,» ըստ Ոգին: «չեն զգար մեր ներկայութիւնը:»

Ուրախ զուարթ ձամբորդները կը մօտենային: Եւ, մինչ կը մօտենային, Սքրուճ կը ձանչնար զանոնք և անոնց անունը կու տար: Ինչո՞ւ անսահմանորին ուրախացաւ զանոնք տեսնելով: Ինչո՞ւ անոր պաղ աչքը կը չողար և սիրտը կը տրոփէր մինչ կ'անցնէին անոնք: Ինչո՞ւ կը զուարթանար, երբ կը լսէր թէ զիրար կը չնորհաւորէին Ուրախ Ծնունդ ըսելով, մինչ քառուղիներու և կողմնական ուղիներու զլուխը կը բաժնուէին իրենց սեփական տուները երթալու համար: Ուրախ Ծնունդն ի՞նչ կարեւորութիւն ունէր Սքրուճի համար: Կորսուի՛ ուրախ Ծնունդը: Ի՞նչ բարիք ըրած էր այն Սքրուճի:

«Դպրոցը բոլորովին ամայի չէ: Առանձին տղայ մը մնացած է հոն, բարեկամներէն լքուած,» ըստ Ոգին:

Սքրուճ ըստ թէ կը ձանչնայ զայն, և հեկեկաց:

Գլխաւոր ձամբէն զատուեցան դէպ ի լաւ յիշուով փողոց մը և չուտով հասան աղիւսակերու շնչնք մը մութ կարմիր գոյնով: Ունէր իր մէջ զանգակ մը և տանիքին զագաթն ալ կողմացոյց մը: Խոշոր շնչնք էր, բայց զըժքախտութիւններու ենթարկուած, վասն զի քիչ կը դորժածուէին անոր ընդարձակ սենեակները: Խոնաւ ու

մամապատ էին անոնց պատերը, կոտրտած՝ իրենց պատուհանները և փտած ու փլած իրենց գոները: Հաւազգիներ, կարկաչելով կը պտըտէին ախոռներուն մէջ, և կառատուններուն մէջ խոտեր բուսած էին: Ներքին կողմն ալ չէր պահեր իր նախկին փայլը: Վասն զի երբ տիտուր սրահը մտան և սենեակներու բաց դրոներէն ներս ակնարկ մը նետեցին, տեսան թէ պաղ և ընդարձակ են և աղքատիկ կարասիով: Հողի բոյր կար օդին մէջ, ցուրտ մերկութիւն՝ շնչնքին մէջ, որ կերպով մը կը զուգորդուէր ծրագի լուսով շատ կանուխ ելլելու հետ, բայց ոչ շատ ուտելիքի հետ:

Ոգին ու Սքրուճ գացին: Գացին սրահէն դէպ ի գուռ մը տան ետեւի կողմը: Իրենց առջև կը բացուէր այն ու կը պարզէր երկայն, մերկ ու տիտուր սենեակ մը, զոր աւելի մերկ կ'երեւցնէին եղեւնափայտէ պարզ նատարաններուն և գրասեղաններուն շարքերը: Ասոնցմէ միոյն վրայ առանձին տղայ մը նստած կը կարգար ակար կրակին քով: Սքրուճ ալ նստաւ նստարանի մը վրայ և սկսաւ լալ՝ նոյնութեամբ տեսնելով անցեալ իր մոռցուած աղքատիկ վիճակը:

Շնչնքին մէջ չկար թաքրուն արձագանգ մը, պատերուն, տախտակամածներուն ու ծեղունին մէջ չկար մուկերու ձայն կամ չզրշիւն մը, ետեւի մութ գաւիթին մէջ չկար ջորգանի կիսահալ ջուրէն թափող կաթիլ մը, չկար յուսահատ կազամախիմ մը անտերեւ ոստերուն մէջն լսուող հեծիւն մը, զատարկ մթերանոցի դրան մը երերման անհաճոյ ձայն մը, ոչ, չկար կրակի ձարձատին մը որ Սքրուճի սրահն չազդէր խորին կերպով և չյորդեցնէր անոր արցունքներուն ուղիսը:

Ոգին անոր թեւին դպաւ եւ ցուցուց անոր պատանեկան իր կերպարանը, երբ ուշի ուշով ընթերցման կը պարապէր: Ցանկարծ օտարոտի հագուստով և զար-

մանալիօրէն իրական ու որոշ մարդ մը երեւցաւ պատուհանին դրսի կողմը, մէջքէն տապար մը կախած և փայտով բեռնաւորուած իշու մը երասանակէն բունած :

«Ի՞ն, Սլի Պապան է,» գոչեց Սքրուճ խանդավառութեամբ : «Վաղեմի բարի, պարկեշտ Սլի Պապա՞ն : Այս, այս, կը ճանչնամ զայն : Ծնունդի մը օր, երբ այդ միայնակ տղան առանձին կը մնար հոս, ճիշտ այդպէս եկաւ ինք առաջին անդամ : Խեղճ տղայ : Եւ վաւլէնթին ու անոր վայրի եղբայրն Օրսըն կ'անցնին ահա,» ըստ Սքրուճ : «Եւ ի՞նչ է անունն անոր որ քնայած վիճակի մէջ Դամասկոսի գրան առջեւ գրուեցաւ անդրավարտիքով : Զե՞ս տեսներ զայն : Հապա Առութանին փեսա՞ն, որ Ողիներէն զլիսիվայր գարձուեցաւ : Ահաւասիկ զլիսիվայր կեցած : Լաւ եղաւ : Ուրախ եմ : Ի՞նչ պէտք ունէր Խշանուհին հետ ամուսնանալու :»

Սքրուճի գործի ընկերները պիտի զարմանային արդարեւ, եթէ լսէին զինք, երբ իր բնութեան ամբողջ եռանդով այսպիսի նիւթերու վրայ կը խօսէր ծիծաղի և լացի միջեւ տատանող յոյժ արտասովոր ձայնով, և տեսնէին անոր խանդավառուած ու գրգոռուած դէմքը :

«Ահա թութակը,» գոչեց Սքրուճ, «կանանչ մարմնով և գեղին պոչով, եղերդակի պէս բանով մը որ զիմուն զագաթին վրայ կը բարձրանայ : Խեղճ Ռոպին Քրիւզ, կոչեց այն զինք, երբ կղզիին շուրջ զառնալէ ետեւ նորէն տուն եկաւ : Խեղճ Ռոպին Քրիւզ, ո՞ւրէիր, Ռոպին Քրիւզ : Մարդը կարծեց թէ կ'երազէր, բայց ոչ : Թութակն էր : Ահա Ուրբաթ կ'անցնի, ի՞նչ արագ կը վաղէ գէպ իր խորշը : Օ՞ն, ինծի նայէ, ինծի :»

Ապա արագ փոխանցումով մը, որ բոլորովին օտարէր իր բնութեան, «Խեղճ տղայ,» ըստ՝ իր նախկին վիճակին վրայ գթալով ու գարձեալ լացաւ :

«Երանի թէ,» մրմինցեց Սքրուճ ձեռքը գրպանը

գնելով և չորս կողմը նայելով՝ աչքերը սրբելէ ետև թեւնոցով — «բայց շատ ուշ է հիմա :»

«Ի՞նչ կայ,» հարցուց Ողին :

«Ոչինչ,» ըստ Սքրուճ : «Ոչինչ : Երէկ գիշեր տղայ մը ծնունդի երգ երգեց գրանս առջեւ : Երանի թէ բան մը առած ըլլայի :»

Ողին ժպտեցաւ և ձեռքը շարժեց՝ ըսելով, «Ուրիշ ծնունդ մը նայինք :»

Սքրուճի նախկին անձը մեծցաւ այս խօսքերուն վրայ և սենեակը քիչ մը մթնեց ու ալտուեցաւ : Պատերու երեսները կծկուեցան, պատուհանները ձեղքը բըրտուեցան, ծեփի կտորուանք թափեցան ձեղունէն և մերկ տախտակներ երեւեցան անոնց տեղ : Թէ ի՞նչպէս տեղի ունեցաւ այս ամէնը, Սքրուճ ալ չկիտցաւ ձեզի պէս : Ան գիտէր միայն թէ այսպէս եղաւ, ամէն բան այսպէս պատահեցաւ, եւ թէահա գարձեալ մինակ մնաց երբ բոլոր միւս տղայք տուն դացին ուրախանալ ծնունդի առիթով :

Հիմա չէր կարգար ինք, այլ վեր վար կը պարտէր յուսահատօրէն : Ողին նայեցաւ և զլխու տխուր երերումով անձկալից ակնարկ մը նեսեց գրան կողմը :

Բացուեցաւ այն, և ահա ներս խոյացաւ մանչէն աւելի փոքր աղջիկ մը, որ Սքրուճի փաթթուելով և ստէպ ստէպ զայն համբուրելով խօսեցաւ անոր, «Սիւրելի, սիրելի եղբայր,» ըսելով :

«Եկայ քեզ տուն տանիլ, սիրելի եղբայր,» կ'ըսէր աղջիկը, փոքրիկ իր ձեռքերով ծափելով և խնդալու համար վար ծուելով : «Տո՞ւն տանիլ, տուն, տո՞ւն :»

«Տո՞ւն, փոքրիկ թէն,» պատասխանեց մանչը :

«Այս,» ըստ աղջիկը ցնձագին : «Տո՞ւն, տուն : Հիմա և յաւիտեան : Հայրը սովորականէն այնքան աւելի քաղցր է որ տունը երկինքի պէս է : Գիշեր մը երբ

պիտի պառկէի , այնքան քաղցրութեամբ խօսեցաւ ինծի որ չվախցայ անգամ մը եւս հարցնել թէ կը թողո՞ւ որ տուն զաս դուն : Եւ ըստ , Այո , պէտք է որ տուն զաս : Եւ կառքով մը զրկեց զիս որ քեզ տանիմ : Եւ դուն մա՞րդ պիտի ըլլաս ,» ըստ աղջիկը՝ աչքերը լայն բանալով , «և այլեւս պիտի չգաս հոս : Բայց նախ մենք մէկտեղ պիտի ըլլանք բոլոր Ծնունդին և ամենապատուական ուրախութիւն վայելենք :»

«Լման կին եղած ես , փաքրիկ մէն ,» զոչեց մանչը : Աղջիկը ծափեց ու խնդաց , և ջանաց անոր զլիսուն դպչիւ , բայց շատ փոքր ըլլալով՝ նորէն խնդաց ու ոտքի մատներուն վրայ կայնեցաւ զայն գրկելու համար : Ապա սկսաւ մանկական իր հուանով դէպ ի դուռը քաշել զայն , և մանչն յօժարակամ ընկերացաւ :

Նրբանցքին մէջ սոսկալի ձայն մը զոչեց . «Վար բերէք աշակերտ Սքրուճի սնտուկը ,» և ահա հօն երեւցաւ բուն իսկ գպրոցին կատաղի ուսուցիչը , որ այս անգամ բարեհածեցու Սքրուճի նայիլ և ձեռքը թօթվելով մտքի ահաւոր վիճակի մը մէջ ձեց զայն : Ապա տարատ զայն ու անոր քոյրը ամենացուրս սենեակ մը , իրական հին հոր մը , ուր պատերուն վրայ հաստատուած քարտէները և պատուհաններու մէջ դրուած երկրագունդն ու երկնագունդը ցուրտէն սառի պէս կը փայլէին : Հող հանեց չի մը դինի հազուագիւտօրէն թիթե , կաոր մը քէյք հազուագիւտօրէն ծանր , և մեծարեց տղաքն այդ համեղ ուտելիքով ու ըմպելիով , միեւնոյն ժամանակ վտիտ ծառայ մը զրկելով բաժակ մը ըմպելի տալ սուրհանգակ մանչուն , որ պատասխանաց թէ չնորհակալ է պարոնէն , և թէ սակայն , եթէ առաջուան խմած տեսակէն է , չուզեր : Աշակերտ Սքրուճի սնտուկն այս պահուն արդէն կառքին վրայ կապուած էր : Տղայք սիրով հրաժեշտ առին ուսուցչէն

և կառքը մտնելով քշեցին ուրախութեամբ պարտէզն ի վար , արագ թաւալով անիւները մշտադալարներու մութ տերեւներուն ձիւնն ու եղեամբ ցայտեցնելով փրփուրի կամ ջուրի պէս :

«Միշտ փափուկ էակ , զոր փուք մը կրնար թօչնեցնել ,» ըստ Ոգին : «Սակայն սրտով ազնիւ :»

«Այո , այնպէս էլ ,» զոչեց Սքրուճ , «իրաւունք ունիք : Զեմ ուրանար , Ոգի : Քաւ լիցի :»

«Կին էր , երբ մեռաւ ,» ըստ Ոգին , «և , ինչպէս կը կարծեմ , զաւակ ունէր :»

«Մէկ զաւակ ,» պատասխանեց Սքրուճ :

«Ճիշտ ,» ըստ Ոգին : «Զեր քեռորդին(*) :»

Սքրուճ վրդովեցաւ և տուաւ կարծառոտ պատասխան մը . «Այո :»

Թէեւ ճիշտ այդ վայրկեանին մեկնած էին դպրոցէն , կը գտնուէին հիմա քաղաքի մը մեծ հրապարակին մէջ , ուր ստուերային անցորդներ կ'անցնէին կը դառնային , ուր ստուերային սայլեր ու կառքեր կը ճգնէին ճամբայ բանալ և ամէն կողմ իրական աղմուկ ու թոնուքոն կը տիրէր : Խանութներուն երեւոյթէն ու զարդերէն յայտնի էր թէ հոս ալ Ծնունդի ժամանակ էր : Բայց իրկուն էր և փողոցները լուսաւորուած էին :

Ոգին կանգ տառաւ վաճառատան մը դրան առջեւ ու հարցուց Սքրուճի թէ կը ճանչնա՛յ զայն :

«Ճանչնա՛լ ,» ըստ Սքրուճ : «Միթէ ես հոս աշկերտ չէի՞ :»

Ներս մտան : Սքրուճ , կեղծամով մարդ մը տեսնելով այնչափ բարձր գրասեղանի մը ետին նստած որ եթէ երկու մատնաչափ աւելի բարձր ըլլար ինք՝ գլու-

(*) Դժբախտաբար ասկէ առաջ սխալմամբ եղբօրորդի կոչուցաւ այս:

Խը ձեզունին պիտի զարնուէր, զոչեց մեծ յուզմամբ.
«Պ. Ֆէղիուիկ, Պ. Ֆէղիուիկ, զարձեալ ողջ»:

Մարդը գրիչը վար զնելով ժամացոյցին նայեցաւ:
Եօթն էր: Շփեց իր ձեռքերը, շփեց իր լայն բաձ-
կոնակը, խնդաց սրտազին՝ ամբողջ մարմինը երեցը-
նելով, և գոհունակ, երջանիկ, ճոխ ու զուարթ ձայնով
գոչեց.

«Էյ, օ՞ն, էպէնէղէր, Տիք»:

Սքրուճ, որ հիմա մեծցած, մարդ եղած էր, իր
նախկին ձեւով ու կերպարանով ներս մտաւ աշխուժիւ,
ընկերակցութեամբ իր աշակերտակցին:

«Տիք Ուիլքինս է անկասկած», ըստ Սքրուճ Ու-
գիին: «Այս, ինքն է: Շատ կը սիրէր զիս: Խեղճ Տիք,
Աւաշդ»:

«Օ՞ն, տղաք», ըստ Ֆէղիուիկ: «Ա՛լ պէտք չէ
զործել այս իրիկուն: Ծնունդի Խթում է, Տիք: Ծնունդ,
էպէնէղէր: Վայրկենապէս գոցուին փեղկերը», զոչեց
Ֆէղիուիկ, ափը ափին զարնելով:

Ի՞նչպէս զործեցին այն երկու աշկերտները, չէք
կրնար հաւատալ: Փողոցը խոյացան փեղկերով — մէկ,
երկու, երեք — տեղաւորեցին զանոնք — չորս, հինգ,
վեց — հաստատեցին ու ամրացուցին — եօթը, ութ
ինը — մրցակից ձիերու պէս հեւալով վերապարձան
մինչեւ դուք կարենայիք տասներկու ըսել:

Ֆէղիուիկ, հիանալի գիւրաշարժութեամբ իջնելով
իր բարձր գրասեղանէն, «Օ՞ն, տղաք», ըստ, «Քիչ մը
ժողվենք սա բաները և ընդարձակ տեղ բանանք: Օ՞ն,
Տիք, օ՞ն, էպէնէղէր»:

Ժողվել: Զկար բան մը զոր չուզէին կամ չկրնային
ժողվել, մինչ Ֆէղիուիկ կը հսկէր: Գործը վայրկենա-
պէս կատարուեցաւ: Շարժական ամէն բան վերցուե-
ցաւ իբր թէ այլեւս բնաւ չգործածուելու համար: Տախ-

տակամածն աւլուեցաւ ու ջրուեցաւ, ճրագներն յար-
դարուեցան, վառելանիւթ դիզուեցաւ կրակին վրայ, և
վաճառատունն այնպէս կոկիկ, տաքուկ, չոր ու պայծառ
պարասրան մը դարձաւ, ինչպէս պիտի ուղէիք տեսնել
ձմեռ զիշեր մը:

Եւ ահա ներս մտաւ ջութակահար մը նուազի տես-
րակով: Դիմեց ուղզակի բարձր գրասեղանը և նուա-
զալայր ընելով զայն սկսաւ ջութակին թելերը ներ-
գաշնակել՝ ստամքսացաւով տառապող յիսուն հոգիի
ձիչեր կարծես հանելով: Ներս եկաւ Տիքին Ֆէղիուիկ,
մեծզի շօշափելի ժպիտ մը: Ներս եկան երեք Օր. Ֆէ-
զիուիկները, համակ ժպտուն ու սիրուն: Ներս եկան
դեռատի վեց հետեւորդները որոնց սիրտերը կը կոտ-
րէին անոնք: Ներս եկան հաստատութեան մէջ գործող
բոլոր երիտասարդներն ու երիտասարդուհիները: Ներս
եկաւ տան սպասուհին իր հացագործ հօրեղբօրորդուոյն
հետ: Ներս եկաւ խոհարարուհին իր եղբօր մտերիմ բա-
րեկամ կաթնավաճախին հետ: Ներս եկաւ դիմացի ման-
չը (որու համար կասկած կար թէ բաւական ուտելիք
չէր ստանար իր տէրոջմէն), ջանալով պահուիլ դրացի
աղջկան մը ետին, որու մասին սպացուցուած էր թէ
տիրուհին քաշած էր անոր ականջները: Ներս եկան այս
ամէնն իրարու ետեւէ: Ոմանք երկչոտ, ոմանք համար-
ձակ. ոմանք չնորհալի, ոմանք անչորհ կերպով. ո-
մանք հրելով, ոմանք քաշուելով: Ներս եկան ամէնն
ալ այս կերպով և այն կերպով: Ելան պարել ամէնն
ալ, քսան զոյզ մէկէն, ձեռք ձեռքի տալով, վար վեր
նախ սրահին երկու կողմէն, ապա մէջտեղէն, և յետոյ
շրջան ընելով սիրալիր խմբաւորման այլազան աստի-
ճաններով, առաջին հին զոյզը միշտ սփառ տեղ ելե-
լով, առաջին նոր զոյզը հան հասնելուն պէս վերստին
մեկնելով, մինչև բոլոր զոյզերը վերը մնացին ու վա-

րը ոչ մէկ զոյգ մնաց օգնական։ Երբ այս արդիւնքը ձեռք բերուեցաւ, ծերուկ Ֆէզիուիկ պարը դադրեցնելու համար ծափ զարնելով զոչեց, «Ապրիք,» և ջուժականարն իր տաք դէմքը կախեց աման մը սեւ ըմպելիի վրայ, որ մասնաւորապէս այդ նպատակով հայթայթուած էր։ Բայց երբ վերստին երեւցաւ, հանգիստն արհամարհէլով սկսաւ խսկոյն վերստին նուագել, թէեւ դեռ պարող չկար, իբր թէ միւս ջութականարն ուժասպառ վիճակի մէջ տուն տարուած ըլլար փեղկի մը վրայ պառկած, և ինք, բոլորովին նոր մարդ, որոշած ըլլար կա՛մ մեռնիլ, կա՛մ փախցնել զայն յաղթահարուած։

Ուրիշ պարեր ալ եղան, և գրաւախազեր և գարձեալ պարեր։ Քէյք կար, շաքարօղի կար, խորովածոյ և խաշածոյ պաղ մսի կոյտեր, մսախառն և մրգախառն համադամներ և առատ գարեջուր։ Բայց իրիկուան ամենամեծ դէպքը տեղի ունեցաւ խորովածոյէն և խաշածոյէն ետքը, երբ ջութականարը (խորամանկ շո՛ւն), մարդ մը որ իր գործն աւելի լաւ գիտէր քան զոր դուն կամ ես կրնայինք անոր բացատրել, սկսաւ «Սըր Շոնըր աը Քըվըրլի» եղանակը զարնել։ Անմիջապէս սոքի ելաւ ծերունին Ֆէզիուիկ՝ պարելու համար Տիկին Ֆէզիուիկի հետ։ Առաջին ալ զոյգ եղան, գժուարին դեր առնելով։ Երեք, չորս և քսան զոյգեր կազմուեցան հետզետէ, զոյգեր՝ որ արհամարհէլի մարդիկ չէին, այլ այնպիսիներ որ պիտի պարէին և քաւելու միտք չունէին։

Սակայն եթէ երկու անգամ, այս, չորս անգամ ալ, աւելի ըլլային թուով, ծեր Ֆէզիուիկ պիտի մրցէր անոնց հետ։ Իսկ Տիկին Ֆէզիուիկ արժանի էր անոր ընկերանալ բատին ամէն իմաստով։ Եթէ բարձր գովեստ չէ այս, ըսէք ինծի աւելի բարձրը, և ես զայն պիտի

գործածեմ։ Ֆէզիուիկի սրունքներուն դնդերները կարծես զրական լոյս կ'արձակէին։ Պարին ամէն մասերուն մէջ լուսիններուն նման կը փայլէին։ Զէիք կրնար գուշակել սեւէ վայրկեան թէ ի՞նչ պիտի ըլլային յաջորդ վայրկեանին։ Եւ երբ Տէր և Տիկին Ֆէզիուիկ խաղացին պարին ամէն ձեւերը, առաջ և ետ երթալով, ձեռն ի ձեռն ընթանալով, խոնարհելով, մեծարելով, չըջանը բոլորելով և բոլորակին մէջէն անցնելով ու ետ դարձեալ դէպի ի նախկին դիրքը վերադառնալով, Ֆէզիուիկ այնպէս ոստուաեց և այնպէս ճարտարօրէն որ կարծես սրունքներով կը թարթէր և միշտ ոտքերուն վրայ կու գար առանց գողգղալու։

Երբ պատի ժամացոյցը տասնըմէկ զարկաւ, ընտանեկան պարահանդէսը վերջացաւ։ Տէր և Տիկին Ֆէզիուիկ դիրք բոնեցին, մին դրան մէկ կողմը, միւսը միւս կողմը, և մեկնող իւրաքանչիւր անձի ձեռքը սեղմելով Սը. Ծնունդը չնորհաւորեցին։ Երբ ամէն ոք մեկնեցու բաց ի երկու աշկերտներէն, անոնց ալ ձեռքը սեղմեցին և Սը. Ծնունդը չնորհաւորեցին։ Այսպէս զուարթ ձայները դադրեցան և պատանիներն իրենց անկողինները զրկուեցան, որոնք խանութին ետեւի մասին մէկ սեղանին տակ էին։

Ամբողջ այս ժամանակ Սքրուձ շարժած էր խելակորյս մարդու մը պէս։ Անոր սիրտն ու հոգին տեսարանին մէջ էին և իր նախկին անձին հետ։ Ամէն բան հաստատեց, ամէն բան յիշեց, ամէն բան սիրեց և տարօրինակ յուղման մատնուեցաւ։ Իր նախկին անձին և Տիքի պայծառ դէմքերուն անհետանալէն ետեւ միայն յիշեց Ողին և զզաց թէ զինք կը զիտէ ուշի ուշով, և լոյսը դեռ որոշ կը շողայ անոր գլխուն վերեւ։

«Պղտիկ բան է,» ըսաւ Ողին, «այս տխմարները լեցնել այսքան երախտագիտութեամբ։»

«Պղտի՛կ,» արձագանգեց Սքրուճ :

Ողին անոր նշան ըրաւ մտիկ ընել երկու աշկերտաներուն, որոնք իրենց սիրտերը բանալով Ֆէզիտիկի գովուսը կը հիւսէին : Երբ մտիկ ըրաւ ան, Ողին ըստ :

«Ինչո՞ւ չէ : Զեր մահկանացու դրամէն քանի մը ոսկի—թերեւս երեք չորս—միայն ծախսեց : Մեծ բա՞ն է միթէ այդ, կ'արժէ՝ որ այդչափ գովուի ատոր համար :»

«Այդ չէ խնդիրը,» ըստ Սքրուճ, զայրանալով այս գիրողութեան համար և անդիտակցօրէն խօսելով իր նախկին և ոչ արդի մտայնութեամբ : «Այդ չէ խնդիրը, Ողի : Մարդը մեզ երջանիկ կամ ապերջանիկ ընելու—մեր ծառայութիւնը թեթև կամ ծանր դարձնելու, հաշոյքի կամ տանջանքի վերածելու—կարողութիւնն ունի : Բէք թէ այդ կարողութիւնը կը կայանայ խօսքերու և ակնարկներու մէջ, այնքան փոքր ու աննշան բաներու մէջ որ անհնար է գումարել կամ համրել զանոնք—սակայն ատէկ ի՞նչ վնաս : Երջանկութիւնը զոր այն մարդը կու տայ՝ այնքան մեծ է որքան պիտի ըլլար, եթէ ահագին ծախս ընէր :»

Զգաց Ողին նայուածքը և կանգ առաւ :

«Ի՞նչ կայ,» հարցուց Ողին :

«Մասնաւոր բան մը չկայ,» ըստ Սքրուճ :

«Կայ, կարծեմ,» պնդեց Ողին :

«Ոչ,» պատասխանեց Սքրուճ : «Չկայ : Պիտի ուզէի որ կարող ըլլայի հիմա մէկ երկու խօսք ըսել զրագրիս : Այս է բոլորը :»

Իր նախկին անձը ձրագները մարեց՝ այս փափաքն յայտնելու պահուն : Սքրուճ ու Ողին ալ նորէն քով քովի դտան զիրար ըաց օդին մէջ :

«Իմ ժամանակը կը կարճնայ,» ըստ Ողին :

Այս չըսուեցաւ Սքրուճի կամ ուեէ անձի զոր կըրնար ան տեսնել : Սակայն անմիջական արդիւնք ունեցաւ : Վասն զի դարձեալ ինքինք տեսաւ Սքրուճ : Հիմա մեծ էր ինք, առոյզ հասակով մարդ մը : Դէմքը չունէր աւելի յառաջացած տարիքի յատուկ խիստ ու գաման զիժեր : Բայց սկսած էր հոգերու և ազանութեան նշաններ կրել : Աչքին մէջ կար եռանդուն, ազան և գժգոն շարժում մը, որ կը մատնէր արմատացած կիրքը և ցոյց կու տար թէ ո՛ւր պիտի իյնարմեցող ծառին ստուերը :

Առանձին չէր, այլ կը նստէր սդաւորի հագուստով գեղանի մատաղ աղջկան մը քով, որու աչքերուն մէջ արցունքներ կային և Սնցեալ ծնունդի Ողիէն բղխող լոյսին մէջ կը փարփլացին :

«Քեզի համար քիչ կարեւորութիւն ունի,» ըստ աղջիկը մեզմով : «Քեզի համար, շատ քիչ : Ուրիշ կուռք մը զրաւած է իմ տեղս : Եւ եթէ ուրախացնէ և սիտիէ քեզ ապագային մէջ, ինչպէս ես պիտի ջանայի ընել, ցաւելու պատճառ մը չեմ ունենար :»

«Ի՞նչ կուռք զրաւած է քու տեղդ,» պատասխանեց Սքրուճ :

«Ուկի կուռք մը :»

«Այս է աշխարհի անաչա՛ռ ընթացքը,» ըստ Սքրուճ : «Չկայ բան մը զոր այնքան խստութեամբ կը զատապարտէ որքան աղքատութիւնը, և չկայ բան մը զոր այնքան խստութեամբ զատապարտէլ կը կեղծէ որքան հարստանալու ձիգը :»

«Չափազանց կը վախնաք աշխարհէն,» պատասխանեց աղջիկն անուշութեամբ : «Բոլոր ձեր միւս յոյսերը թագուած են անոր գծուծ յանդիմանութեան ենթարկուելու վտանգէն զերծ մնալու յոյսին մէջ : Ես տեսայ ձեր աղնուագոյն տենչերուն մի առ մի թօթա-

փումը մինչեւ Շահու տիրական կիրքն ամբողջովին գրաւեց ձեռ։ Չտեսա՞յ։

«Լաւ,» պատասխանեց Սքրուճ։ «Եթէ ես այդքան իմաստուն եղած եմ, ի՞նչ կ'ըլլայ։ Փոխուած չեմ քեզի հանդեպ։»

Աղջիկն իր զլուխն երեցուց։
«Փոխուած եմ։»

«Մեր պայմանագրութիւնն հին է։ Կնքուեցաւ, երբ երկուքս ալ աղքատ էինք և յօժար աղքատ մնալ, մինչեւ կարենայինք յարձար ժամանակին աշխարհային մեր վիճակը բարելաւել համբերատար մեր աշխատասիրութեամբ։ Փոխուած ե՞։ Երբ այն կնքուեցաւ, ուրիշ մարդ էիք։»

«Տղայ էի,» ըստ անհամբերութեամբ։

«Բու իսկ զգացումք կ'ըսէ քեզի թէ չէիր այն ինչ որ ես հիմա,» պատասխանեց աղջիկը։ «Իսկ ես նոյն կը մնամ։ Այն որ երջանկութիւն կը խոստանար երբ մինք մէկ էինք սրտով, թշուառութեամբ լցուն է հիմա որ երկուք ենք։ Ո՞րքան ստէպ և ո՞րքան ցաւով խորհած եմ ասոր վրայ, պատմելու միտք չունիմ։ Կը բաւէ ըսել թէ խորհած եմ ասոր վրայ և կրնամ արձակել քեզ։»

«Ես քեզմէ արձակում ուզեցի՞։»

«Խօսքով — ոչ, ոչ երքեք։»

«Ինչո՞վ ուրիմ։»

«Փոխուած բնութեամբ, փոխուած ոզիով, կեանքի տարբեր մթնոլորտով, իբր կեանքի մեծ նպատակ՝ տարբեր Յոյսով։ Ամէն բանով որ իմ սիրոյս ուեւէ արժէք կ'ընծայէր քու առջեւդ։ Եթէ այս փոփոխութիւնը բնաւ տեղի ունեցած չըլլար մեր միջեւ,» ըստ աղջիկն անոյշ բայց անքթիթ նայուածքով, «ըսէ ինձի, պիտի

վնասուէի՞ր, պիտի ջանալի՞ր, հիմա վերաշահիլ զիս։ Ոչ, ոչ։»

Հակառակ իր կամքին, Սքրուճ ընդունեցաւ կարծես այս ենթագրութեան իրաւացիութիւնը։ Սակայն ձիգ մը ընելով ըստ, «Դուք չէք կարծեր։»

«Եթէ կարելի ըլլար ինձի ուրիշ կարծիք ունենալ, երկինք զիտէ թէ ուրախ պիտի ըլլայի,» պատասխանեց աղջիկը։ «Երբ այսպիսի ձշմարտութիւն մը իմանամ, զիտեմ թէ ո՞րքան հզօր ու անդիմաղբեմի կ'ըլլայ այն։ Բայց եթէ ազատ ըլլայիր այսօր, վազք, երէկ, կրնում ես անգամ հաւատալ թէ անօժիտ աղջիկ մը պիտի ընտրէիր, զուն որ անոր հետ մտերմական հաղորդակցութեան միջոցին իսկ ամէն բան Շահով կը կըսես։ Կամ եթէ վայրկեան մը քու կեանքի վարիչ սկզբունքիդ անհաւատարիմ ըլլալով ընտրէիր իսկ, միթէ չե՞մ զիտեր ես թէ անշուշտ զլջում ու ցաւ պիտի յաջորդեն այդ քու քայլին։ Գիտեմ և կ'արձակեմ քեզ — կատարեալ յօժարութեամբ ի սէր անոր որ երեմն էիր։»

Սքրուճ պատրաստուեցաւ խօսիլ։ Բայց աղջիկը զլուխն ուրիշ կողմ գարձնելով վերսկսաւ։

«Կարելի է որ ցաւիք ասոր համար — անցեալ բաներու յիշատակը կէս մը տրամադիր կ'ընէ զիս յուսաւ թէ պիտի ցաւիք։ Կարճ, շատ կարճ ժամանակ մը, և ուրախութեամբ պիտի վտարէք այդ յիշատակն իբր անշահ երազ մը, որմէ արթնցաք բարեբախտաբար։ Կը մաղթեմ որ երջանիկ ըլլաք այն կեանքին մէջ զոր ընտրեցիք։»

Աղջիկը թողուց զայն, և մեկնեցան։

«Ոզի,» ըստ Սքրուճ։ «Ուրիշ բան մի ցուցներ ինձի։ Տուն տար զիս։ Ինչո՞ւ կը հրճուիս ատանջելով զիս։»

«Ստուեր մը եւս,» զոչեց Ողին:
«Ոչ,» աղաղակեց Սքրուձ: «Ոչ, ուրիշ չեմ ուզեր:
Ա՛լ կը բաւէ:»

Սակայն անողոք Ողին բոհեց զայն երկու թեւով
և բռնպատեց դիտել յաջորդ տեսիլը:

Ուրիշ տեսարան էր պարզուածը: Սենեակի մը մէջ
էին, ոչ շատ մեծ կամ փառաւոր, բայց լիովին հան-
գրստաւէտ: Զմեռնային կրակարանին քով մատաղատի
աղջիկ մը նստած էր գեղեցիկ, վերջինին այնքան նման
որ Սքրուձ կարծեց նախ թէ նոյնն է: Բայց յետոյ
հասկցաւ թէ էր սիրուն տիկին մը իր դստեր գիմաց
նստած: Սենեակին աղմուկը կատարեալ ժխոր էր,
վասն զի տղայք կային հոն աւելի շատ քան զոր
Սքրուձ կրնար համբել մտքի իր յուղեալ վիճակին մէջ:
Եւ, ոտանաւորի մը համբաւաւոր հօտին աննման, մէկ
անձի պէս շարժող քառասուն տղայ չէին անոնք, այլ
իւրաքանչիւրը քառասուն անձի պէս շարժող: Հետեւա-
բար ժխորն անհաւատալիօրէն մեծ էր, բայց ոչ ոք
կարծես հոգ կ'ընէր: Ծնդ հակառակն մայրն ու դուստրը
բոլոր սրտով կը խնդային ու կ'ախտորժէին, և քիչ յե-
տոյ երկրորդն անոնց խաղերուն խասնուելով անողոք
կերպով կողապտուեցաւ պղտիկ աւազակներէն: Ինչե՛ր
տալ պիտի ուզէի ևս անոնց մին ըլլալու համար: Թէւ
երբեք այնքան կոշտ պիտի չըլլայի: Ոչ, ոչ, երբեք:
Եթէ ամբողջ աշխարհի հարստութիւնն ինձի արուէր,
ևս մազի սա հիւսքերը պիտի չքակէի և չաւրէի: Իսկ
այն թանկապին փոքրիկ կօշիկը, ո՞հ, քաւ լիցի, որ
համարձակէի հանել իր սիրուէիին ստքէն: Գալով
կատակի համար անոր մէջքը չափելու փորձին, երբեք
չի կրնար հետեւիլ այդ համարձակ չարաձիներուն:
Պիտի փախնայի որ թեւս անոր շուրջ կը փակչի իբրեւ
պատիժ և այլեւս չշխակուիր: Սակայն մհծապէս պի-

տի բաղձայի, կը խոստովանիմ, անոր շրթանց զըպ-
չիլ, զայն հարցափորձել որպէս զի բանայ զանոնք, ա-
նոր վայրահակ աչքերուն արտեւանունքները դիտել և
չիկնիլ, անոր արձակել տալ իր ձոխ մազերը որոնց
մէկ մատնաչչափն անգին յիշատակ մը պիտի ըլլար:
Համառօտիւ, պիտի բաղձայի, կը խոստովանիմ, տղու
մը ամենամեծ աղատութիւնն ունենալ անոր քով և
սակայն այդ աղատութեան արժէքը գիտնալու չափ
մեծցած ըլլալ:

Յանկարծ դուռի բախում մը լսուեցաւ, և ահա
դէպ ի դուռն այնպիսի խուժում մը սկսաւ որ աղջիկը
ծիծուն գէմքով ու աւարի տրուած հագուստով տար-
ուեցաւ դէպ ի հոն, կեդրոնը մնալով հրավառ այսե-
րով և բարձրաձայն գոչող տղայոց, ճիշտ ժամանակին
ողջունելու համար հայրը, որ տուն կու գար ծնունդի
խաղալիկներով ու նուէրներով բեռնաւորուած մարզու
մը ընկերակցութեամբ: Այն տաեն պէտք էր տեսնել
անոնց աղաղակն ու պայքարը, և յարձակումը զոր ըրին
անպաշտպան բեռնակրին վրայ: Ի՞նչպէս մազլցեցան
անոր վրայ աթոռներն իբր սանդուխ գործածելով:
Ի՞նչպէս միարձեցան անոր գրավաններուն մէջ և աւարի
տուին անոր թուի թղթէ ծրարները, քաշեցին անոր
վզկապը, փաթթուեցան անոր վզին, բոռնցով ծեծե-
ցին անոր կոնակը, և աքացի հարուածներ տուին ա-
նոր սրունքներուն ի նշան բուռն սիրոյ: Պէտք էր լսել
հիացման և հրձուանքի աղաղակները որոնցմով կ'ող-
ջունէին ամէն ծրարի բացում: Լուե՛լ սոսկալի սա ծա-
նուցումը թէ մանկիկն իր բերանը զրաւ պուպրիկի մը
տապակը և զօրաւոր վախ կայ որ կլլեց փալուէ պնակի
մը վրայ սոսինձով փակցուած արուեստական հնդկահաւ-
մը: Տեսնե՛լ այն հանգիստ չնչառութիւնը զոր ամէն
ոք սկսաւ՝ իմանալով թէ անհիմն էր այդ կասկածը: Տես-

նե՛լ ընդհանուր ուրախութիւնը, երախտազիտութիւնը և խանգավառութիւնը: Աննկարագրելի են անոնք: Կը բաւէ ըսել թէ տղայք և իրենց զգացումներն հետզհետէ եւան հիւրանոցէն, և սանդուխէ մը կամաց կամաց ելիով վերնայրկն հասան, ուր պառկեցան ու լոեցին:

Սքրուճ աւելի ուշադրութեամբ կրցաւ իր չորս կողմը դիտել, երբ տանուաէրը վառարանին քով նստաւ իր վրայ գուրզութացող սիրուն աղջկան և անոր մօր հետ: Եւ երբ մտածեց թէ այդպիսի ուրիշ աղջիկ մը, նոյնքան չորհագեղ ու խոստմալից, կրնար հայր կոչել զինք և գարուն վայելել տալ իր կեանքի ցուրտ ձմրան մէջ, տեսողութիւնն իսկապէս շատ աղօտացաւ:

«Պէտ,» ըսաւ ամուսինը՝ ժամփով իր կնոջ գառնալով, «այսօր հին մէկ բարեկամդ տեսայ:»

«Ո՞վ էր:»

«Գուշակէ:»

«Ի՞նչպէս գուշակէմ: Կեցիր, զիտեմ,» յարեց նոյն չունչով և խնդալով ամուսին հետ, «Փ. Սքրուճ:»

«Այս, Փ. Սքրուճ: Դրասենեալին պատուհանին առջեւէն կ'անցնէի, և որովհետեւ փեղկը զոցուած չէր և ներսը վառ ճրագ կար, չկրցայ զինք չտեսնել: Ըստ կերը մահուան դուռն հասած է, ինչպէս կը լսեմ: Իսկ ինք առանձին կը նստէր հոն: Բոլորովին առանձին, կը կարծեմ, աշխարհի մէջ:»

«Ողի,» ըսաւ Սքրուճ խեղդուկ ձայնով, «հեռացուր զիս այս տեղէն:»

«Ծոփ քեղի թէ ասոնք անցեալ բաներու ստուերներ են,» ըսաւ Ողին: «Մի մեղագրեր զիս անոնց այնպէս ըլլալուն համար:»

«Հեռացուր զիս,» զոչեց Սքրուճ: «Չեմ կրնար տանիլ ասոր:»

Դարձաւ Ողին, և տեսնելով թէ զինք կը դիտէ դէմքով մը, ուր տարօրինակօրէն հետքեր կային բուլոր այն դէմքերէն որ իրեն ցուցուեցան, մաքառեցաւ անոր հետ:

«Զգէ զիս: Ետ տար զիս: Ա՛լ մի երեւիր ինծի:» Պայքարին մէջ, եթէ կարելի է պայքար կոչել զայն, ուր Ողին առանց տեսանելի ոեւէ ընդգիմութեան անայլայլ կը մնար հակառակ սոսիսին բոլոր ճիգերուն, Սքրուճ զիտեց թէ անոր լոյսը կը շողայ բարձր ու պայծառ: Եւ ազօտ սա զաղափարով, թէ շիջուցիչ գըլխարկն էր իր վրայ գործող Ողին ազգեցութեան աղքիւրը, խեց զայն և անոր զլուխն անցուց յանկարծական շարժումով:

Ողին անոր տակ կծկեցաւ, այնպէս որ շիջուցիչն ամբողջովին ծածկեց անոր կերպարանը: Բայց թէեւ Սքրուճ բոլոր իր ուժով ձնչեց զլխարկը, չկրցաւ ծածկել լոյսը, որ տակէն հեղեղի պէս անհընդատ կը տարածուէր գետնին վրայ:

Զգաց թէ ուժանպառ եղած էր և անդիմադրելի թմրութեան մը ենթարկուած, և թէ կը գտնուէր այժմ բուն իր նոչարանին մէջ: Վերջին ճիգ մը եւս ըրաւ զլխարկը ձգմելու և ձեռքը թուլցաւ: Հաղիւ ժամանակ ունեցաւ անկողնին մէջ գլորելու, և ահա խոր քունի մէջ ընկղմեցաւ:

ՏՈՒՆ Գ
ԵՐԵՎԱՆ ՊՊԻՒՆԵՐՈՒՆ ԵՐԿՐՈՇՄԱՅՔ

Սքրուճ, որ սարսափելի աղմուկով կը խորդար, յանկարծ արթննալով և խորհուրդներն ամփոփելու համար անկողնին մէջ նստելով, առիթ չունեցաւ ուրիշ մը լսելու թէ զանգակը դարձեալ Մէկ կը զարնէ։ Զգաց թէ ձիշտ ժամանակին արթնցած էր ձէյքքալ Մարդի միջնորդութեան շնորհիւ իրեն զրկուած երկրորդ պատգամաւորին հետ տեսակցելու համար։ Բայց, նայելով որ սաստիկ դողաց երբ խորհեցաւ թէ այս նոր ուրուականը ո՞ր վարագոյրը պիտի քաշէ արդիօք, իր իսկ ձեռքով քաշեց բոլոր վարագոյրները, և դարձեալ պառկելով աչքը չորս բացաւ անկողնին ամէն կողմը զիտելու համար։ Վասն զի ուզեց Ողիին առապարէզ կարգալ անոր երեւման առաջին վայրկենին և ոչ թէ յանկարծակիի գալ ու ջայանանալ։

Մեծխօսիկ մարդիկ, որ կը պարծին թէ մէկ երկու շարժումի տեղեակ են և սովորաբար կը յարմարին օրուան ժամանակին, արկածախնդրութեան իրենց ընտարձակ ընդունակութիւնը կը յայտնեն՝ ըսելով թէ ամէն բանի պատրաստ են խաղէ սկսեալ մինչև մարդասպանութիւն։ Այս երկու ծայրագոյն սահմաններուն միջև նիւթի բաւական լայն ու ընդարձակ քանակութիւն մը կայ անտարակոյս։ Առանց այսքան յանդրգոյրէն խօսելու Սքրուճի համար, կը համարձակիմ հրաւիրել ձեզ որ հաւատաք թէ պատրաստ էր աներկիւղ դիմաւորել օտարոտի բաւական այլազան երեւոյթներ, և թէ երախայի ու ոնդեղինքնի միջև զըտ-

նուող ոչ մէկ բան շատ պիտի զարհուրեցնէր զայն։ Սրդ գրեթէ ամէն բանի պատրաստուած ըլլալով՝ բնաւ. չըր պատրաստուած ոչինչի համար։ Հետեւապէս, երբ զանգակը Մէկ զարկաւ ու ոչ մէկ տեսիլ երեւցաւ, գոզի սոսկալի նոսկայի մը ենթարկուեցաւ։ Հինգ, տասար և տասնընինդ վայրկեան անցաւ, և ոչինչ երեւցաւ։ Բոլոր այդ միջոցին պառկած մնաց անկողնին վրայ, բուն իսկ կեդրոնատեղին կարմիր լոյսի այն հեղեղին որ անոր վրայ հոսեցաւ երբ ժամը Մէկ զարկաւ, և որ միայն լոյս ըլլալով երկեցեակ մը ոգիէ աւելի զարհուրելի եղաւ, քանզի մարդը չկրցաւ հասկնալ թէ ի՞նչ կը նշանակէր կամ ի՞նչ պիտի ըլլար, և երբեմն վախցաւ թէ կրնայ ինք այդ պահուն ինքնավառ այրման շահնեկան օրինակ մը ըլլալ՝ առանց զայդ գիտնալու միխթարութիւնն ունենալու։ Վերջապէս սակայն սկըսաւ մտածել — ինչպէս դուք և ես պիտի մտածէինք սկիզբէն, վասն զի տուեալ պարագային մէջ չգտնուողն է միշտ որ գիտէ թէ ի՞նչ պէտք էր ընել և անվիճեմորէն ալ պիտի ընէր — վերջապէս, կ'ըսեմ, սկսաւ մտածել թէ այս ուրուական լոյսին աղբիւրը կամ զաղանիքը կրնայ յարակից սենեակին մէջ ըլլալ, որմէ կը թուէր բնիւլ, երբ աւելի ուշագրութեամբ զննեց։ Այս զաղափարը լիովին տիրեց անոր մտքին։ Աւստի մեղմով ելաւ և բապուճներն հագնելով զէպ ի դուռն յառաջացաւ դանդաղ քայլերով։

Հաղիւ Սքրուճ իր ձեռքը կզպանքին վրայ դրաւ, և ահա անծանօթ ձայն մը կանչեց անոր իր անունով և հրամայեց մտնել։ Հնապանդեցաւ։

Իր սեփական սենեակին էր այն։ Այդ մասին տարակոյս չկար։ Բայց զարմանալի փոխակերպութիւն մը կրած էր։ Պատերն ու ձեզունն այնպէս ծածկուած էին կանանչ բուսականութեամբ որ կատարեալ պուրակի

մը կը նմանէր, որու ամէն կողմերէն վաս գոյնով հատապտուղներ կը փայլէին։ Հոլիի, միզզլոխի (*) և պատառուկի թարմ, դիւրաբեկ տերեւներ լոյսն այնպէս կը ցոլացնէին որպէս թէ հոն բազմաթիւ փոքր հայելիներ ցրուած էին։ Խոկ օջախն ի վեր այնպիսի մեծ բոց մը կ'ելլէր գոռումով, որու նմանը երբնք տեսնուած չէր հոն Սքրուճի օրով, կամ Մարիի օրով և կամ շատ ձմեռներէ ի վեր։ Տեսակ մը գահոյք կազմելու համար տախտակամածին վրայ դիվուած էին հընդկահաւեր, սագեր, երէի, հաւու և խողի միսեր, խոշոր զիստեր, ծծկեր խողեր, երշիկի երկար գալարներ, մոտախառն կարկանդակներ, մրգախառն խմորելուններ, տակառներով ոստրէ, տաք տաք շագանակներ, կարմրուկ խնճորներ, հիւթեղ նարինջներ, համեղ տանձեր, Աստուածայայտնութեան օրուան յատուկ ահազին քէյքեր և ամաններով եռուն ջերմօղի, որոնք ոենեակը կ'աղօտացնէին իրենց բուրեղ գոլորշիներով։ Այս գահաւորակին վրայ հանգիստ կը բազմէր փառաւոր տեսիլով կայտուն հոկայ մը, որ վաս ջան մը ունէր, ձեւով ոչ անհման Առատութեան եղջիւրին, և վեր բարձր կը բռնէր զայն, որպէս զի Սքրուճի վրայ սփուր լոյսը, մինչ դէպ ի դուռը կու գար զգոյշ քայլերով։

«Հրամեցէք,» զոչեց Ոգին։ «Հրամեցէք, և զիս աւելի լաւ ձանչցէք, մարդ։»

Սքրուճ մտաւ երկչոսութեամբ և գլուխը կախեց այս Ոգիին առջեւ։ Այլեւս ինք նախկին խեռ Սքրուճը չէր։ Եւ թէեւ ուրուականին աչքերն յատակ ու անոյշ էին, չուզեց ուզզակի անոնց նայիլ։

«Ես ներկայ ծնունդի Ոգին եմ,» ըսաւ Ոգին։ «Ինծի նայէ։»

(*) Մարգարտագոյն, սոսնձաբեր հատապտուղով մակարոյժ տուննկ մը, որ հոլիի հետ կը գործածուի ծնունդի ժամանակ։

Սքրուճ նայեցաւ երկիւղածութեամբ։ Մութ կանանչ պարզ պարեգոտ կամ վերարկու մը հազած էր այն, ձերմակ մուշտակով եղերուած։ Այս պարեգոտն այնքան թուլօրէն կը կախուէր Ոգիին վրայ որ ընդարձակ կուրծքը մերկ կը մնար։ Կարծես կ'արհամարհէր արուեստական ոեւէ ծածկոյթ։ Ոտքերը, որ կը տեսնուէին պարեգոտին լայն ծալքերուն ներքեւ, մերկ էին նմանապէս։ Խոկ գլուխը չունէր ուրիշ ծածկոց բաց ի հոլիի պոակէ մը, որու վրայ սառի փայլուն կոնիկներ կային տեղ տեղ։ Թուխ մազերուն խոպոպէնը երկայն ու արձակ էին — արձակ անոր համակրելի դէմքին, ֆաղփուն աչքերուն, բաց ձեռքին, զուարթ ձայնին, ոչ բռնազբօսիկ շարժուածքին և ուրախ կերպարանին պէս։ Մէջքը կապած էր հինաւուրց պատեան մը, առանց սուրի սակայն, և վաղեմի պատեանը ժանգոտ էր։

«Բնաւ տեսած չէք զուք ինծի պէս մէկը,» զոչեց Ոգին։

«Բնաւ,» պատասխանեց Սքրուճ։

«Բնաւ քալած չէք իմ ընտանիքիս փոքր անդամներուն հետ — ըսել ուզելով (վասն զի ես շատ փոքր եմ) վերջին տարիներս ծնած իմ մեծ եղբայրներուն հետ,» շարունակեց Ոգին։

«Չեմ կարծեր թէ քալած եմ,» ըսաւ Սքրուճ։ «Կը վախնամ թէ չեմ քալած։ Շատ եղբայր ունի՞ք, Ոգի։»

«Աւելի քան հազար ութ հարիւր,» ըսաւ Ոգին։

«Ծնամելու համար ահազին ընտանիք,» մրմնչեց Սքրուճ։

Ներկայ Ծնունդի Ոգին ոտքի ելաւ։

«Ոգի,» ըսաւ Սքրուճ խոնարհաբար, «տար զիս ուր կ'ուզես։ Ես երէկ գիշեր զացի բռնի ստիպման տակ, և առի դաս մը որ հիմա կ'ազգէ ինծի։ Այս զի-

շեր, եթէ ինծի սորվեցնելու բան մը ունիս, թող օգտուիմ եռ::

«Պարեզոտիս դպէ::»

Սքրուճ հնազանդեցաւ հրամանին և ամուր բռնեց: Հողի, միզըլթօ, կարմիր հատապտող, պատառկ, հնդիանաւ, սագ, երէ, հաւեղէն, խողենի, միս, խողի ձագ, երչիկ, ոստրէ, մսախառն և մրգախառն կարկանդակներ, պտուղ, ջերմօղի և ամէն ինչ իսկոյն անհետացան: Նմանապէս սենեակը, կրակը, կարմրուկ լոյսը և գիշերուան ժամը: Եւ ահա կը կենացին իրենք ծնունդի առաւոտով քաղաքին փողոցները, ուր մարզիկ խիստ օդին պատճառով տեսակ մը կոչտ բայց աշխոյժ և ոչ անհանգյ երաժշտութիւն կը յօրինէին՝ ձիւնը մաքրելով իրենց բնակարաներուն առջեւի սալայտառակէն և իրենց տուներուն տանիքներէն, և տղայք կը խնդիրնային գիտելով վերէն վար թափող բամբականան ձիւնակոյտերը, որ պատռնելով արուեստական փոքրիկ ձիւնափոթորիկ մը կը ձեւացնէին:

Տուներու ճակատները բաւական սեւ կ'երեւէին, պատռհաններն աւելի սեւ, իրերեւ հակապտակեր տանիքներու ձիւնի ողորկ սպիտակ սաւանին և գետնի աղտոտ ձիւնին: Վերջինը խոր ակօններու վերածուածէր հերկուելով սայլերու և կառքերու ծանր անիւններէն, և ակօններն հարիւրաւոր անգամ զիրար խաչաձեւելով այնպիսի տեղեր ուր մեծ փողոցները կը ձիւզաւորին՝ կը կազմէին կնծուոտ ուղիներ, զորս գժուարէր որոշել թանձր ցեխին ու սառնաջուրին մէջ: Երկինք մուայլ էր և կարճագոյն փողոցները կը խեղուէին մասամբ հալած, մասամբ սառած մութ մառախուզով, որու ծանրագոյն մասերը վար կ'իջնէին ձանձախարիթի մասնիկներու տարափով, որպէս թէ Մեծ Բրիտանիոյ բոլոր ծխնելոյզները միասնաբար կրակ առած կը բո-

ցավառէին սրտի ամենայն գոհունակութեամբ: Կլիմային կամ քաղաքին մէջ ոչինչ կար այնչափ զուարթարար: Սակայն ամէն տեղ կը տիրէր զուարթութեան մթնոլորտ մը զոր ամրան ամենապարզ օդն ու ամենապայծառ արեւն ի զուր պիտի ջանային սփուել:

Վասն զի տան տանիքները մաքրող մարդիկ, ուրախ զուարթ, իրարու կը պոսային վանդակորմերէն, և մերթընդ մերթ կը փոխանակէին ձիւնի զուարձալի գնդակ մը, որ աւելի բարեբնոյթ գնդակ է քան լեզուի շատ կատակներ, և սրտազին կը խնդային երբ ուղիղ երթար, և ոչ նոււազ սրտազին՝ երբ սխալ երթար: Հաւավաճառներու խանութները գեռ բաց էին կիսով, իսկ պտղավաճառներու խանութներու կը ճաւագայթէին իրենց փառքով: Շագանակի մեծ, կլոր և ուռած փորով սակառներ կային բաժկոնակներուն նման ուրախ զուարթ խոշոր մարդոց որ դուներու առջեւ կը գեղերին ու փողոց կ'իյնան իրենց կաթուածային փարթամութեան մէջ: Սպանիական կարմրուկ, թխադէմ, լայնազօտի սոխեր կային Սպանիացի կրօնաւորներու նման իրենց գիրութեամբ փայլով, որ իրենց գարակներէն խորամանկօրէն տոփոտ ակնարկներ կ'ուղղէին անցորդ աղջիկներուն, և վարպետութեամբ կը նայէին կախուած միզըլթօններուն: Տանձեր ու ինձորներ կային ժամունութուրիկ ու նման գիզուած, խալողի փունջեր, խանութապաններու բարեսիրութեամբ ուշագրաւ կեներու վրայ այնպէս կախուած որ անցորդներու բերանները ձրի կը ջրոտէին: Մամուապատ ու թուխ կաղիններ կային զէզ առ զէզ, որ իրենց բոյրով կը յիշեցնէին անտառային փաղեմի ուղիներ և ցամքած տերեւներու թանձր խաւի վրայ կատարուած պտոյտներու շրշիւններ: Նորփոքեան խնձորներ կային զիրուկ ու թուխ, որ ուշագրաւ կը դարձնէին նարինջներու և լիմոններու զեղին գոյնը և

իրենց հիւթեղ մարմիններուն միծղի ճոխութեամբ թախանձագին կ'աղերսէին ու կ'աղաչէին տուն տարուիլ թուղթէ քսակներով և ուտուիլ ճաշէ ետեւ։ Այս ընտիր պտուղներուն միջեւ ջրանօթի մը մէջ դրուած ոսկի և արծաթ զոյնով ձուկերն իսկ կինդանական բթամիտ ու պաղարիւն ցեղի մը վերաբերելով հանգերձ գիտէին կարծես թէ բան մը կ'անցնէր կը դառնար և դանդաղ ու հանդարտ յուղումով իրենք եւս շրջան կ'ընէին իրենց փոքր աշխարհին մէջ։

Հապա նպարավաճառոցները, նպարավաճառոցները, գրեթէ փակ, թերեւս երկու փեղկով կամ միայն մէկ փեղկով բաց։ Բայց այդ բացուած քներէն ինչե՛ր կը տեսնուէին։ Ոչ միայն սեղանին վրայ իջնող կշորշի թաթերն ուրախ ճայն մը կը հանէին, կամ առասնն ու զլանիկն աշխուժօրէն իրարժէ կը բաժնուէին, կամ թիթեղեայ տուփերն աղմուկով վեր վար կը գլուրէին ձեռնածուական խաղերու նման, կամ թէյի և խահէի խառն բոյրերն հաճելի էին քթի, կամ խաղողներն առատ ու հազուազիւտ, նուշերը վերջին ծայր ձերմակ, կինամոնի ծողիկներն երկար ու շիտակ, միւս համեմները սիրալի, պահածոյ պտուղներն այնպէս ճնշուած ու հալած շաքարով կէտկիտուած որ ամէնէն պաղարիւն դիտողներն իսկ կը նուազէին ու յետոյ սրտի խառնըրուոք կ'ունենային։ Ոչ միայն թուղերը խոնաւ ու փափուկ էին, կամ ֆրանսական սալորներն իրենց զարդարուն բարձր տուփերէն կը շիկնէին համեստ թթուաշութեամբ, կամ ամէն բան լւաէր ուտուելու համար և ծնունդի յատուկ տարազ կը կրէր։ Այլև յաճախորդներն ամէնն ալ այնքան փութկոտ ու եռանդուն էին օրուան յուսալից միջնոլորտին մէջ որ իրարու վրայ կը զլորէին դրան քոյլ՝ իրենց ողորահիւս կողովները չարաչար ճզմելով, սեղանին վրայ կը

մոռնային իրենց գնածները և յետոյ ետ կը վազէին առնել զանոնք, և այսպիսի հարիւրաւոր սիսալներ կը գործէին կարելի ամենալաւ զուարթամտութեամբ։ Նպարավաճառն ու իր մարդիկն այնքան անկեղծ ու մաքուր էին որ փայլուն սիրտերը, որոնցմով իրենց ետին կը կապէին գոզնոցները, կրնային բաւն անոնցն ըլլաւ, զուրսէն կրուած՝ որպէս զի ամէն ոք տեսնէր և որպէս զի ծնունդի ճայեակներ, եթէ ուղէին, կտցահարէին զանոնք։

Բայց զանգակներն ընդ հուպ եկեղեցի և մատուռ հրաւիրեցին բարի մարդիկը, և սկսան անոնք զունդագունդ գալ փողոցներէն իրենց լաւագոյն հագուստներով և իրենց ամէնէն ուրախ գէմքերով։ Միւնոյն ժամանակ երկրորդական, երրորդական փողոցներէ և անանուն անկիւններէ անհամար ժողովուրդ գուրս թափեցաւ իրենց ճաշերն հացագործի խանութները տանելու համար։ Կ'երեւի թէ այս խեղճ խրախճանողներուն տեսնը շատ շահագրգանց լովին, վասն զի փուռի մը դրան առջեւ կայնեցաւ՝ իր քով ունենալով Սքրուճը և ճաշակիրներու սաներուն կափարիչը վերցնելով իր ջահէն խունկ ցանեց անոնց ճաշերուն վրայ։ Զահը շատ անսովոր տեսակ էր, վասն զի մէկ երկու անզամ, երբ բարկութեան խօսքեր փոխանակուեցան իրարու բախող կարգ մը ճաշակիրներու միջեւ, ջահէն քանի մը կաթիլ ջուր թափեց անոնց վրայ և անոնց բարեմտութիւնն ամսմիջապէս վերադարձաւ։ Վասն զի ըսին թէ ամօթէ կուուիլ ծնունդի օրով։ Եւ այնպէ՞ս է։ Ասուած սիրէ զայն։ այնպէ՞ս է։

Վերջապէս լուցին զանգակները և փակուեցան փուռերը։ Եւ սակայն այս բոլոր ճաշերուն և անոնց եփման հարազատ ստուերը կար իւրաքանչիւր փուռի վերեւ կուտակուող հալած խոնաւութեան մէջ։ իւրա-

քանչիւր փուռի, կ'ըսեմ, ուր գետնի քարայատակն իսկ կը ծխար, որպէս թէ քարերն ալ կ'եփէին:

«Ինչ որ ձեր ջահէն կը սրսկէք՝ մասնաւոր համ կամ բոյր ունի՞», «Հարցուց Սքրուճ»:

«Այս, իմ բայրու»:

«Կը յարմարի՞ այս օրուան ամէն տեսակ ձաշերուն», «Հարցուց Սքրուճ»:

«Սիրով տրուած ամէն ձաշի, մասնաւորապէս աղքատիկ ձաշի»:

«Ինչու մանաւանդ աղքատիկ ձաշի», «Հարցուց Սքրուճ»:

«Վասն զի այն ամէնէն շատ կը կարօտի անոր»; «Ողի», «ըստ Սքրուճ» վայրկեան մը մտածելէ ետեւ, «կը յարմանամ որ մեզ շրջապատղ բազմաթիւ աշխարհներուն բոլոր բնակիչներուն մէջէն դուք կ'ուզէք կրծատել այս մարդոց անոնեղ վայելքի պատեհութիւնները»:

«Ե՞ս, «գոչեց Ողին»:
«Կ'ուզէք ձաշելու իրենց միջոցներէն զրկել զանոնք եօթներորդ օրը, որ յաճախ միակ օրն է երբ կրնայ ըստիլ թէ կը ձաշեն անոնք», «ըստ Սքրուճ»:
«Զէ՞ք ուզեր»:

«Ե՞ս, «գոչեց Ողին»:
«Զէ՞ք ուզեր գուք եօթներորդ օրը փակել այս տեղերը», «Հարցուց Սքրուճ»: «Միեւնոյն բանն ըսել է»:
«Կ'ուզէմ», «գոչեց Ողին»:

«Եերեցէք ինծի, եթէ կը սխալիմ: Բուածս կատարուած է ձեր անունով, կամ գէթ ձեր ընտանիքին անունով», «ըստ Սքրուճ»:

«Այս ձեր երկրագունդին վրայ», «պատասխանեց Ողին», «ոմանք կան որ կը յաւակին մեզ զիտնալ, և իրենց կիրքի, հպարտութեան, չարակամութեան, աշ-

տելութեան, նախանձու, մոլեռանդութեան և անձնասովրութեան գործերը մեր անունով կը գործեն, և սակայն նոյնքան օտար են մեղի և բոլոր մեր ազգական ներուն որքան եթէ բնաւ գոյութիւն չունենային: Յիշէ այս կէտը և անոնց վերագրէ իրենց գործերը և ոչ թէ մեղի»:

Սքրուճ խոստացաւ և, ինչպէս առաջ նոյնպէս հիմա, անուես ըլլալով գացին քաղաքին արուարձանները: Ողիին նշանաւոր մէկ յատկութիւնը (զոր Սքրուճ դիտած էր փուռին առջև) սա էր որ հսկայական իր մեծութեան հակառակ կարող էր զիւրութեամբ հանգիստ ընկել ուեէ տեղ, և ցած տանիքի մը տակ նոյնքան չնորհալի կերպով ու գերբնական արարածի պէս կը կենար որքան կը կենար, կարելի է, ուեէ վսեմ դահլճի մէջ:

Եւ թերեւս իր այդ զօրութիւնը ցուցնելու համոյքին, կամ իր անձնական բարի, առատածենն ու սիրալիր բնութեան և բոլոր աղքատներու հանդէպ իր համակրութեան համար էր որ բարի Ողին գնաց ուղղակի Սքրուճի գրագրին տունը — վասն զի հան գնաց և իր հետ տարաւ Սքրուճը որ պարեգօտէն: բոնած էր — և զրան սեմին վրայ կեցաւ ժպտելով ու օրհնեց Պոպ Քրէչիթի բնակարանը՝ իր ջահէն սրսկելով: Մտածեցէք: Պոպ շարաթը տասնըհինգ «Առող» (*) միայն կ'առնէք: Շաբաթ օրեր կը գրապանէք միայն տասնըհինգ օրինակ իր Քրիստոնեայ անունէն: Եւ սակայն ներկայ Ծնունդի Ողին օրհնեց անոր չորս սենեակով տունը:

Ապա ելաւ կանգնեցաւ Քրէչիթի կինը Տիկին Քրէչիթ: Հազած էր պարզ շրջազգեստ մը երկու անգամ գարձուած, բայց զեղեցկացուած այնպիսի ժապա-

(*) Կրմատեալ ծեւ Ռոպը անուան, միանգամայն հասարակ անուն Անգղիական շիլինի:

Էնսերով որ աժան են և կէս շիլինի փոխարէն լաւ փայլ ու երեւոյթ կու տան։ Փռեց սեղանին ծածկոցն օգնութեամբ իր երկրորդ աղջկան, Պէլինտայի, որ ևս կը փայլէր իր ժապաւէնսերով։ Պատանին Փիթըր միսեց արտառաքաղը գետնախնձորի տապակին մէջ և բերանի տանելով ծայրերն իր շապիկի ահաղին օձիքին (որ Պոպի սեփականութիւնն էր և օրուան ի պատիւ անոր որդւոյն ու ժառանդին տրուած) ուրախայտ այսքան փառաւորապէս հագուած ըլլալուն համար և փափաքեցաւ իր շապիկը ցուցնել հանրային պարաէզներու մէջ ուր հարուստներ կը յաճախեն։ Քիչ յետոյ աւելի փոքր երկու տղայք, մին մանչ և միւսն աղջիկ, ներս խուժեցին ձչելով թէ իրենք փուռին դուրսի կողմը սազի խորովածի հոտ առին և խմացան թէ իրենցն է, և ախորժաբեր սոխի ու համեմի խորհուրդներով արբշն ական սեղանին շուրջ պարել և գովկելով մինչեւ երկինք բարձրացնել պատանին Փիթըր Քրէչիթ, մինչ ան (առանց հպարտանալու, թէեւ իր օձիքէն կը նեղուէր խեղդուելու աստիճան), կրակը կը փէքր մինչեւ զանդազ գետնախնձորները եռալով սկսան տապակի կափարչին զարնուիլ աղմուկով որպէս զի դուրս հանուին ու կեղեւուին։

«Ո՞ւր մնաց ձեր պատուական հայրը,» ըսաւ Տիկին Քրէչիթ, «և ո՞ւր ձեր եղբայրը թայնի թիմ։ Մարթա անցեալ Ծնունդին այսքան չուշացաւ։»

«Ահաւասիկ Մարթա, մայր,» ըսաւ աղջիկ մը ներս մտնելով։

«Ահաւասիկ Մարթա, մայր,» գոչեցին երկու պըզ-տիկները։ «Կեցցէ՛՛ Մարթա, սազ մը կա՞յ որ . . . ։»

«Ո՞չ, սիրելիս, ո՞րքան ուշացար,» ըսաւ Տիկին Քրէչիթ, տասն անգամ զայն համբուրելով և շալն ու պլխարկն հանելով եռանդուն մեծարանքով։

«Երէկ իրիկուն չատ գործ ունէինք լմացնելու,» պատասխանից աղջիկը, «և այս առաւօտ, մայր, պէտք էր գործատեղին մաքրել։»

«Լաւ։ Հոգ չէ, քանի որ եկար,» ըսաւ Տիկին Քրէչիթ։ «Կրակին առջև նստէ, սիրելիս, և տաքցիր։»

«Ոչ, ոչ։ Ահա հայրը կու գայ,» գոչեցին երկու պղտիկները, որ ամէն տեղ էին միշտ։ «Պահուէ, Մարթա, պահուէ,»

Մարթա պահուեցաւ, և ահա ներս մտաւ հայրը, փոքրահասակ Պոպ — իր առջև կախուող առ նուազն երեք ուսնաչափ շալով (առանց հաշուելու ծոպը) և վայելուչ երեւելու համար կարկտուած ու խոզանակուած պատառատուն հագուստով։ Ուսին վրայ թառած էր թայնի թիմ, որու ոտքերն, աւա՛զ, երկաթ յենակներ ունէին և որ պղտիկ անթացուպ մը կը կրէր։

«Վա՛յ, ո՞ւր է մեր Մարթան,» գոչեց Պոպ Քրէչիթ։ իր շուրջ նայելով։

«Զգայ պիտի,» պատասխանեց տիկինը։

«Զգա՛յ պիտի,» կրկնեց Պոպ, իր զուարթ տրամադրութիւնն յանկարծ փոխուելով, վասն զի եկեղեցիէն մինչեւ տուն թիմի նժոյզն եղած էր և որարշաւ ընթացած։ «Ծնունդի օրով չգա՛լ։»

Մարթա չէր սիրեր յուսախար ընել իր հայրը նոյն խոկ կատակի համար։ Ուստի անհամբեր զուրս ելաւ խցիկին վրան ետեւէն ու վազեց հօրը գիրկը, մինչ երկու պղտիկները փութով վերցուցին թայնի թիմը և տարին լուացարան, որպէս զի լոէ սանին մէջ եփող փութիսկին չիւնը։

Երբ Պոպ կարօտով համբուրեց իր գուստը, «է՞ս, ի՞նչպէս եղաւ թիմի վարմունքը, հանգարտ կեցա՞ւ,» հարցուց Տիկին Քրէչիթ՝ խնդալով ամուսինին գիւրահաւատութեան վրայ։

«Պատուական, և պատուականէն աւելի,» պատասխանէց Պոպ։ «Երբեմն առանձին նստելով շատ կը լըրջանայ և տարօրինակ բաներ կը մտածէ։ Տոն դալում ջողոցին ըստ թէ կը յուսայ որ եկեղեցին մէջ մարդկէ տեսան իր խեղանգամութիւնը և պիտի ուզեն յիշել Ծնունդի օրով զԱյն որ կազ մարդացիկներուն քաւել և կոյր մարդոց տեսնել կու տար։»

Պոպի ձայնը գողգոց երբ պատմեց զայս, և աւելի եւս երբ ըստ թէ Թայնի Թիմ հետզհետէ կը զօրանայ և կը սրտոտի։

Անոր ժիր անթացուպին ձայնն առնուեցաւ և ահա խկոյն Թիմ ետ եկաւ դէպի իր աթոռակը կրակին քով, ընկերակցութեամբ իր եղրօր ու քրոջ։ Պոպ վեր դարձնելով իր թեզանիքները — իրը թէ անսնք ընդունակ ըլլային աւելի աններկայանալի գառնալու — ամանի մը տաք խառնուրդին մէջ զիօղի և լեմն զրաւ և ուժով խառնելէ ետեւ կրակարանին առջեւ զետեղեց որպէս զի եռայ։ Եոյն միջոցին պատանին Փիթը և երկու ամենուրեք պղտիկները գացին սազը ըերել և չուտով բերին մեծ հանդիսաւորութեամբ։

Այնպիսի իրարանցում մը եղաւ որ պիտի կարծէիր թէ սազը թոյտններուն ամէնէն հազուագիւտն է — աննման փեարաւոր մը, որու քով հասարակ բան է ու կարապը։ Եւ արդարեւ սազը գրեթէ այսովիսի պատիւ կը վայելէր այդ տան մէջ։ Տիկին Քրէչիթ պղտիկ սանի մը մէջ նախապէս պղտրաստուած մսի հիւթը այն ստորհան տաքցուց որ սկսաւ չչել։ Պատանին Փիթը գետախննորդ ձզմեց անհաւատալի կորովով։ Օր Պէլիստա անուշցուց խնձորի համեմը։ Մարթա սրբեց տաք պնակները։ Պոպ Թայնի Թիմն իր քով առաւ սեղանին փոքր մէկ անկիւնը։ Երկու պղտիկներն ամէն անձի ամառ աթոռ գրին, չմոռնալով նաև իրենց աթոռները։

որոնց քով իբր պահապան հսկելով գգալ զրին իրենց բերանը, որպէս զի սագի համար չճշեն մինչեւ իրենց կարգը գայ բաժին առնելու։ Վերջապէս պնակները շարուեցան և սեղանն օրհնուեցաւ։ Խորին լուռթիւն յաջորդեց, երբ Տիկին Քրէչիթ երկար զանակը ծայրէ ծայր զննելով պղտրաստուեցաւ միսել սազին կուրծքը։ Բայց երբ միսեց ու դուրս թափեցաւ մէջի խճողուածը որու կ'սպասուէր անհամբերութեամբ, հրձուանքի մըրամունջ մը բարձրացաւ սեղանին ամէն կողմէն և Թայնի Թիմ անգամ, երկու պղտիկներէն զրգուուած, սկսաւ սեղանին զարնել գանակին կոթով և կեցցէ՝ աղաղակել տկար ձայնով։

Այսպիսի սազ տեսնուած չէր բնաւ։ Պոպ ըստ թէ չկարծեր որ երբեք այսպիսի սազ եփուած ըլլայ։ Անոր փափկութիւնն ու համեզութիւնը, մեծութիւնն ու աժանութիւնը, ընդհանուր սքանչացման նիւթ եղան։ Խնձորի համեմով ու ձնչուած գետախննորդով ձոխացած, բաւական ճաշ էր այն՝ ամբողջ ընտանիքին համար։ Սրդարեւ, ինչպէս Տիկին Քրէչիթ (պնակին վրայ սակրի մանր կառը մը զիտելով) ըստ մեծ հրձուանքով, վերջապէս ամբողջովին չկերան։ Սակայն և այնպէս ամէն ոք լիուլի բաժին ստացաւ և մանաւանդ պղտիկները սովի ու համեմի մէջ թաղուեցան մինչեւ իրենց յօնքերը։ Սրդ Օր Պէլինստա փոխեց պնակները և Տիկին Քրէչիթ առանձին — վասն զի ջղայնացած ըլլալով չէր կրնար վկայի հանդուրժել — ելաւ սենեակէն որ առնէ փուտինսկը և ներս բերէ։

Հապա եթէ եփած չըլլայ։ Եթէ կոտրի հանուելու ատեն։ Եթէ մէկը ետեւի գաւթին պատէն վեր ելւելով զողցած ըլլայ զայն, մինչ իրենք բարբառելով կը ճաշակէին սազը։ Այս ենթադրութիւնները լսելով

Երկու պղտիկները գունատեցան։ Ամէն տեսակ սարսափելի բաներ ենթադրուեցան։

Յանկարծ մհծաքանակ չողի երեւցաւ։ Փուտինկն հանուա՞ծ էր սանէն։ Այլազան բոյրեր եկան, նախ լուացքի, որու պատճառը լաթն էր։ Յետոյ յաջորդագրար ճաշարանի, անուշագործի և լուացարարուհիի աշխատանոցի բոյրեր։ Փուտինկն էր որ կը մօտենար։ Կէս բոպէն հասաւ Տիկին Քրէչիթ—այսերը կարմրած բայց ժպտուն։ Փուտինկը բերաւ թնդանօթի գնդակի ձեւով ու նոյնչափ կարծր և ամուր, վառ պլանափով համակ բոցավառ և զագաթը հոլիով զարդարուն։

Ի՞նչ զմայլելի փուտինկ։ Պոպ Քրէչիթ ըստ, և լրջորէն, թէ ինք կը համարի զայն ամենամեծ յաջողութիւնը զոր տիկինն ունեցաւ իրենց ամուսնութենէն ի վեր։ Տիկին Քրէչիթ ըստ թէ հիմա իր սիրտն հանգչեցաւ, վասն զի կը խստավլանի թէ կասկածներ ունէր ալիւրի քանակին մասին։ Ամէն ոք տեսակ մը զիտողութիւն ըրաւ անոր վրայ, բայց ոչ ոք ըստ կամ խորհեցաւ թէ փոքր փուտինկ էր այն՝ մհծ ընտանիքի մը համար։ Պարզ հերետիկոսութիւն պիտի ըլլար այդպէս ըսել կամ խորհիլ։ Ուէ Քրէչիթ պիտի ամշնար այդպիսի բան թելադրել։

Վերջապէս աւարտեցաւ ճաշը, վերցուեցաւ սեղանին լաթը, կրակարանը մաքրուեցաւ ու կրակն արծարծուեցաւ։ Ամանով խառնուրդին համը նայուեցաւ և կատարեալ հոչակուեցաւ։ Սեղանին վրայ խնձոր ու նարինջ դրուեցաւ, կրակին վրայ ալ թի մը շապանակ։ Ապա բոլոր ընտանիքը կրակին շուրջ հաւաքուեցաւ ընձանակի ձեւով, ինչպէս կ ըսէր Պոպ Քրէչիթ, փոխանակի ձեւով, ինչպէս կ ըսէր Պոպ Քրէչիթ, փոխանակ ըսելու կիսաշրջանակի ձեւով։ Եւ Պոպ Քրէչիթի թեւին քով ի ցոյց դրուեցաւ տան ապակեղէն ամբողջ մթերքը—երկու բաժակ և առանց կոթի թառ մը։

Ասոնք կ'ընդունէին սակայն ամանին տաք պարունակութիւնն այնչափ վայելչօրէն որչափ պիտի ընդունէին ոսկի բաժակներ։ Եւ Պոպ ճառագայթարձակ զէմքով կը մատուցանէր զայն իւրաքանչիւրին, մինչ շագանակները կրակին վրայ կը շէին ու կը ճարճատէին աղմուկով։ Ապա Պոպ բաժակ առաջարկեց սապէս։

«Ծնորհաւոր Ծնունդ ամէնուս ալ, սիրելիներս։ Աստուած օրհնէ՝ մեզ։»

Ամբողջ ընտանիքը կրկնեց այս բարեմաղթութիւնը։

«Աստուած օրհնէ ամէն մէկս,» ըստ Թայնի թիմ ամէնէն վերջը։

Ինք իր հօր շատ մօտ նստած էր իր աթոռակին վրայ։ Պոպ իր ձեռքին մէջ առաւ անոր մաշած փոքր րիկ ձեռքը, որպէս թէ սիրելով և ուզմելով զայն իր քով պահել ու վախնալով որ կը յափշտակուի իրմէ։

«Ոզի,» ըստ Սքրուճ՝ հետաքրքրութեամբ մը զոր երբեք չէր զգացած, «ըսէ ինծի թէ պիտի ապրի Թայնի թիմ։»

«Պարապ աթոռ մը կը տեսնեմ,» պատասխանեց Ռոզին, «իմեղն վառարանին անկիւնը և առանց տէրոջ անթացուպ մը խնամով պահուած։ Եթէ ապագան անփոփոխ թողու այս ստուերները, տղան կը մեռնի։» Ոչ, ոչ, աղնիւ Ոզի, ըսէ թէ պիտի ինայուի։»

«Եթէ ապագան անփոփոխ թողու այս ստուերները,» պատասխանեց Ռոզին, «իմ ցեղէս ոչ ոք պիտի գտնէ զայն հոս։ Բայց քեզի ի՞նչ։ Եթէ ան պիտի մեռնի, աղէկ է որ մեռնի և պակսեցնէ աւելորդ բնակչներու թիւը։»

Սքրուճ իր գլուխը կախեց՝ իր իսկ խօսքին կըրկ-

նուուը լսելով և զղջմամբ ու վշտով ընկճուեցաւ։
 «Մարդ,» ըստ Ագին, «Եթէ մարդ ես սրտով և
 ոչ քար կամ ապառաժ, հրաժարէ այդ ամբարիշտ խօս-
 քէն մինչեւ հասկնաս թէ ի՞նչ է աւելորդը և Ո՛ւր։
 Կ'ուղե՞ս վճռել թէ ո՛ր մարդիկ ապրելու են և ո՛ր
 մարդիկ մեռնելու են։ Երկինքի առջեւ թերեւս զուն
 ապրելու աւելի անարժան ու նուազ յարմար ես քան
 այդ խեղձ մարդուն զաւկին նման միլիոնաւորներ։
 Աստուած իմ, ի՞նչ լրբութիւն որ տերեւին վրայ կե-
 ցող Միջատը գանգատի թէ չափազանց երկար կ'ապրին
 իր անօթի եղբայրները։»

Սքրուծ ծոեցաւ Ոգին յանդիմանութեան առջեւ
 ու դողալով գետնին վրայ ուղղեց իր աչքերը։ Բայց
 շուտով վեր առաւ զանոնք երբ իր անունը լսեց։

«Պ. Սքրուծ,» ըստ Պոպ։ «Կ'առաջարկեմ խմել
 Պ. Սքրուծի, Խնձոյքին Հիմնադրին, կենացը։»

«Խնձոյքին Հիմնադրին, իրաւ,» ազաղակեց Տիկին
 Քրէչիթ կարմրելով։ «Երանի՛ թէ հոս ըլլար։ Կու-
 տացի ես անոր զաղափար մը թէ ի՞նչ համարում ու-
 նիմ իր վրայ և երթար ըմբոշխնէր զայն, կարծեմ ա-
 ղէկ ալ ախորժակով։»

«Սիրելիս,» ըստ Պոպ, «տղաք կան և Ծնունդի
 Օր է։»

«Ծնունդի Օր ըլլալու է, անշուշտ,» ըստ կինը,
 «այն օրը երբ մարդ կը խմէ Պ. Սքրուծի նման զար-
 չելի, կծծի, կարծրասիրու ու անզզայ արարածի մը կե-
 նացը։ Գիտես թէ այսպէս է ինք, Ռոպը թէ Ոչ ոք քե-
 զի չափ զիտէ զայս, խեղձ մարդ։»

«Սիրելիս,» կրկնեց Պոպ զարձեալ քաղցրութիւնը,
 «Ծնունդի օր է։»

«Անոր կենացը պիտի խմեմ քու և Օրուան սի-
 րոյն,» ըստ Տիկին Քրէչիթ, «ոչ թէ անոր։ Երկար՝

կեանք ուրեմն անոր։ Ծնորհաւոր ծնունդ և երջանիկ
 Նոր Տարի։ Շատ ուրախ և շատ երջանիկ պիտի ըլլայ
 անուարակոյս։»

Տղայք խմեցին ալիկինէն ետքը։ Այդ եղաւ իրենց
 գործերուն առաջինը, որու մէջ սիրտ չկար։ Թայնի
 թիմ ամէնէն վերջը խմեց, բայց առանց ուեկ կարե-
 ւորութիւն տալու։ Սքրուծ՝ ընտանիքին ձիւազն էր։
 Անոր անուան յիշատակումը մութ ստուեր մը ձգեց ա-
 մէնուն վրայ, և ստուերն հինգ վայրկեանէն հազիւ
 փարատեցաւ։

Փարատելէն ետեւ տասնապատիկ աւելի զուարթա-
 ցան ատելի Սքրուծի խորհուրդէն ազատուելով։ Պոպ
 Քրէչիթ պատմեց թէ պատանի Փիթըրի համար աչքի
 առջև ունի պաշտօն մը, որ չաբաթը լման հինգուկէս
 կը բերէ, ևթէ ձեռք բերուի։ Երկու պղտիկու-
 չիլին կը բերէ, ևթէ ձեռք բերուի։ Փիթըրի գործի մարդ գառնալու
 ըստ սաստիկ խնդացին Փիթըրի գործի մարդ զառնալու-
 այս զաղափարը լսելով։ Փիթըր ինք ալ մտածկոտու-
 ծեամբ կրակին նայեցաւ իր օձիքին մէջտեղէն, կար-
 ծես մտածելով թէ ի՞նչ մասնաւոր շահարկութիւններու-
 նիմ իր վրայ և երթար ըմբոշխնէր զայն, կարծեմ ա-
 ղէկ ախորժակով։»

սկսաւ. ձիւնի մէջ ճամբորդող ու կորսուող աղու մը վրայ, և շատ ալ լաւ երգեց :

Նշանաւոր բան մը չունէր այս ընտանիքը։ Զքնաղ
մարդկի չէին, լաւ չէին հագուեր։ Անոնց ոտնաման-
ներն անջրանցոյց ըլլալէ հեռու էին, իսկ հագուստն աղ-
քատիկ ու անբաւական էր։ Կարելի է, և շատ ալ հաւա-
նական, որ Փիթը տեսած էր ու գիտէր թէ ի՞նչ տե-
սակ բան է զրաւի փոխարէն զրամ փոխ տուողի մը գրա-
սենեակը։ Սակայն երջանիկ ու գոն էին, կը սիրէին
զիրար և չէին տրտնջեր ժամանակէն։ Եւ երբ հետզհետէ
կ'անյայտանային. ու աւելի երջանիկ կը թուէին Ոգիին
չահին հրաժեշտի պայծառ սրակումներուն մէջ, Սքրուճ
մինչեւ վերջը իր աչքը չբաժնեց անոնցմէ և մահաւանդ
թայնի թիմէ։

Հիմա մթնած էր և բաւական սաստիկ կը ձիւնէր։
Մինչ Սքրուլ ու Ոգին կ'անցնէին փողոցներէն, խոհա-
նոցներու, հիւրանոցներու և ամէն տեսակ սենեակնե-
րու ճարծատուն կրակներուն փայլը զարմանալի էր։
Հոս բոցին երերումը ցոյց կու տար տաքուկ ճաշի մը
պատրաստութիւններ կրակին առջև կատարելապէս և
փող պնակներով և մութ կարմիր վարագոյրներ
գոցուելու պատրաստ, որպէս զի մուտք չտան ցուրտին
ու խաւարին։ Հոն տան բոլոր տղայք դուրս կը խու-
ժէին ձիւնին մէջ, որպէս զի ընդ առաջ երթան իրենց
ամուսնացեալ քոյրերուն, եղբայրներուն, հօրեղբայր-
ներուն, մօրաքոյրներուն ու անոնց զաւակներուն և
առաջինն ըլլան զանոնք ողջունող։ Հոս, զարձեալ,
կ'երեւէին ժողովուող հիւրերու ստուերներ պատուհանի
ներքին փեղկերուն վրայ։ Հոն խումբ մը գեղանի աղ-
իկներ, ամէնը կնզդաւոր և մուշտակապատ կօշիկնե-
րով, գրացի տուն մը կ'երթային թեթեւ քայլերով և
ամէնը միանգամայն անդուլ խօսակցելով, և վա՛յ այն

ամուրին որ — նենգաւոր կախարդուհիները լաւ գիտէին զայս — հոն տեսնէք զիրենք մինչ կը մտնէին գունավառ երեսներով :

Բայց եթէ բարեկամական հաւաքոյթներու զացող
մարդոց թիւէն դատէիք, պիտի կարծէիք թէ տունե-
րու մէջ ոչ ոք մնաց եկողներն հիւրընկալող, փոխա-
նակ ամէն տուն հիւրի սպասելու և վառարանին մէջ
կրակը բրգաձեւ դիմելու: Օրհնեալ ըլլայ Ոգին: Ո՞ր-
քան կը հրճուէր: Ո՞րքան կը մերկացնէր իր լայն կուրծ-
քը, կը բանար իր ընդարձակ ափը և կը սաւառնէր
ամէն բանի վրայ առատաձեռնօրէն տեղալով իր ճոխ
ու անվաս ցնծութիւնը: Լամբար վառողն իսկ, որ
վագելով կը կէտկիտէր մոայլ փողոցը լոյսի նիշերով և
որ հագուած էր՝ երեկոյին տեղ մը այցելու նպատա-
կով, բարձրաձայն խնդաց երբ Ոգին անցաւ — թէեւ
զաղափար չունէր թէ ինք ծնունդէ զատ ուրիշ ընկեր
ունէր:

Եւ արդ, առանց Ոգիկն կողմէ ուեէ ազգաբարու-
թեան, կայնեցան անոնք ամայի ու ախուր դաշտի մը
վրայ, ուր կոչտ քարի ահագին զանգուածներ կային
ցիրուցան, իբր թէ հսկաներու գերեզմանատուն ըլլար
այն, և ջուրը կը ծաւալէր ուր և ուզէր —կամ պիտի
ծաւալէր, եթէ սառը զայն չկալանաւորէր — և ուր ո-
չինչ կը բուսնէր բաց ի մամուռէ և ցախէ ու անպի-
տան և վայրի խոտերէ։ Արեւմուտքի կողմը մարը
մտնող արեւն հրավառ կարմիր գիծ մը թողած էր, որ
վայրկեան մը ամայութեան վրայ չողաց խոժոռ աչքի
մը նման և հետզհետէ աւելի խոժոռելով իջաւ, իջաւ
ու կորսուեցաւ ամենամութ գիշերուան մը թանձր խա-
ւարին մէջ։

«ի՞նչ տեղ է այս ,» հարցուց Սքրուժ :

«Տեղ մը ուր Հանքագործներ կը բնակին, որոնք

Կրկի ընդեռքին մէջ կ'աշխատին, » պատասխանեց Ուգին: «Բայց կը ձանչնան զիս, նայէ: »

Լոյս մը շողաց տնակի մը պատուհանէն, և խկոյն դէպ հոն յառաջացան: Ցեխով ու քարով շինուած պատին մէջէն անցնելով զւարթ խումբ մը գտան բոցավառ կրակին շուրջ հաւաքուած — ծերուկ մարդ մը և կին մը իրենց զաւակներով ու իրենց զաւակներուն զաւակներով, և դեռ ատկէ անդին ուրիշ սերունդով մը, ամէնն ալ զուարթօրէն իրենց տօնական զգեստով հագուած: Ծերուկը Ծնունդի երգ մը կ'երգէր այնպիսի ձայնով, որ քիչ անդամ աւելի բարձր կ'ելլէր քան անբեր դաշտին վրայ փշող քամիին մռնչիւնը: Երգը շատ հին էր արդէն անոր տպայութեան ժամանակ, և խումբը մերթ ընդ մերթ ծերուկին կը ձայնակցէր խմբերգին մէջ: Երբ անոնք իրենց ձայները բարձրացնէին, ծերուկն ալ կ'ոգեւորուէր ու կը բարձրացնէր իր ձայնը, և երբ դադրէին, անոր ալ խանդը կը նուազէր:

Ոգին հոս ցամեցաւ, այլ Սքրուճի պատուիրեց բոնել իր պարեզօտը և դաշտին վերեւէն սաւառնելով սուրաց: Դէպ ո՞ւր: Ո՞չ դէպ ի ծով: Դէպ ի ծով: Սքրուճ դէպ ի ետ նայելով տեսաւ սարսափով վերջին մասը ցամաքին, ապառաժի անոելի գոտի մը, և իր ականչները խլացան ջուրի զոռումէն, ջուրի՝ որ կը թաւալէր, կը թաւալէր ու կը մռնէր ահաւոր անդունդներու մէջ զոր ինք պեղած էր և կը ջանար կատաղօրէն երկրի հիմերը պեղել:

Մովագիէն, զոր ջուրերն անդադար կը կոծէին ու կը փշրէին ատրին ի բուն, մէկ երկու փարսախ հեռու ջրամոյն ժայռերու տիլուր խարակի մը վրայ փարսու մը կար մենաւոր: Սէզի ահապին զէզեր կառչած էին անոր խարսին, և փոթորկի թոչուններ — որ կրնան հովի ճնունդ կարծուիլ, ինչպէս սէզը ջուրի — կ'ելլէին ու

կ'իջնէին անոր շուրջ, նման ալիքներուն որոնց վերեւ կը թևէին:

Բայց հոգ խակ լոյսին հոկող երկու մարդիկ կրակ մը վառած էին, որ քարէ թանձր պատին փոքր լուսամուտչն պայծառ շող մը կ'արձակէր ահաւոր ծովուն վրայ: Անշուր սեղանին վրայ ուր նստած էին՝ իրարու կարծր ձեռք սեղմելով Ուրախ Ծնունդ մաղթեցին իրարու իրենց զրովի զաւաթներով: Եւ մին, որ մեծն էր, խիստ զոերէն բոլորովին աւերուած ու տգեղցած իր դէմոզի կ'աւերի ու կը տգեղնայ հին նաւու մը քով, ինչպէս կ'աւերի ու կը տգեղնայ հին նաւու մը նաւանշանը, սկսաւ կորովի երգ մը, որ ինքնին մրրկի կը նմանէր:

Դարձեալ սաւառնեցաւ Ողին սեւ ու ուռող ծովուն վերեւ մինչեւ ամէն ափէ հեռանալով, ինչպէս ըստ Սքրուճի, իջան նաւու մը վրայ: Կեցան զեկավարին, նաւազլիսի դէտին, հոկող պաշտօնեաներուն քով — անաւազլիսի դէտին, հոկող պաշտօնեան զէմքեր իրենց յատուկ մէնն ալ մոայլ, ուրուական զէմքեր իրենց յատուկ վայրերուն մէջ — բայց ամէնն ալ առանց բացառութեան Ծնունդի եղանակ մը կը մրմնչէին, Ծնունդի խորհուրդ մը ունէին, կամ ընկերոջ մը կը խօսէին ցած ձայնով անցեալ Ծնունդի մը վրայ, այդպիսի առիթով մը տուն վերագարձի յոյսերով: Եւ նաւին մէջ գտնուող ամէն մարդ, արթուն թէ քուն, բարի թէ չար, իր ընկերոջ համար աւելի ազնիւ խօսք մը ունեցած էր այդ օրը քան անսոր ուրախութիւններուն, յիշած էր հեռաւոր իր սիրելիները և զգացած էր թէ անոնց հաճոյք էր զինք յիշել:

Մեծ անակնկալ մը եղաւ Սքրուճի, մինչ ինք հովին հեծիւնին մտիկ կ'ընէր և կը մտածէր թէ ինչ աշխատ աւոր բան է լուս խաւարի մէջ ձամբորդել անդունդի հաւոր բան, որու խորութիւնը Մահու չափ խորին զաղտմը վրայ, որու խորութիւնը Մահու չափ խորին զաղտմը վրայ, որու խորութիւնը Մահու չափ այսպէս նիք էր — մէծ անակնկալ մը եղաւ Սքրուճի, մինչ այսպէս

զբաղ էր, սրտագին քահքան մը լսել: Աւելի մեծ անաշկընկալ մը եղաւ Սքրուճի գիտնալ թէ խնդացողն իր քեռորդին էր, և գտնել ինքզինք պայծառ, չոր, փայլուն սենեակի մը մէջ, իր քով ունենալով Ոգին որ կայնած կը ժպտէր և ինք այն նոյն քեռորդին կը նայէր հաճութեամբ ու գորովով:

Քահքան կը խնդար Սքրուճի քեռորդին:

Եթէ պատահի որ անհաւանական դիմուածով մը ձանչնաք մէկը որ խնդալու պահուն աւելի երջանիկ կ'ըլլայ քան Սքրուճի քեռորդին, բոլոր ըսելիքս սա է որ ես ալ կ'ուզեմ զայն ձանչնալ: Խնծի ներկայացուցէք և բարեկամութիւն պիտի մշակեմ անոր հետ:

Թէև ախտն ու վիշտը վարակիչ են, իրերու բանաւոր, արդար և ազնուական դասաւորմամբ մը աշխարհի մէջ չկայ բան մը, այնքան անդիմադրելիօրէն փոխանցիկ որքան ծիծաղն ու զուարթ տրամադրութիւնը: Երբ Սքրուճի քեռորդին այսպէս խնդաց, կողերը բոնելով, գլուխը երերջնելով և դէմքն ամենատարօրինակ ծամածութիւններու եթնարկելով, կինու ալ խնդաց անոր պէս բոլոր սրտով: Եւ իրենց սիրելիները, մէկտեղ հաւաքուած, երբեք ետ չմնացին անոնցմէ և որոտածայն խնդացին:

«Բայս թէ Ծնունդը խաբէութիւն է, կ'երդնում,» զուեց Սքրուճի քեռորդին: «Եւ կը հաւատար ալ իր խօսքին:»

«Աւելի ամօթ իրեն, Ֆրէտ,» ըսաւ կինը բարկութեամբ: Օրհնեալ ըլլան կիները անոնք երբեք տարակոյսով կամ թերահաւատութեամբ չեն զործեր: Միշտ անկեղծ ու եռանդուն են:

Տիկինը շատ գեղեցիկ էր— վերին աստիճան գեղեցիկ: Ունէր առաջնակարգ դէմք մը փոսիկով և զարմացական երեւոյթով, հասուն փոքրիկ բերան մը որ կարծես:

Համբուրուելու համար շինուած էր, ինչպէս էր անտարկոյս, ծնուաին վրայ ամէն տեսակ աղուոր մանրիկ կէտեր որոնք իրարու մէջ կը հալէին երբ խնդար, և արեւափայլ զոյգ մը աչք որոնց նմանը հազիւ տեսած էք ուէ փոքր արարածի վրայ: Ամէն բան ի նկատ առներով, պիտի կոչէք զինք, գիտէք, գրգոիչ բայց նաև գոհացուցիչ, ո՛հ, կատարելապէս գոհացուցիչ:

«Ծիծաղելի մարդ է,» ըսաւ Սքրուճի քեռորդին, «այս է ձշմարտութիւնը: Եւ ոչ այնքան հաճելի որքան կրնար ըլլալ: Սակայն անոր յանցանքներն իրենց հետ կը կրնար պատիմները, ուստի ես ոչինչ կ'ըսեմ անոր դէմ:»

«Անշուշտ շատ հարուստ է,» թելադրեց տիկինը: «Գէթ միշտ այդպէս կ'ըսես ինձի:»

«Ատկէ ի՞նչ կ'ելլէ, սիրելիս,» ըսաւ Սքրուճի քեռորդին: «Անոր հարստութիւնն օգուտ մը չունի առնոր: Ուեէ բարիք չըներ անով: Ուեէ հանգիստ ու դիւրութիւն չվայելիք անով: Մտածելու գոհունակութիւնը չունի բնաւ — քա՛հ, քա՛հ, քա՛հ — թէ օր մը ինք Մեղի բարիք պիտի ընէ անով:»

«Ես չեմ կրնար համբերել անոր,» ըսաւ տիկինը: Տիկնով քոյրերը և բոլոր միւս տիկինները նոյն կարծիքն յայտնեցին:

«Ես կը համբերեմ,» պատասխանեց Սքրուճի քեռորդին: «Ես կը ցաւիմ անոր համար: Չեմ կրնար բարկանալ անոր, նոյն իսկ եթէ ջանամ: Ո՞վ կը տուշականալ անոր, ինչ գաղափարներէն: Ինք միշտ: Ահա ինք մէ իր խենդ գաղափարներէն: Ինք միշտ: Ահա ինք կ'որոշէ մեզ չսիրել, և չգար մեզի հետ ճաշել: Ի՞նչ կ'որոշէ մեզ չսիրել, և չգար մեզի հետ ճաշել: Կ'ըլլայ հետեւանքը: Մեծ ձաշ մը չէ որ կը կորսնցնէ:»

«Արդարեւ, շատ լաւ ձաշ մը կը կորսնցնէ, կարծեմ,» ընդմիջեց տիկինը: Նոյնը կրկնեց նաև ամէն ոք, և պէտք է ընդունիլ թէ ձեռնհաս դատաւորներ էին ապէտք:

մէնն ալ, վասն զի դեռ նոր ճաշած էին։ Աղանդերը սեղանին վրայ կը մնար և իրենք կրակին շուրջ խմբուած էին լամբարին լուսով։

«Ե՞ն, ուրախ եմ որ այդպէս կ'ըսէք,» ըստ Սքրու-
չի քեռորդին, «վասն զի ես մեծ հաւատք չունիմ այս
որ տանտիկիններուն վրայ։ Դուք ի՞նչ կ'ըսէք, թու-
փոր։»

Թոփքը աչքը որոց խածած էր Սքրուճի քեռ-
որդւոյն քենիներէն մէկը, վասն զի պատասխանեց թէ
ամուրի մարդ մը բնաւ իրաւունք չունի այդ նիւթին
վրայ կարծիք յայտնելու։ Այն ժամանակ Սքրուճի
քեռորդւոյն քենին — գիրուկը որու լանջը ժանեկա-
զարդ էր, և ոչ այն որ վարդեր կը կրէր — , ինեւցաւ։

«Ճարունակէ, Ֆրէտ,» ըստ տիկինը ծափ զար-
նելով: «Երբեք լմացներ ինչ որ կ'սկսի ըսել: Ծիծա-
ղելի մարդ է:»

Սքրուճի քեռորդին ուրիշ քահքան մը սկսաւ :
Եւ որովհետեւ անկարելի էր վարակումը խափանել —
թէև գիրուկ քենին շատ աշխատեցաւ խափանել բու-
րումնալից թաշկինակն հոտոտելով — ամէն ոք քահ-
քանին միացաւ :

«Պիտի ըսէի միայն,» ըսաւ Սքրուձի քեռորդին,
«թէ անոր մեզ չփրելուն և մեզի հետ չուրախանալուն
հետեւանքը սա է, կը կարծեմ, որ կը կորսնցնէ հաճե-
լի քանի մը վայրկեան, որոնք ունէ վեա չէին կրնար
տալ իրեն։ Վատահ եմ թէ կը կորսնցնէ ընկերակցու-
թիւն մը աւելի հաճելի քան այն զոր կարող է ունե-
նալ իր անձնական խորհուրդներուն հետ՝ բորբոսեալ
իր գրասենեակին թէ փոշելից իր սենեակներուն մէջ։
Իմ օրոշումս է ամէն տարի նոյն պատեհութիւնը տալ
անոր, սիրէ՛ թէ չփրէ, վասն զի կը խոշճամ անոր
վրայ։ Կրնայ ծաղրել Ծնունդը մինչեւ մեռնի ինք,

բայց չկրնար լաւ համարում չունենալ անոր վրայ —
ասպարէզ կը կարդամ անոր — եթէ տեսնէ թէ ես տար-
ուէ տարի բարի տրամադրութեամբ իրեն կ'երթամ ու
կ'ըսեմ, Մօրեալբայր Սքրուճ, ի՞նչպէս էք: Եթէ այս
սոսկ տրամադիր ընէ զինք յիսուն սոսկի թողուլ իր
խեզ գրագրին, շահ մ'է: Եւ կարծեմ ուստիցի զինք
երէկ ։

Հիմա անոնց կարգն էր խնդալ՝ Սքրուճը սարած
ըլլալու այս գաղափարին վրայ։ Բայց բնութեամբ կա-
տարելապէս բարի ըլլալով և բնաւ հոգ չընելով թէ
ի՞նչ բանի վրայ կը խնդան, կը բաւէ որ խնդան,
քաջալերեց զանոնք խնդալ և միշտ պաըտցուց խնդու-
թեամբ։

Թէյէ ետքը նուագ ունեցան : Վասն զի երաժիշտ
ընտանիք էին և զիտէին թէ ի՞նչ կ'ընեն, կը վստահա-
ցնեմձեզ, երբ եռաձայն ցնծերգ կամ փոփոխ երգ երգէին :
Մանաւանդ թոփը, որ կրնար լաւ բամբ երգել առանց-
ճակտին խոշոր երակներն ուղեցնելու կամ երեսը կար-
մըրցնելու : Սքրուճի քեռորդւոյն կինը լաւ քնարահար-
էր, և ուրիշ եղանակներէ զատ կը նուագէր պարզուկ-
եղանակ մը (այնքան կարճ որ կրնայիք զայն սուլել սոր-
վիլ երկու վայրկեանէն), որ ծանօթ էր Սքրուճը գիշերօ-
թիկ զպրոցէն բերող ազշկան, ինչպէս յիշեց Սքրուճ ան-
ցեալ Ծնունդի Ոզիին դրդմամբ : Երբ այդ եղանակն հնչեց,
Ռզիին ձեռամբ ցուցուած բոլոր բաներն անոր միուքն-
եկան : Հետզհետէ զզածուեցաւ ու մտածեց թէ տարի-
ներ առաջ, եթէ յաձախ լսէր այդ եղանակը, կրնար իր
խակ ձեռամբ մշակած ըլլալ կեանքի քաղցրութիւնները
իսկ իսկ երջանկութեան համար, առանց դիմելու ժամ-
եւուց, առաջ են որ ձէւքքայ Մարլին թաղեց :

տղայ ըլլալ, մանաւանդ Ծնուռդի Տօնին, երբ անոր ամենակալ Հիմնադիրն ինք մանկացաւ: Կեցէք: Նախ ավագուկ խաղացուեցաւ: Հարկաւ: Եւ ինձի աւելի զրժուար է հաւատալ թէ Թոփըրի աչքերն իրապէս կապուած էին քան հաւատալ թէ անոր ոտքերն աչք ունէին: Իմ կարծիքս սա է թէ քանը կարգադրուած էր անոր ու Սքրուճի քեռորդւոյն միջեւ, և թէ Ներկայ Ծնուռդի Ոգին գիտէր: Կերպը որով Թոփըր հետապնդեց ժանեկազարդ լանջով գիրուկ քենին՝ թշնամանք էր մարդկային քնութեան գիրահաւատանութեան դէմ: Վառարանի թին, ունելին և ակիշը տապակելով, աթուներուն վրայ գլորելով, գաշնակին զարնուելով, վարագոյրներուն մէջ խեղդուելով կ'երթար ուր օրիորդը կ'երթար: Միշտ գիտէր թէ ուր էր գիրուկ քենին: Ուրիշ անձ չէր ուզեր բըռնել: Եթէ անոր առջեւ զայիք, ինչպէս ոմանք եկան, և կենայիք հոն, ձեզ բոնելու կեղծ ձեւ մը կ'առնէր, որ նախատինք էր ձեր խելքին, և խսկյն զառնալով կը դմէր դէպի գիրուկ քենին: Օրիորդն յաճախ կը պոռար թէ ուզիզ չէ այս, և ուզիզ չէր արդարեւ: Բայց երբ վերջապէս բռնեց—երբ, իրմէ խուսափող մետաքսեայ զգեստի շրջիւնին և արագ ոսասսութներուն հակառակ, փակեց զայն անկիւնի մը մէջ ուրիէ փախչիլ անհնար էր—այն ժամանակ պարոնին ընթացքը ամենանողկալի եղաւ: Վասն զի անսարդ և ճիւազային քան էր անոր կեղծիքը թէ չէր ճանչնար զայն, թէ անհրաժեշտ էր անոր զլիսանցը չօշափել և անոր ինքնութեան մասին աւելի ապահով ըլլալ՝ մատանի մը գնելով անոր մատը և շղթայ մը անոր վիզը: Տարակոյս չկայ թէ օրիորդն այս մասին իր կարծիքն յայտնեց անոր, երբ ուրիշ երիտասարդ մը ստանձնեց անոր գերը և ինք շատ մտերամբար շարժեցաւ անոր հետ վարագոյրներուն ետին: Սքրուճի քեռորդւոյն կինը չմասնակցեցաւ այս

խաղին, այլ հանգիստ ըրաւ խոշոր աթոռի մը վրայ բազմելով և ոտքերը պատուանդանի մը վրայ գնելով աղուորիկ անկիւն մը, ուր Ոգին ու Սքրուճ ճիշտ իր ետին կեցած էին: Սակայն մասնակցեցաւ տուժախաղին, և իր սիրելին սքանչելիուէն սիրեց այբուբենի բոլոր գիրերով: Նմանապէս շատ յաջող էր ի՞նչպէս, Ե՞րբ, և Ո՞ւր խաղին մէջ և գաղտնի հաճոյք պատճառելով Սքրուճի քեռորդւոյն՝ չարաչար յաղթեց իր քոյրերուն —թէն սրամիտ ալ աղջիկներ էին, ինչպէս կրնայ Թոփըր ձեղի վկայել: Թերեւս քան հոգի կային հոն մնձ ու փոքր: Բայց ամէնն ալ խաղացին, նմանապէս Սքրուճ: Վասն զի խաղին զրգախ ազգեցութեան տակ, բոլորովին մոռնալով թէ իր ձայնն անլսելի է անոնց ականջներուն, երբեմն բարձրածայն յայտնեց իր կարծիքը, որ շատ անգամ ալ ուզիզ կ'ըլլար — վասն զի ամենասուր ասեղը, որու ծակը թել չփարեր երբեք, աւելի սուր չէր քան Սքրուճ, թէն ինք նախընտրած էր բթամտի պէս ապրիլ:

Ոգին շատ ախորժեցաւ այս տրամադրութեան մէջ գտնելով զայն և այնպիսի համակրութեամբ նայեցաւ որ Սքրուճ աղու մը պէս աղաչեց որ սպասեն մինչեւ հիւրերուն մեկնումը: Սակայն Ոգին ըստ թէ անկարելի է:

«Ահա նոր խազ մը,» ըստ Սքրուճ: «Կէ՛ս ժամ, Ոգի, միայն կէ՛ս ժամ:»

Եղալը կը կոչուէր Այս և Ոչ: Սքրուճի քեռորդին քան մը պիտի պահէր միտքը և միւսները պիտի զըտնէին հարցումներով, որոնց ինք պիտի պատասխանէր միայն այս կամ ոչ: Հարցումներու բուռն տարափը որու ենթարկուեցաւ ան՝ ի վեր հանեց թէ միտքը պահած էր կենդանի մը, ողջ կենդանի մը, յաւէտ անհանոյ, վայրենի, որ կը մոնէ, կը խանչէ երբեմն, կը

խօսի երբեմն և կը բնակի լոնտոն, կը պարտի փողոցները և չցուցադրուիր, սանձով կամ երասանակով չըկառավարուիր, կենդանական բուծարանի կամ մարդարանի մէջ չպահուիր, բնաւ չմորթուիր շուկային մէջ, ձիչէ, էշչէ, կովչէ, ցուլչէ, վագրչէ, շունչէ, խողչէ, կատուչէ և արջչէ: Ամէն նոր հարցման՝ այս քեռորդին կը պատասխանէր քահքահի նոր որոտով, և այնքան թուլցան անոր ջղղերը որ ստիպուեցաւ բազմոցէն ելլել և զետինը դրիել ոտքով: Վերջապէս գիրուկ քենին նոյն և նման վիճակի մը ենթարկուելով գոչեց.

«Գտա՛յ: Ես գիտեմ թէ ի՞նչ է, Ֆրէտ: Գիտեմ թէ ի՞նչ է:»

«Ի՞նչ է,» գոչեց Ֆրէտ:

«Քու Սքրուճ Մօրեղբայրութիւնը:»

Եւ այն էր: Հիացում եղաւ ընդհանուր զգացումը, թէեւ առարկողներ եղան թէ «Ա՞րջ է» հարցման պատասխանն «այս» ըլլալու էր, վասն զի բացասական պատասխանը կը բաւէր իրենց մտածութերն հեռացնել Սքրուճէ, ենթադրելով թէ մին հակամէտ ըլլար անոր վրայ խորհիլ:

«Առատ զուարձութիւն հայթայթեց մեզի,» ըստ Ֆրէտ, «և ապերախտութիւն պիտի ըլլայ անոր կենացը չխմել: Ահաւասիկ պատրաստ բաժակ մը: Կ'առաջարկեմ Մօրեղբայր Սքրուճի կենացը:»

«Մօրեղբայր Սքրուճ,» աղաղակեցին ամէնը:»

«Ծնորհաւոր Ծնունդ և երջանիկ նոր Տարի մեր ծերուկին, ուր ալ ըլլայ,» ըստ Սքրուճի քեռորդին: «Ինք պիտի չհաւանէր ընդունիլ ինչմէտ, բայց և այնպէս կը մաղթեմ որ ունենայ: Մօրեղբայր Սքրուճ:»

Մօրեղբայր Սքրուճ ամնչմարելի կերպով այնքան դուարթացած և ուրախ էր որ ինք եւս պիտի առաջարկէր փոխադարձաբար խմել անդիտակից խումբին

կենաց և անլսելի ձտռով մը չնորհակալութիւն յայտնել անոնց, եթէ Ոգին ժամանակ տար: Բայց ամբողջ տեսլին անհետացաւ քեռորդւոյն վերջին խօսքին շունչին հետ, և ինք ու Ոգին վերստին ճամբորդութեան մէջ էին:

Շատ բան տեսան, շատ հեռու գացին և շատ տուն այցելեցին, բայց միշտ երջանիկ վերջաւորութեամբ: Ոգին կը կենար հիւանդներու սնարին քով և անոնք կ'սփոփուէին, օտարապնակներու վրայ և անոնք հայրենիքի մէջ կ'զգացին իրենք դիրենք, չարաչար աշխատողներու քով և անոնք համբերատար կը գառնային իրենց մեծագոյն յուսով, աղքատութեան քով և այն կը հարստանար: Աղքատանոցի, հիւանդանոցի, բանտի և թշուառութեան ամէն բոյնի մէջ, ուր իր փոքր ու կարծատեւ հեղինակութեամբ պարծող մարդը գուռն ամուր փակած և Ոգին գուրս թողած չէր, ան իր օրհնութիւնը կը թողուր և Սքրուճի կը սորվեցնէր իր սկզբանքները:

Երկար գիշեր էր այն, եթէ միայն մէկ գիշեր էր: Բայց Սքրուճ իր տարակոյններն ունէր այդ մասին, վասն զի Ծնունդի արձակուրդը խտացած թուեցաւ այն ժամերուն մէջ զորս ի միասին անցուցին: Զարմանալի էր նաեւ որ մինչ Սքրուճ անհիփիս կը մնար արտաքին իր կերպարանով, Ոգին հետզհետէ որոշ կը ծերանար: Սքրուճ գիտած էր այդ փոփոխումը, բայց երբեք չխօսեցաւ անոր վրայ մինչեւ զատուեցան աղայոց հանդէսէ մը որ տեղի ունեցաւ Աստուածայայտնութեան Տօնին (Յունվ. 6), երբ Ոգին նայելով, մինչ կը զըտնուէին բացավայրի մը մէջ, գիտեց թէ ձերմկած էին անոր մազերը:

«Ոգիններու կեանքերն այսպէս կա՞րծ են,» հարցուց Սքրուճ:

«Այս երկրագունդին վրայ իմ կեանքս շատ կարձէ,» պատասխանեց Ոգին: «Այս գիշեր կը վերջանայ:»

«Այս գիշեր,» գոչեց Սքըռում :
«Եյս, կէս գիշերին : Մատկ ըրէ : Կը մօտենայ ժամանակը :»

Դաշնաւոր զանգակներն այդ պահուն կը ծանուցանէին ժամը տասնըմէկը երեք քառորդ անցած :

«Ներէ ինձի եթէ իրաւոնք չունիմ հարցնելու,» ըստ Սքըռում՝ ուշագրութեամբ Ոգիին պարեզօտին նայելով, «բայց կը տեսնեմ օտարոտի բան մը, որ ձեզի չվերաբերիր և ձեր քղանցէն գուրս կ'երկարի : Ո՞տք է թէ մազիլ :»

«Կրնայ մազիլ ըլլալ վրայի միսէն զատելով,» պատասխանեց Ոգին տիրութեամբ : «Հոս նայէ :»

Պարեզօտին ծալքերէն երկու մանկիկ գուրս հանց, խեղճ, լքուած, երկչոս, տղեղ և թշուառ : Ասոնք ծունը զրին անոր ոտքը և պարեզօտին դրափ կողմին կառչեցան :

«Ով մարդ, հոս նայէ, հոս : Նայէ վա՛ր, հոս,» գոչեց Ոգին :

Մանչ և աղջիկ էին անոնք : Դեղնած, վտիտ, պատառատուն, խոժոռագէմ և գայլանման, բայց նաև իրենց խոնարհութեան մէջ երեսանկեալ : Հոն ուր չնորհագեղ մանկութիւնը պիտի լիցնէր անոնց ուրուաղիծերը և ամենաթարմ երանգներով պիտի զարդարէր զանոնք, ծերունիի հոտած ցամքած ձեռք մը ձմլած, զալարած ու բգկած էր զանոնք : Հոն ուր հրեշտակներ կրնային զահակալել, գեւեր հաւաքուած էին և զուրս կը նայէին սպառնալիքով : Հիանալի արարչազործութեան բոլոր խորհրդաւորութիւններուն մէջ մարդկութեան ոչ մէկ փոփոխում, ոչ մէկ վատթարացում, ոչ մէկ ապականութիւն արտադրած է այնպիսի ճիւազներ, որոնք ասոնց կիսուն չափ գարշելի ու աշարկու ըլլան :

Սքըռում, սարսափահար, ոտտում մը ըրաւ գէպ ի ետ : Եւ յարգանքի համար փորձեց ըսել թէ աղուոր տղաք են : Սակայն բառերը խեղգուեցան բերնին մէջ՝ մերժելով այդքան ահազին ստախօսութեան մը թարգման ըլլալ :

«Ոգի, քո՞ւկդ են ասոնք :» Սքըռում չկրցաւ աւելի բան ըսել :

«Մարգունն են,» ըստ Ոգին՝ անոնց նայելով : «Եւ ինձի կը փարին իրենց հայրերուն գէմ բողոքելով : Այս տղան Տգիտութիւն է, այս աղջիկը կարօտութիւն : Զգուշացիր երկուքէն ալ և բոլոր իրենց աստիճանակիցներէն, բայց մանաւանդ ոս տղայէն, վասն զի անոր ճակտին վրայ գրուածը կը տեսնեմ, որ Դատապարտութիւն է, եթէ գրուածը չչնչուի : — Ուրացէք զայն,» գոչեց Ոգին, ձեռքը գէպ ի քաղաք ուղղելով : «Զրպարտեցէք այդպէս ըստները : Ընդունեցէք կուսակցական նպատակներով և աւելի ծանրացուցէք : Եւ կրեցէք հետեւա՞նքը :»

«Ապաւէն կամ միջոց չունի՞ն անոնք,» գոչեց Սքըռում :

«Բանտ չկա՞յ,» ըստ Ոգին, վերջին անգամ պատասխանելով՝ անոր իսկ բառերով : «Գործանոցներ չկա՞ն :»

Զանգակը տասներկու զարկաւ : Սքըռում իր շուրջ նայելով Ոգին փնտուեց, բայց չսեսաւ : Երբ վերջին հարուածին թրթուումը զադրեցաւ, յիշեց ձեյքը Մարլիի գուշակութիւնը և իր աչքերը վեր վերցնելով տեսաւ հանդիսաւոր Ուրուական մը սեւազգեստ ու կնդղաւոր, որ գետնէն իր կողմը կու զար մառախուզի նման :

ՏՈՒՆ
ՈԳԻՆԵՐՈՒՆ ՎԵՐՋԻՆԸ

Ուրուականը կը մօտենար դանդաղ, ծանր ու լրին կերպով։ Երբ մօտ եկաւ, Սքրուճ ծունկի վրայ իշաւ, վասն զի այս Ոգին օգին մէջ իսկ որու մէջէն կը շարժէր՝ կարծես խաւար ու խորհուրդ կը կը ցանէր։

Մութ սեւ զգեստ մը կը կրէր, որ կը ծածկէր զլուխը, էմքը, մարմինը և ոչինչ կը թողուր տեսանեւի, բայց միայն երկարած ձեռք մը։ Առանց ատոր դժուար պիտի ըլլար անոր էութիւնը որոշել գիշերէն և բաժնել խաւարէն որով շրջապատուած էր։

Սքրուճ զգաց թէ բարձր ու պատկառելի էր երբ իր մօտ եկաւ և թէ անոր խորհրդաւոր ներկայութիւնը զինք խորին ահով լեցուց։ Աւելի ոչինչ գիտցաւ, վասն զի Ոգին ոչ կը խօսէր, ոչ կը շարժէր։

«Դեռ Գալիք Ծնունդի Ոգիին առջեւ եմ,» ըստ Սքրուճ։

Ոգին չպատասխանեց, բայց դէպ յառաջ ցոյց տուաւ իր ձեռքով։

«Պիտի ցուցնես ինծի ստուերներն այն բաներուն որ պատահած չեն, այլ պիտի պատահին յառաջիկային,» շարունակեց Սքրուճ։ «Այսպէ՞ս է, Ոգի։»

Զգեստին վերնագոյն մասը րոպէ մը ամփոփուեցաւ իր ծալքերուն մէջ, որպէս թէ Ոգին իր զլուխը կը ծոէր։ Այդ եղաւ ստացուած ամբողջ պատասխանը։

Սքրուճ, այլեւս Ոգիներու ընկերակցութեան վարժուած ըլլալով հանդերձ, այնչափ վախցաւ անխօս տեսիլէն որ սրունքներն սկսան իր ներքեւ զողղղալ,

և հազիւ կրցաւ կայնիլ երբ պատրաստուեցաւ անոր ետեւէն երթալ։ Ոգին պահ մը կանգ առաւ, իբրև թէ անոր վիճակը գիտելով և կազդուրման ժամանակ տալով։

Սակայն Սքրուճ ատոր համար աւելի գէշ եղաւ։ Տարտամ ահուգողով մը սարսուաց երբ գիտցաւ թէ մոայլ պատանին ետին ուրուական աչքեր կան ուշի ուշով իր վրայ սեւեռուած, մինչ ինք իր աչքերը բուլոր ուժով տնկելով հանդերձ ոչինչ կրցաւ տեսնել, բայց միայն ուրուական ձեռքը և խոշոր կոյտ մը սեւութիւն։

«Ապագայի Ոգի՛,» աղաղակեց։ «Քեզմէ աւելի կը վախնամ քան ուրիշ ուրիշ Ոգիէ զոր տեսած եմ։ Բայց գիտնալով թէ նպատակդէ ինծի բարիք ընել և յուշ սալով եղածէս տարբեր մարդ մը ըլլալ այսունետեւ, պատրաստ եմ քեզի ընկերանալ և նորհակալու սրտով։ Զէ՞ք ուզեր խօսիլ ինծի։»

Ոչ մէկ պատասխան։ Զեռքն ուզիլ երկարեցաւ իրենց առջև։

«Առաջնորդէ,» ըստ Սքրուճ։ «Առաջնորդէ։ Դիշ շերն արագ կ'անցնի, և թանկագին է ժամանակն ինծի համար, գիտեմ։ Առաջնորդէ, Ոգի։»

Տեսիլն սկսաւ հեռանալ, ինչպէս մօտեցած էր։ Սքրուճ հետեւեցաւ անոր զգեստին շուքին, որ զինք վեր առաւ, կարծեց, ու տարաւ։

Հազիւ հազ թուեցան քաղաքը մտնել, վասն զի քաղաքն յաւէտ ինքնին անոնց շուրջ բարձրացաւ կարծես ու շրջապատեց զանոնք։ Բայց ահա հոն էին, քաղաքին կերպոնը, սակարանի հրապարակը, վաճառականներուն մէջ, որ վեր վար կը վաղէին և իրենց զրպանի գրամը խառնելով ու հնչեցնելով խումբ խումբ կը խօսակցէին, խառնելով ժամացոյցներուն կը նայէին և մտածկուութեամբ իրենց ժամացոյցներուն կը նայէին և մտածկուութեամբ

իրենց ոսկի կնիքներուն հետ կը խաղային, ևն . , ինչպէս յաճախ տեսած էր Սքրուծ :

Ողին կեցաւ գործի մարդոց խմբակի մը քով։ Տեսնելով թէ ձեռքը անոնց կողմ ուղղուած է, Սքրուծ մօտեցաւ անոնց խօսակցութիւնը լսելու համար։

«Ոչ,» կ'ըսէր ահազին ծնօտով խոշոր գէր մարդ մը. «շատ տեղեկութիւն չունիմ։ Միայն զիտեմ թէ մեռած է։»

«Ե՞րբ,» հարցուց ուրիշ մը :

«Երէկ գիշեր, կարծեմ։»

«Ի՞նչո՞ւ, ի՞նչ ունէր,» հարցուց երրորդ մը, մեծ քանակութեամբ քթախոտ առնելով ահազին ընչառութէ մը։ «Կը կարծէի թէ երբեք պիտի չմեռնի։»

«Աստուած գիտէ,» ըսաւ առաջինն յօրանջելով։

«Ի՞նչ ըրաւ իր դրամը,» հարցուց կարմիր երեսով մարդ մը, որու քթին ծայրն աւելորդ միս մը կար առակախ և կ'երերար արու հնդկահաւի մը ծնօտին տակի առակախ միուին նման։

«Լուր չունիմ,» ըսաւ խոշոր ծնօտով մարդը, գարձեալ յօրանջելով։ «Թերեւս իր Ընկերութեան թողուց։ Ինձի չթողուց։ Այս է բոլոր գիտցածու։»

Այս կատակարանութիւնն ընդհանուր ծիծաղ պատճառեց։

«Հաւանօրէն յուղարկաւորութիւնը շատ աժան տեսակ պիտի ըլլայ,» ըսաւ նոյն խօսողը, «վասն զի կ'երդնում որ մէ՛կը ներկայ պիտի չըլլայ։ Եկէք, խօսմը մը ըլլանք և երթանք։»

«Ես կու գամ, եթէ ճաշ տրուի,» ըսաւ քթին վրայ առկախ միա ունեցաղ մարդը։ «Բայց կերակրուելու եմ, եթէ գամ։»

Դարձեալ ծիծաղեցան։

«Կը նայիմ որ ես ձեր մէջ ամէնէն անշահախնդիրն

եմ,» ըսաւ առաջին խօսողը, «վասն զի բնաւ սեւ ձեռնոց չեմ դներ և բնաւ չեմ ճաշեր կէսօրին։ Բայց պատրաստ եմ գալ, եթէ ուրիշ եկող կայ։ Որքան կը խորհիմ, այնքան կը համոզուիմ թէ ինծմէ աւելի մօք բարեկամ չունէր, վասն զի ո՛ր ատեն իրարու հանդիպէինք, կը կայնէինք ու կը խօսակցէինք։ Մնաք բարով, ցանեսութիւն։»

Խօսողներ և մատիկ ընողներ բաժնուեցան և ուրիշ խումբերու միացան։ Սքրուծ կը ճանչնար մարդիկը և Ոգիին նայեցաւ բացատրութիւն ստանալու համար։

Ողին զնաց փողոց մը և մատով ցոյց տուաւ երկու խօսակիցներ։ Սքրուծ գարձեալ մտիկ ըրաւ, խորհելով թէ թերեւս հոգ էր բացատրութիւնը։

Այդ մարդիկն ալ կը ճանչնար և կատարելապէս։ Գործի մարդիկ էին շատ հարուստ և շատ կարեւոր։ Ինք պատուոյ խնդիր ըրած էր միշտ անոնց բարի համարման արժանանալ — այսինքն գործի տեսակէտով, միմիայն գործի տեսակէտով։

«Ի՞նչպէս էք,» ըսաւ մին։

«Ի՞նչպէս էք,» պատասխանեց միւսը։

«Ե՞ն,» ըսաւ առաջինը։ «Մեր Սքրէչը (քերող) իր բաժինն առաւ, լսեցի՞ք։»

«Այս, լսեցի,» պատասխանեց երկրորդը։ «Ցուրու է։ Այնպէս չէ՞։»

«Բնական է Ծնունդի այս ժամանակ։ Կարծեմ դուք չէք չմշկեր։»

«Ոչ, ոչ։ Ուրիշ գործ ունիմ։ Ցանեսութիւն։»

Ուրիշ խօսք չեղաւ։ Այս էր անոնց ամբողջ տեսակցութիւնը, խօսակցութիւնը և բաժնումը։

Սքրուծ նախ զարմացաւ որ Ոգին կարեւորութիւն ընծայեց ըստ երեւութիւն այսքան չնչին խօսակցութիւններու։ Բայց վասան ըլլալով թէ անոնք հարկաւ.

գաղտնի նպատակ մը ունին՝ աշխատեցաւ զտնել թէ այն ի՞նչ էր հաւանօքէն։ Կարելի չէր ենթադրել թէ անոնք իր վաղեմի ընկերոջ, ծէյքըպի, մահուան կը վերաբերէին, վասն զի այն Անցեալ էր, մինչ այս Ոգիին պաշտօնը Սպագայի կը վերաբերէր։ Ոչ ալ կրնար միտք բերել իրեն հետ անմիջապէս կապակցեալ անձ մը, որու պատշաճեցնէր զանոնք։ Սակայն տարակոյս չունենալով թէ, որու ալ վերաբերէին, բարոյական թաքուն դաս մը կու տային իր իսկ օգտին համար, որոշեց միտք պահել ամէն խօսք զոր լսէր և ամէն բան զոր տեսնէր, և մանաւանդ դիտել իր անձին ստուերը, երբ երեւէր այն։ Ինք յոյս ունէր թէ իր ապագայ անձին ընթացքը պիտի հայթայթէ բանալին զոր կը փնտէր և պիտի դիւրացնէ այս հանելուկներուն լուծումը։

Հոն իսկ իր շուրջ նայեցաւ բուն իր կերպարանը տեսնելու համար։ Սակայն ուրիշ մարդ մը կեցած էր սովորական իր անկիւնը։ Եւ թէպէտ ժամացոցը ցոյց կու տար օրուան այն ժամը երբ ինք հոն կ'ըլլար սովորաբար, տեսաւ թէ Գաւիթէն ներս խուժող բազմութիւններուն մէջ չկար իր նմանութիւնը։ Սակայն շատ չզարմացաւ։ Վասն զի որոշած էր փոխել իր կեանքը ու կարծեց և ուղեց հաւատուալ թէ ինք ասոր մէջ կը տեսնէ իր նորածին որոշումները՝ գործադրուած։

Ոգին, հանդարտ ու մասյլ, Սքրուճի քով կը կենար՝ ձեռքը երկարած։ Երբ Սքրուճ իր մտածիոտ հետապութենէն արթնցաւ, ձեռքին ուղղութենէն ու փրքէն հասկցաւ թէ Անտեսանելի Աչքերն իրեն կը նային շեշտակի։ Այս գողացուց զինք և շատ պաղեցուց։

Ելան գործունէութեան այդ վայրէն և գացին քաղաքին աննշան մէկ կողմը, ուր Սքրուճ բնաւ գացած չէր, թէպէտ զիտէր տեղը և անոր վատ համբաւը։ Ճամբանները գէշ և նեղ էին, խանութները և տունները ողոր-

մելի, բնակչութիւնը կիսամերկ, գինով, բոկոտն ու գարշելի։ Նեղ անցքերն ու կամարակապ ուղիները հոտի, աղտի և կեանքի իրենց գարշելի պարունակութիւնը, կոյուղիներու նման, կը թափէին հեռաւոր ցիրուցան փողոցները և ամբողջ թաղամասը ոճիր, աղտեղութիւն ու թշուառութիւն կը բուրէր։

Վատահամբաւներու այս որջին մէջ որմայեց տանիքի մը տակ տիսուը տեսքով և առկախ դիրքով խանութմը կար, ուր հին երկաթեղէն, հագուստ, շիշ, ոսկը և աղտոտ աւելորդներ կը գնուէին։ Ներսը գետնին վրայ դիզուած էին ժանգոտ բանալիներ, զամեր, շլթաներ, ծխնիներ, խարտոցներ, կչորդներ, ծանրութեան չափեր և ամէն տեսակ աւելորդ երկաթեղէն։ Տգեղ ցնցոտիներուն և ոսկրի գերեզմաններուն մէջ գաղտնիքներ կային ու կը ծածկուէին զորս քիչեր պիտի ուղեն պրաըտել։ Վաճառքներու այս կոյտին մէջ, փայտածուխի վառարանի մը քով, հին աղիւսէ շինուած, ալէներ ստահակ մը նստած էր գրեթէ հօթանասուն տարեկան, որ գուրսի ցուրտ օդէն ինքզինք կը պաշտպանէր չուանի մը վրայ իբրև վարագոյր այլազան մգլոտած ցնցոտիներ կախելով, և իր ծխափայտը կը ծխէր անվրդով առանձնութեան բովանդակ պերձանքով։

Սքրուճ և Ոգին այդ մարդուն ներկայացան ճիշտ այն պահուն, երբ ծանր ծրաբով կին մը սպրեցաւ խանութէն ներս։ Հազիւ այդ կինը ներս մտաւ, ուրիշ մը հտաւ նոյնպէս բեռնաւորուած, որու կը հետեւէր մաշած ու զգեստով մարդ մը, որ բոլորովին ապշեցաւ զանոնք տեսնելով, ինչպէս անոնք ապշած էին զիրար ճանչնալով։ Պահ մը յոիկ զարմանալէ ետեւ, որու մէջ իրենց միացած էր ծխափայտով մարդն ալ, երեքը մէկտեղ սկսան խնդալ։

«Օրավարձով աշխատող կինը առաջին պիտի ըլլայ անշուշտ,» գոչեց այն որ ամէնէն առաջ ներս մտաւ: «Հուացարարուհին երկրորդ պիտի ըլլայ անշուշտ, և թաղման տնօրէնին մարդը երրորդ պիտի ըլլայ անշուշտ: Հոս նայէ եղբայր ծօ, ահա զուգադիպութիւն մը. երեքս մէկտեղ եկանք հոս առանց ուզելու:»

«Զէիք կրնար մէկտեղ զալ աւելի լաւ տեղ մը,» ըստ ծօ, ծխափայտը բերանէն հանելով: «Հիւրանոց եկէք: Վաղուց արդէն ձերն են զայն վայելելու բոլոր իրաւոնքներն ու իրաւասութիւնները: Իսկ միւս երկուքն օտարական չեն: Կեցէք մինչեւ փակեմ խանութին դուռը: Ոհ, ի՞նչպէս կը ճռնչէ թշուառականը: Զկայ հոս կարծեմ հաստ մետաղ մը որ խանութիւն ծխնիներուն չափ ժանգոտ ըլլայ: Եւ, վստահ եմ, չկայ հոս ոսկը մը իմիններուս չափ ծեր: Հա՛, հա՛: Ամէնս ալ մեր կոչման յարմար ենք, լաւ յարմարձ: Հիւրանոց եկէք: Հիւրանոց եկէք:»

Հիւրանոցը ցնցոտիններու վարագոյրին ետեւի միջն էր: Մարդուկը բազրիքի հին ձողով մը խառնեց կրակը և իր ծխափայտին ծայրով յարդարելէ ետեւ մխացող ճրագը (վասն զի գիշեր էր), դարձեալ բերանը դրաւ ծխափայտը:

Այդ միջոցին կինը որ արդէն խօսած էր՝ վար ձգեց իր ծրաբը և խրոխտաբար նատաւ աթոռակի մը վրայ, արմուկները ծունկերուն կրթնցնելով և խիզախութեամբ միւս երկուքին նայելով:

«Ի՞նչ վխաս ունի, ի՞նչ վխաս, Տիկին Տիլպը,» ըստ կինը: «Ամէն անձի իրաւոնքն է ինքինը հոզպալ: Ինչ միշտ այնպէս կ'ընէր:»

«Ճշմարիտ է, արդարեւ,» ըստ լուացարարուհին: «Ոչ ոք աւելի հոգ կը տանէր իր անձին:»

«Ուրեմն, ով կին, մի կայնիր և նայիր, իբր թէ

վախնալով: Ո՞վ աւելի բան գիտէ: Մենք զիրար պիտի չմատնենք, կարծեմ:»

«Ոչ, արդարեւ,» ըստին ի միասին Տիկին Տիլպը և մարդը: «Կը յուսանք թէ ոչ:»

«Ծատ աղէկ, ուրեմն,» գոչեց կինը: «Կը բաւէ: Ո՞վ կը վեսառի այսպիսի քանի մը բան կորանցնելով: Ամէն պարագայի մէջ մեռեալ մը ոչ:»

«Անշուշտ ոչ,» ըստ Տիկին Տիլպը խնդալով:

«Եթէ կ'ուզէր չար Աքրիւ (ագահը),» չարունակեց կինը, «զանոնք պահել իր մահէն ետև, ինչո՞ւ բնական ընթացքի չետեւցաւ իր կեանքին մէջ: Եթէ հետեւէր, հոգածու մը կ'ունենար՝ Մահէն զարնուելու պահուն, փոխանակ հոգ առանձին իր վերջին շունչը փչելու:»

«Ահա ամենաճշմարիտ խօսք մը,» ըստ Տիկին Տիլպը: «Այդ է իր արդար պատիքը:»

«Երանի թէ քիչ մը աւելի ծանր ըլլար պատիքը,» պատասխանեց կինը: «Եւ պիտի ըլլար, վըստահ եկէք, եթէ ես ուրիշ բան ալ կարենայի առնել: Բաց այդ ծրաբը, եղբայր ծօ, և բաէ թէ ի՞նչ կ'արժէ: Պարզ խօսէ: Ես չեմ վախնար առաջինն ըլլալուն համար, ոչ ալ կը վախնամ անոնց տեսնելուն համար: Հոս չեկած շատ աղէկ զիտէինք, կարծեմ, թէ ամէնս կը յափշտակէինք: Մեղք չէ: Բաց ծրաբը, եղբայր ծօ:»

Կնոջ բարեկամներուն կնամեծարութիւնը սակայն թոյլ չտուաւ ասոր, և գունաթափ սեւ զգեստ կրող մարդը, ամէնէն առաջ բարձրանալով ճեղքուած պատին վրայ, ցուցաբերեց իր աւարը: Ընդարձակ չէր այն: Մէկ երկու կնիք, մատիտակալ մը, թեփ զոյգ մը կոճակ, փոքրարժէք զնդասեղ մը միայն: Ասոնք ամէնը ծօ մէկի մէկի լքնեց և պատին վրայ կաւիճով նշանակեց

գումարները դորս ինք տրամադրիր էր վճարել իւրաշքանչիւրին համար : Յետոյ ամէնը գումարելով,

«Եյս է ձեր հաշիւը ,» ըսաւ , «և չեմ կրնար կէս շլին աւելի տալ , եթէ նոյն խակ խաշուիմ չտալուս համար : Ո՞վ է երկրորդը :»

Երկրորդն էր Տիկին Տիլպըր , որ բերած էր քանի մը սաւան և անձեռոց , քիչ մը հագուստ , թէյի հինորեայ երկու արծաթ զգալ չաքարի ունելի մը և քանի մը զոյգ կօշիկ : Ասոր ալ հաշիւը նոյն կերպով գրուեցաւ պատին վրայ :

«Ես միշտ շատ կը վճարեմ տիկիններու : Իմ տկարութիւնս է այս , և ասով կը կործանեմ ինքզինքս ,» ըսաւ ձօ : «Եյս ալ քու հաշիւդ է : Եթէ ուրիշ փէննի մը եւս ուզես և չհամաձայնիս , պիտի զղջամ այսքան առատաձեռն ըլլալուս համար , և երկու երեք շլին պիտի պակսեցնեմ :»

«Օն , ձօ , իմ ծրաբս բաց ,» ըսաւ առաջին կինը :

Ճօ ծնրագրեց աւելի հանգիստ կերպով բանալու համար : Եւ շատ հանգոյցներ քակելէ ետեւ քայլեց հանեց մութ դոյն կերպասի խոշոր ու ծանր գալար մը :»

«Ի՞նչ կը կոչէք զայս ,» ըսաւ ձօ : «Սնկողնի վարպետներ :»

«Սնկողնի վարպետներ ,» կրկնեց կինը , ինդառով և դէպ առաջ ծոելով :

«Բուել չէք ուզեր թէ ասոնք օվակներով և կապերով մէկտեղ վար առիք , մինչ ինք հոն պատկած կը կինար ,» ըսաւ ձօ :

«Եյս , այդպէս ըրի ,» պատասխանեց կինը : «Ի՞նչու չընէի :»

«Դուք ձեր բախտը շինելու համար ծնած էք , և անչուշտ պիտի շինէք ,» ըսաւ ձօ :

«Սնչուշտ ես իմ ձեռքս չեմ բռներ , երբ կրնամ

զայն երկարելով բան մը խլել , մանաւանդ այսպիսի մարդէ մը , ձօ , կ'երգնում քեղի ,» պատասխանեց կինը պաղ արեամբ : «Զգո՞յշ , բուրդէ ծածկոցներուն վրայ չկաթեցնես այդ իւղը :»

«Անո՞ր բուրդ ծածկոցներն են ,» հարցուց ձօ :

«Ուրիշ որո՞ւն կը կարծէք ,» պատասխանեց կինը : «Հաւանական չէ որ պաղ առնէ , կարծեմ , ատոնցմէ բաժնուելուն համար :»

«Կը յուսամ թէ փոխանցիկ հիւանդութեամբ չը մեռաւ ,» ըսաւ ձօ , պահ մը կանգ առնելով և վեր նաշելով :

«Այդպիսի վախ մի ունենար ,» պատասխանեց կինը : «Ես անոր ընկերութենէն ազնչափ ախորժող մը չեմ որ ուզէի անոր շուրջ գեգերիլ այսպիսի բաներու համար , եթէ փոխանցիկ հիւանդութիւն ունենար : Նայէ , կրնաս այս շապիկն ուշի ուշով քննել մինչև աչքերդ ցաւին : Սակայն պիտի չգտնես ծակ մը կամ մաշած ուէ կէտ անոր վրայ : Իր լաւագոյն շապիկն է և պատուական ալ : Եթէ ես չըլլայի , պիտի վատնուէր :»

«Ի՞նչ բանի վատնում կ'ըսէք ,» հարցուց ձօ :

«Մարմին վրայ դրուելուն , որպէս զի թաղուէր անոր հետ ,» պատասխանեց կինը խնդարով : «Մէկը ինենդութիւնն ունեցաւ անոր վրայ գնելու , բայց ես քաշեցի , առի : Եթէ պարզ կտաւը չծառացեր այդ նապատակին , ուէ բանի անօգուտ է : Շատ կը վայլէ մարմինին : Կարելի չէ որ ինք սովորականէն աւելի տպեղ երեւի կտաւի մէջ :»

Սքրուճ սարսափով մտիկ ըրաւ այս խօսակցութեան : Մինչ անոնք իրենց աւարին շուրջ խմբովին նատած կը խօսակցէին ծերուկին ձրագին աղօտ լոյսին մէջ , ինք կը դիտէր զանոնք այնպիսի զգուանքով ու

գարշանքով մը որ չէր կրնար աւելի սաստիկ ըլլալ, թէե մեռեալ ծախող զզուելի դևեր եղած էին:

«Բահ, քահ,» խնդաց նոյն կինը, երբ ձօ բուրդ կերպասէ քոսկ մը հանելով, որու մէջ դրամ կար, անմիջապէս վճարեց անոնց իւրաքանչիւրին հաշիւը: «Անաւասիկ վերջաւորութիւնը, կը տեսնէք: Ինք իր ոզջութեանը իրմէ կը վախցնէր ու կը հեռացնէր ամէն մարդ, որպէս զի իր մահով օգտակար ըլլայ մեղի: Քահ, քահ, քահ:»

«Ոզի,» ըստ Սքրուձ գլխէն մինչեւ ոտքը զողալով, «կը հասկնամ, կը հասկնամ: Այս դժբախտ մարդուն վիճակը կրնաց իմո ըլլալ: Իմ կեանքս այդ վախճանին կը դիմէ: Ողորմա՛ծ Երկինք, այս ի՞նչ բան է:»

Սարսափով ետ քաշուեցաւ, վասն զի տեսարանը փոխուած էր: Եւ ահա քիչ մնաց պիտի զարնուէր անկողնի մը մերկ և անվարագոյր, որու վրայ պատուած սաւանով ծածկուած բան մը կար, որ, թէեւ համր, իւմացուց ինքվինք ահաւոր լեզուով:

Սեռեալը շատ մութ էր, այնչափ մութ որ կարեւի չէր բան մը որոշ տեսնել, թէպէտ Սքրուձ գաղտնի բնազդի մը հնազանդելով իր շուրջ նայեցաւ զիտնալու համար թէ ի՞նչ տեսակ սեռեալ էր: Դուրսի օդին մէջ բարձրացող ազօտ լոյս մը ուղղակի անկողնին վրայ ինկաւ, և հոն կը կենար այս մարդուն մարմինը կապտուած, կողոպտուած, անխնամ ու լքուած, առանց ուեէ հակողի և լացողի:

Սքրուձ Ոզիին նայեցաւ: Աներեր ձեռքը զիսուն ուղղուած էր: Ծածկոյթն այնքան անխնամօրէն փըռուած էր որ դէմքը կրնար երեւիլ, եթէ Սքրուձ մատի ամենափոքր շարժումով քիչ մը միայն վերցնէր մէկ ծայրը: Խորհեցաւ ալ վերցնել, զզաց թէ շատ գերին բան էր այդ և անձկաց վերցնել, բայց ինչպէս

անկարող էր իր քովի տեսիլը վանել, նոյնպէս անկարող էր ծածկոյթը քաշել:

Ով պաղ, ցուրտ, դժխեմ և ահարկու Մահ, հոսհաստատէ քու խորանդ և յարդարէ այն արհաւիրքներով զսրա ձեռքիդ տակ ունիս, քանզի այս է քու տէրութիւնդ: Բայց սիրուած, յարգուած և պատուուած զլխուն մէկ մաղն իսկ չես կարող քու սոսկալի նպատակներուդ ծառայեցնել, կամ մէկ զիծն իսկ զզուելի դարձնել: Ոչ թէ ձեռքը ծանր է և պիտի իյնայ երբ արձկուի, ոչ թէ սիրտն ու բազկերակը գաղրած են, այլ թէ բաց, բարի և հաւատարիմ եր ձեռքը, արի, տաք, և գորովալիր էր սիրտը, և բազկերակը մարդու բազկերակ: Զարկ, ով Ստուեր, զարկ: Եւ տես բարի գործերը որ վէրքէն կը բիսին, որպէս զի աշխարհի մէջ ցանեն կեա՞նք անմահական:

Այս խօսքերը ոչ մէկ ճայնով հաղորդուեցան Սքրուձի ականջներուն: Սակայն լսեց ինք՝ անկողնինը զիտելու պահուն: Մտովի ըստ, եթէ այս մարդն յարուցուէր հիմա, ի՞նչ պիտի ըլլային անոր առաջին մտածումները: Ազանութիւն, կծծութիւն և յափշտակութի՞ւն: Իրա՞ւ ալ, հարուստ վախճանի մը բերած են զինք:

Պառկած էր ան մութ, զատարկ տան մը մէջ, ուր այր, կին կամ մանուկ մը չկար որ ըսէր թէ ինձի այս կամ այն բարձրութիւնն ըրաւ և ես անոր բարի պիտի ըլլամ ի յիշատակ իր այսինչ բարի խօսքին: Կատու մը ճիրաններավ կը քերէր անոր գուռը, և կըրծող մուկերու ձայն կու զար վասարանի բարին տակէն: Թէ ի՞նչ կ'ուղէին անոնիք ընել այդ մահասենետակին մէջ, և ինչո՞ւ այնքան անհանգիստ ու խոռված էին, Սքրուձ չհամարձակեցաւ խորհիլ:

«Ոզի,» ըստ, «սոսկալի տեղ է այս: Ասէ մեկնելով պիտի չմոռնամ իր դասը, վստահ եղիր: Երթանք:»

Ողին տակաւին գլխուն կ'ուղղէր իր անշարժ մատը :
«Կը հասկնամ միտքդ,» պատասխանեց Սքրուճ,
«և կ'ընէի, եթէ լարող ըլլայի: Բայց կարողութիւն
չունիմ, Ոզի, կարողութիւն չունիմ:»

Ողին կարծես նորէն նայեցաւ անոր:

«Եթէ քաղաքին մէջ կայ ուեէ մէկը որ այս մար-
դուն մահէն զգածուելով տխուր է,» ըստ Սքրուճ բո-
լորվին տագնապած, «ինձի ցոյց տուր այդ անձը,
Ոզի, կ'աղաջնմ:»

Տեսիլը պահ մը Սքրուճի առջեւ տարածեց իր
մութ պարեգոտը թեւի նման, և ամփոփելէ ետեւ
ի յայտ բերաւ սենեակ մը ցերեկ օրով, ուր մայր մը
կար իր զաւակներով:

Կինը մէկուն կ'սպասէր մեծ անձկութեամբ, վասն
զի վեր վար կը քալէր սենեակին մէջ, ամէն ձայնէ գող
կ'ելէր, պատուհանէն դուրս կը նայէր, աչքերը ժա-
մացոյցին կ'ուղղէր, կը ջանար իր ասեղով գործել,
բայց ի զուր, և հազիւ հաղ կրնար խաղացող իր տղա-
յոց ձայներուն համբերել:

Վերջապէս լուսեցաւ դրան բախիւնը, որու կը
բաղար երկար ատենէ ի վեր: Դէպի գուռ փութաց և
գտաւ իր ամուսինը —հալումաշ զէմքով մարդ մը հո-
գերով ձնչուած, թէպէտ դեռ երիտասարդ: Ուշագրաւ
բան մը կար սակայն այդ զէմքին վրայ, տեսակ մը
լուրջ հրճուանք, որու համար կ'ամչնար և զոր կը
ճգնէր զսպել:

Նստաւ ուտել ինչ որ իրեն համար պատրաստուած
էր կրակին մօտ: Երբ կինը երկար լուսեթենէ մը ետեւ
հարցուց երկչուութեամբ, «Ի՞նչ լուր կայ,» մարդը
դժուարութիւն կրեց պատասխանելու համար:

«Բարի՞ է թէ չար,» հարցուց կինը, անոր օդնե-
լու համար:

«Զար,» պատասխանեց ան:

«Յոլորովին կործանեցա՞նք:»

«Ոչ, զեռ յոյս կայ, Քարովին:»

«Եթէ ան ի գութ շարժի, կա՞յց ըստ կինը չփոթած:
«Ոչինչ անյուսալի է, եթէ այդպիսի հրաշք մը պա-
տահի:»

«Ելեւո չկրնար ի գութ շարժիլ. մեռա՛ւ,» պա-
տասխանեց ամուսինը:

Կինը հեզ և համբերով էր, եթէ զէմքը չէր ստեր:
Բայց սիրաը զոհ եղաւ այս լուրն առնելով, և ինք այդ-
պէս ըստ ձեռքին միացնելով: Յաջորդ վայր-
կեանին ներում խնդրեց աղօթքով և տրամեցաւ: Բայց
առաջինը սրախին զգացումն էր:

«Ճշմարիտ եղաւ ինչ որ արքեցող կինը, որու վրայ
պատմեցի երէկ, ինձի ըստ երբ զացի զինք տեսնել
ու չարաթ մը պայմանաժամ խնդրել, և ինչ որ ես կար-
ծեցի թէ սոսկ պատրուակ էր զիս տեսնել չուզելու:
Ոչ միայն հիւանդ, այլ և մահամերձ էր մարդն այն ժա-
մանակի:»

«Որո՞ւ պիտի փոխանցուի մեր պարտքը:»

«Դեմ զիտեր: Բայց ատկէ առաջ պատրաստ ըլլալու-
է մեր զրամը, և եթէ չըլլայ, իրօք զէշ բախտ պիտի ըլ-
լայ մերը, եթէ նոյնքան անողորմ գտնենք անոր յա-
ջորդը: Այս զիշեր, Քարովին, կրնանք հանդիսա որտով
քնանալ:»

Այս, որքան ալ ջանային ոքողել իրողութիւնը,
հանգուացան անոնց սիրաերը: Տղայք, որ այս խօսակ-
ցութիւնը լսելու համար պահ մը խմբուեցան ու լուս
կեցան՝ քիչ բան համկնալով. սկսան զուարթանալ: Եւ
տունը երջանեկացաւ այդ մարդուն մահուան չնորհիւ:
Միակ զգացումը զոր Ոզին կրցաւ անոր ցուցնել այս
զէպքին հետեւանքով՝ համոյքի զգացում էր:

«Կարեկցութեան նշան մը տեսնեմ այս մահուան առիթով, Ոգի» ըստ Սքրուճ, «ապա թէ ոչ, այդ մոայլ սենեակը որմէ մեկնեցանք՝ միշտ աչքիս առջև պիտի մնայ :»

Ողին տարաւ զայն կարգ մը փողոցներէ որոնց ընտել էին անոր ոտքերը : Եւ մինչ կ'երթային, Սքրուճ հոս հոն նայեցաւ ինքինք տեսնելու համար, բայց ոչ ուրեք տեսնուեցաւ: Մտան խեղձ Պոպ Քրէչիթի տունը, այն տունն՝ ուր առաջ զայած էր, և կրակին շուրջ նըստած գտան մայրն ու զաւակները :

Հանդարտ : Շատ հանդարտ : Ազմկարար պղտիկներն արձանի պէս անշարժ կը կենային մէկ անկիւնը և նըստած կը նայէին Փիթըրի, որ զիրք մը ունէր իր ձեռքը : Մայրը և դուստրերը կար կը կարէին: Բայց շատ լուս էին :

«Ու աղայ մը առաւ կայնեցուց անոնց մէջ :»

Ուր լսած էր Սքրուճ այս խօսքերը : Ինք չէր երազեր : Հարկաւ աղան կարգաց, մինչ ինք և Ողին սեմէն ներս կը մտնէին: Ինչո՞ւ չչարունակեց :

Մայրը սեղանին վրաց գրաւ իր գործը, և ձեռքը գէմքին տանելով

«Գոյնը կը վեառէ աչքերուս,» ըստ :

Գոյնը : Ա՛հ, խեղձ Թայտի Թիմ:

«Հիմա աւելի աղէկ են,» ըստ Քրէչիթի կինը : Մոմի լոյսէն կը վեառուին: Չեմ ուղեր ես ակար աչք ցուցնել ձեր հօր երբ տուն զայ: Եւ կը մօտենայ ժամանակը :»

«Անցած է անգամ,» պատասխանեց Փիթըր, զիրքը գոցելով: «Բայց, կարծեմ, սովորականէն քիչ մը կամաց կը քալէ, մայր, այս վերջին քանի մը օրերս:»

Նորէն շատ լուս կեցան: Վերջապէս միօրինակ գուարթ ձայնով մը, որ միայն մէկ անգամ դեղեւեցաւ, ըստ մայրը,

«Ես տեսած եմ որ շատ արագ կը քալէր — շատ արագ կը քալէր՝ Թայնի Թիմը ուսերուն վրայ առած :»

«Ես ալ տեսած եմ — շատ անգամ,» պուաց Փիթըր :

«Ես ալ, ես ալ,» գոչեցին ամէնն իրարու ետեւէ :

«Մակայն շատ թեթև էր,» վերսկսաւ մայրը, ուշագրութիւնը գործին դարձնելով, «Եւ հայրը շատ կը սիրէր զայն: Բնաւ չէր նեղուեր, չէր նեղուեր անոր համար: Եւ ահա գո՞ւսն է հայրը :»

Դուրս վազեց գիմասորելու համար զայն, և փոքրիկ Պոպ իր շալով, որու պէտք ունէր խեղճ մարդը, ներս մտաւ: Թէյլ պատրաստ էր վառարանին քով և ամէնն ալ իրարու հետ մրցեցան ամէնէն աւելի ծառայելու համար անոր: Ապա երկու պղտիկներն անոր գիրկն եւլան: Մին անոր մէկ այտին և միւսն անոր միւս այտին կրթնցուց իր երեսը, իբր թէ ըսելով, «Հոգ մի ընկը, հայր, մի արամիր :»

Պոպ շատ ուրախացաւ անոնցմով և հաճելի ոճով խօսեցաւ ամբողջ ընտանիքին: Սեղանին վրայի ձեռագործին նայեցաւ ու գովեց Տիկին Քրէչիթի և աղջկներուն ճարտարութիւնն ու արագութիւնը: Կիրակիէ շատ առաջ պիտի լմնան, ըստ :

«Կիրակի՞ : Գացի՞ր ուրեմն այսօր, Բոպըրթ,» հարցուց անոր կինը :

«Այս, սիրելիս,» պատասխանեց Պոպ: «Երանի թէ գուն ալ երթայիր: Պիտի սփոփուէիր տեսնելով թէ ինչ կանանչ տեղ է: Բայց պիտի տեսնես յաճախ: Ես անոր խոստացած եմ հոն երթալ Կիրակի օրեր: Այս, իմ փոքրիկ զաւակս, իմ փոքրիկ զաւակս :»

Յանկարծ փղձկեցաւ: Զկրցաւ զսպել ինքինք: Եթէ կարենար զսպել, ինք և իր զաւակը թերեւս հիմակուընէ աւելի զաւուէին իրարմէ:

Ելաւ սենեակէն և գնաց վերի սենեակը որ պայծառապէս լուսաւորուած էր և Ծնունդի առիթով զար-

դարուած: Աթոռ մը դրուած էր ձիշտ տղուն քով և նշաններ կային թէ քիչ առաջ այցելու մը եկած էր հոն: Ենդ Պոպ նստաւ աթոռին վրայ և պահ մը մտածելէ և հանդարտելէ ետև համբուրեց պղտիկ դէմքը: Հաշտուեցաւ պատահածին հետ և վար իջաւ նորէն՝ բոլորովին երջանիկ:

Կրակին չուրջ հաւաքռուեցան և սկսան խօսակցիլ: Մայրն ու աղջիկները շարունակեցին գործել: Պոպ խօսեցաւ արտասովոր ազնուութեանը վրայ Պ. Աքրուածի քեռորդոյն, զոր հազիւ անզամ մը տեսած էր և որ այդ օր իրեն պատահելով փողոցը և տեսնելով թէ «ընկածուած», քիչ մը միայն ընկճուած կ'երեւէի, » ըստ Պոպ, հարցուց թէ ի՞նչ պատահեցաւ որ այդպէս նեղուած էի: «Ես ալ, » ըստ Պոպ, «վասն զի ամէնէն անոյշ խօսող մարդն է ան, պատմեցի: 'Բոլոր սրտով կը ցաւիմ, Պ. Քրէչիթ,' պատասխանեց ինծի, 'և խորապէս կը ցաւիմ բարի կնոջդ համար:՝ Սակայն չեմ դիտեր թէ ի՞նչպէս իմացաւ այդ կէտը:»

«Ո՞ր կէտը, սիրելիս:»

«Թէ դուն բարի կին ես, » պատասխանեց Պոպ, «Ամէն մարդ գիտէ՝, » ըստ Փիթըր:

«Շատ աղէկ ըսիր, զաւակո, » գոչեց Պոպ: «Կը յուսում թէ գիտեն: 'Բոլոր սրտով կը ցաւիմ,' ըստ, 'բարի կնոջդ համար: Եթէ կրնամ ուեւէ կերպով ծառայել ձեզի, ' ըստ, քարտը տալով ինծի, 'ոս է իմ հասցէս: Ինպրեմ, ինծի եկուր:՝ Արդ իմ ուրախութիւնս յառաջիկային անոր կողմէ մեղի համնելիք ուեւէ օգնութեան համար չէ այնչափ որչափ իր աղնիւ ընթացքին համար: Իրօք ինծի թուեցաւ թէ կը ձանչնար մեր թայնի թիմը և կը կարեկցէր մեղի:»

«Վստահ եմ թէ բարի սիրու ունի, » ըստ Տիկին Քրէչիթ:

«Աւելի վստահ պիտի ըլլայիր, սիրելիս, » պատասխանեց Պոպ, «Եթէ տեսնէիր զինք ու խօսէիր իր հետ: Բնաւ պիտի չզարմանամ, միտ զիր իմ խօսքիս, եթէ աւելի լաւ պաշտօն մը գտնէ Փիթըրի:»

«Մատիկ ըրէ՝, Փիթըր, ի՞նչ կ'ըսուի, » ըստ Տիկին Քրէչիթ:

«Այն ատեն, » գոչեց աղջիկներէն մին, «Փիթըր ընկերուածի մը պիտի գտնէ և առանձին տուն կազմէ:»

«Պարապ բան մի խօսիք, » յարեց Փիթըր ծիծաղելով:

«Եյդ կրնայ ըլլալ կամ չըլլալ, » ըստ Պոպ, «օր մը, թէպէտ գեռ շատ ժամանակ կայ, սիրելիս: Բայց ի՞նչպէս ալ, կամ ե'րբ ալ զատուինք իրարմէ, վստահ եմ որ ոչ մէկս պիտի մոռնանք թայնի թիմը, այնպէս չէ, կամ այս առաջին բաժանումը որ տեղի ունեցաւ մեր միջեւ:»

«Բնաւ, բնաւ, հայր, » գոչեցին ամէնն ալ:

«Եւ ես գիտեմ, » ըստ Պոպ, «զիտեմ, սիրելիներս, թէ երբ յիշենք թէ ո'քան համբերող ու հեր ինք—թէեւ փոքրիկ, շատ փոքրիկ էր—զիւրաւ պիտի չըռուինք իրարու հետ և պիտի չմոռնանք ինդ թայնի թիմը:»

«Ոչ, ոչ, հայր, երբեք, » պավագակեցին ամէնը:

«Շատ ուրախ եմ, » ըստ փոքրահաստակ Պոպ: «Շատ ուրախ եմ:»

Տիկին Քրէչիթ համբուրեց զայն, աղջիկներն համբուրեցին զայն, երկու պատիկներն համբուրեցին զայն, և հայր ու որդի իրարու ձեռք սեղմեցին: Ով ոզի թայնի թիմի, քու մանկական էութիւնող Աստուծմէ՝ էր:

«Ոզի, » ըստ Աքրուած, «քան մը կ'զգացնէ ինծի թէ մեր բաժանման ժամը մօտ է: Գիտեմ, բայց թէ ի՞նչպէս չեմ զիտեր: Էսէ ինծի, ո'վ էր այն մարդը զոր մեռած տեսանք:»

Ապագայ Ծնունդի Ողին տարաւ զայն առաջուան, պէս—թէեւ տարբեր ժամանակ մը բատ Սքրուճի. իրօք կարգ կանոն չկար այս վերջին տեսիլներուն մէջ, միայն թէ ամէնն ալ ապագայի կը վերաբերէին—այնպիսի վայրեր, ուր գործի մարդիկ կամ առեւտրականներ կը յաճախեն: Բայց անոնց մէջ չերեւցուց Սքրուճը: Արդարև Ողին ուէ բանի համար կանգ չէր առներ, այլ ուղղակի կը դիմէր փափաքուած նպատակին այնպէս որ Սքրուճ աղաչեց որ կանգ առնէ պահ մը:

«Այս գաւիթը, որու մէջէն կ'անցնինք փութով,» ըստ Սքրուճ, «իմ բնակավայրու է և երկար ժամանակէ ի վեր: Կը տեսնեմ տունը: Նայիմ ի՞նչ պիտի ըլլամ ապագային մէջ:»

Ողին կեցաւ: Զեռքն ուրիշ տեղ ուղղուած էր:

«Տունն աւելի անդին է,» գոչեց Սքրուճ: «Ի՞նչու ուրիշ կողմ կը ցուցնես:»

Անողոք մատը փոփոխութիւն չկրեց:

Սքրուճ իր գրասենեակին պատուհանը վաղեց և ներս նայեցաւ: Դարձեալ գրասենեակ էր, բայց ոչ իր գրասենեակը: Կարասին նոյն չէր և աթոռին վրայ նստողն ինք չէր: Տեսիլն ըստ առաջնոյն այլուր կ'ուղղէր իր մատը:

Նորէն անոր քով զնաց Սքրուճ, և չփխոնալով թէ ինչու և ուր եկած էր՝ անոր ընկերացաւ մինչև հասան երկաթ գուռ մը: Մահնելէ առաջ կանգ առաւ իր շուրջ նայելու համար:

Գերեզմանատուն էր: Հոս ուրիմն թաղուած էր ողորմելի մարդը, որու անունն հիմա պիտի իմանար: Արժանավայել տեղ մը, ամէն կողմէ տուներով շրջապատուած, բուսականութեան մահէն և ոչ թէ կեանքէն սնանող խոտերով ու վայրի բոյսերով ծածկուած, բազմաթիւ հոծ թաղեալներով համակ խեղ-

դուած և անզագար գոհացում գտնող ախորժակով պարարտացած: Արժանավայել տեղ:

Ողին կայնեցաւ գերեզմաններուն մէջտեղ և ցոյց տուաւ Մին: Սքրուճ գէպ հոն ուղղուեցաւ դողալով: Տեսիլը ճիշտ նոյն երեւոյթն ունէր, բայց ինք վախցաւ թէ նոր նշանակութիւն մը կը տեսնէր անոր լուրջ կերպարանին մէջ:

«Մօտենալէս առաջ այն քարին զոր ցոյց կու տաս,» ըստ Սքրուճ, «իմ մէկ հարցումիս պատասխանէ: Ասոնք ա՞յն բաններուն սառեւերներն են որ պիտի ըլլան, թէ այն բաններուն որ կրնան ըլլալ միայն:»

Տակաւին Ողին մատով ցոյց կու տար գերեզմանը որու քով ինք կեցած էր:

«Մարդոց ընթացքները կանխաւ ցոյց կու տան ինչ ինչ վախճաններ որոնց պիտի գիմեն իրենք, եթէ անոնց մէջ յարատեւեն,» ըստ Սքրուճ: «Սակայն եթէ այդ ընթացքները փոխուին, վախճաններն ալ կը փոխուին: Բոչ թէ այսպէս են նաև այն բանները զորո ինձի կը ցուցնես:»

Ողին անշարժ մնաց:

Սքրուճ անոր մօտեցաւ անով ու գոլով: Եւ մատին հետեւելով կարգաց անխնամ տապանաքարին վրայ իր իսկ անունը, իՊինքիք ՍթբՌՈՒԺ:

«Ե՞ս եմ անկազնին վրայ պառկող այն մարդը,» գոչեց ծնրադրելով:

Մատը տապանաքարէն անոր ուղղուեցաւ և յետոյ դարձեալ տապանաքարին:

«Ոչ, Ողի, ոչ, ոհ, ոչ:»

Մատը տակաւին հոն էր:

«Ողի,» աղազակեց Սքրուճ, ամուր կառչելով անոր պարեզոտին, «ինձի մտիկ ըրէ: Ես առջի մարդը չեմ: Զեմ ուղեր ըլլալ այն մարդը որ պիտի ըլլայի ան-

շուշտ, եթէ այս տեսակցութիւնը չպատահէր: Ի՞նչ պէտք կայ զայս ինձի ցուցնելու, եթէ ամէն յոյս կորսուած է ինձի համար:»

Առաջին անգամ ըլլալով թուեցաւ թէ երերաց ձեռքը:

«Բարի Ոգի,» շարունակեց Սքրուճ գետնամած եր՝ կը բազութեամբ, «քու բնութիւնդ կը բարեխօսէ ինձի համար, կը զթայ ինձի: Վստահացուր զիս թէ կեանքս փոխելով կընամ դեռ փոխել այս ստուերները զորս ցուցուցիր ինձի:»

Բարի ձեռքը երերաց:

«Մրտիս մէջ պիտի պատուեմ Ծնունդը, և պիտի ջանամ տօնել տարին ի բուն: Պիտի ապրիմ Անցեալին, Ներկային և Ապագային մէջ: Այս երեքին ալ Ոգիները պիտի տիրեն ծոցիս մէջ: Պիտի չմերժեմ այն դասերը զորս անոնք կ'աւանդեն: Ոհ, ըսէ թէ կըրնամ սրբել այս քարին վրայ զրուածը:»

Իր տագնապին մէջ բռնեց ուրուական ձեռքը: Զանաց այն ազատիւ բայց Սքրուճ զօրաւոր բրդաւ իր տղերսին մէջ և կեցուց զայն: Ոգին, աւելի զօրաւոր, ետ մղեց Սքրուճը:

Վերջին անգամ մը ևս բազկատարած աղօթելով որ փոխուի իր ճակատագիրը, Սքրուճ փոփոխութիւն մը նշմարեց տեսիլին գլխանոցին ու տարագին մէջ: Ամփոփուեցաւ այն և պղտիկնալով, պղտիկնալով, մահճակալի սիւնի մը ձեւն առաւ:

ՏՈՒՆ Ե

ԱՅԱԽԱՑՄԱՆԸ

Այս, և մահճակալի սիւնն իրն էր: Անկողինն իրն էր, սենեակն իրն էր: Եւ, ինչ որ լաւագոյն ու բարեբախտագոյնն է, առաջիկայ ժամանակն իրն էր գարմանի և հատուցման համար:

«Ես Անցեալին, Ներկային և Ապագային մէջ պիտի ապրիմ,» կրկնեց Սքրուճ, անկողնէն ելլել ճգնելով: «Եյս երեքին ալ Ոգիները ծոցիս մէջ պիտի տիրեն: Ով ձէյքը Մարլի, ասոր համար փառք երկնից և Ծնունդի եղանակին: Ծնրագրելով կ'ըսեմ զայս, ով ձէյքը, ծնրագրելով կ'ըսեմ:»

Այնքան զուարթ և ուրախ էր իր բարի դիտաւորութիւններով որ անոր խոպտո ձայնն հազիւ կը պատասխանէր իր կոչին: Ոգիին հետ իր պայքարին մէջ սաստիկ լացած էր և դէմքն հիմա արցունքով թաց էր:

«Խլուած, հանուած չեն,» ըսաւ Սքրուճ, անկողնի վարագոյններէն մին գրկին մէջ ծալելով: «Ամբողջովին խլուած հանուած չեն օղակներով, կապերով: Ամէն բան հոս է: Ես հոս եմ: Հլլալիք բաներուն ստուերները կը բնան չնջուիլ: Պիտի չնջուիլն: Գիտեմ թէ պիտի չնջուիլն:»

Զեռքերն անզագար իր հազուասով կ'զբաղէին—ներս որ գուրս զարձնելով, ծուռ հազնելով և պատուելով, սիսալ տեղ գնելով և ամէն տեսակ այլանդակութեան միջոց ընկելով:

«Ի՞նչ ընելս չե՞մ պիտեր,» զոչեց Սքրուճ նոյն շունչով խօսելով ու խնդալով և կատարեալ «Լաօքօն»ի մը ձեն առնելով իր գուլպաներով: «Փետուրի պէս թեթեւ եմ, հրեշտակի պէս երջանիկ, զպրոցականի պէս զուարթ,

զինովիլիպէս ցնդած: Շնորհաւոր Ծնո՞ւնդ ամէնուն: Երաշանի՛կ Նոր Տարի ամբողջ աշխարհի: Օ՛ն անդր, յառա՛ջ:»

Վաղելով մտած էր նոտելու սենեակը, և հիմա կը կենար հոն, կատարելապէս հեւասպառ:

«Ահա սանը որու մէջ էր փոխինդը,» գոչեց Սքրուճ, նորէն շարժելով և կրակարանին շուրջ դառնալով: «Ահա դո՞ւռը որմէ եկաւ ձեչքը Մարլիի Ողին: Ահա անկիւնը ուր Ներկայ Ծնունդի Ողին նստաւ: Ահա պատառհանը ուր տեսայ թափառաշրջիկ Ողիները: Ամէնն ուղիղ է, ամէնը ճշմարիտ, ամէնն ալ պատահեցաւ: Քա՞ն, քա՞ն, քա՞ն:»

Արդարեւ, այսքան տարիներ չխնդացող մարդու մը համար հիանալի խնդուք, ամենասպանչելի քահքան էր այն, փայլուն ծիծաղներու երկար, երկար շարքելու ծնողը:

«Զեմ զիտեր թէ ամսուն քանի՛ն է,» ըսաւ Սքրուճ: «Զեմ զիտեր թէ ո՛րքան ժամանակ անցուցի Ողիներուն հետ: Բան մը չեմ զիտեր: Լման մանկիկ եմ: Հոգ չէ: Փոյթ չեմ ըներ: Կ'ուզեմ մանաւանդ մանկիկ ըլլալ: Օ՛ն, կեցցէ:»

Մտքի այս յափշակութիւններէն յանկարծ սթափեցւ եկեղեցիներուն զանգակներով, որոնք օդը կը թնդացնէին ուժգին զանգիւններով — տինկ, տա՞նկ, տինկ տա՞նկ: Փառաւո՞ր, փառաւոր ժամանակի:»

Պատուհան վաղելով բացաւ զայն և զլուխը դուրս հանեց: Ոչ ժառախուզ կար և ոչ մշուչ: Պայծառ, վծիտ օդ, զուարթ, յուզիչ և ցուրտ: Ցուրտ մը՝ որ պարի հրաւէր կը կարդայ, ոսկեփայլ արեւ, զրախտափայել երկինք, թարմ անոյշ օդ, ուրախարար զանգակներ: Ո՞հ, փառաւո՞ր, փառաւո՞ր:

«Ի՞նչ է այսօր, գոչեց վերէն Սքրուճ՝ Կիրակնօրեայ հագուստ կրող աղու մը, որ թերեւս ներս եկած էր իր շուրջ զիտելու համար:»

«Ի՞՞՞ջ,» պատասխանեց տղան զարմացման ամբողջ իր կարողութեամբ:

«Այսօր ի՞նչ է, աղուոր մանչս,» ըսաւ Սքրուճ:

«Այսօ՞ր,» պատասխանեց տղան, «Ծնո՞ւնդ է, Ծնո՞ւնդ ի՞նչ:»

«Ծնունդ է,» կրկնեց Սքրուճ ինք ալ: «Զեմ սխալած: Ողիներն ամէն ինչ մէկ զիտերուան մէջ կատարած են: Անոնք կրնան ընել ինչ որ կ'ուզեն: Հարկան կրնան: Հարկան կրնան: — Օ՛ն անդր, աղուոր տղայ:»

«Օ՛ն անդր,» պատասխանեց տղան:

«Գիտե՞ս հաւափածառին խանութը, երկրորդ փողցին մէջ, անկիւնը,» հարցուց Սքրուճ:

«Հարկա՞ւ,» պատասխանեց տղան:

«Խելացի մանչ,» ըսաւ Սքրուճ: «Նշանաւոր տղայ: — Գիտե՞ս արդիօք թէ ծախեցին հոն կախուող մեծ հնդկահաւը, ոչ թէ փոքրիկը, այլ մեծը:»

«Ո՞րը, այն որ ինծի չափ մէծ է,» պատասխանեց տղան:

«Ի՞նչ սքանչելի տղայ,» ըսաւ Սքրուճ: «Համոյք է անոր հետ խօսիլ: — Այս, մանչս:»

«Հո՞ն է: կախուած կը մնայ զեռ,» պատասխանեց տղան:

«Ի՞՞՞ք,» ըսաւ Սքրուճ, «գնա, գնէ:»

«Կատա՞կ,» գոչեց մանչը:

«Ոչ, ոչ,» ըսաւ Սքրուճ, «լուրջ կ'ըսեմ: Գնա զնէ և ըսէ որ հոս բերեն, որպէս զի բացատրեմ թէ ո՞ւր տանելու են: Մարդուն հետ եկուր, և քեզի շիլին մը կու տամ: Եկուր նուազ քան հինգ վայրկեանէն, և քեզի երկուքուկէս շիլին կու տամ:»

Տղան գնգակի պէս սուրաց: Գնդակ մը ասոր կէս արագութեամբ արձակող մը աներեր ձեռք ունենալու է:

«Պոպ Քրէչիթի տո՞ւնը պիտի զրկեմ,» շշնչեց քրուճ, ձեռքերը շփելով և խնդալին ճաթելով: «Պիտի չզիտնայ զրկողը: Թայնի թիմի կրկին մեծութիւնն ունի: Ճո Միլը երբեք ըրած չէ խաղ մը որ հաւասարի

անոր զոր ես պիտի ընեմ՝ Պոպի զրկելով այդ հնդկահաւը»:

Զեռքը որով գրեց հասցէն՝ աներեր չէր, բայց մարդը գրեց և վար գնաց փողոցին գուռը բանալ, հաւավաճառին կողմէ եկողին պատրաստ ըլլալու համար: Մինչ հոն կեցած կ'սպասէր, դրան ուսնակն աչքին զարկաւ:

«Որչափ ապրիմ, պիտի սիրեմ զայս,» ըսաւ Սքրում, ձեռքով զգուելով զայն: «Երբեք պիտած չէր ուշադրութեամբ: Ո՞րքան պարկեշտ երեւոյթ ունի: Սքանչելի ուսնակ է: — Ահաւասիկ հնդկահաւը: Օն անդր՝ Եկուր, ի՞նչպէս ես: Շնորհաւոր Ծնո՛ւնդ:»

Հնդկահաւ: Բնաւ չէր կրնար ուռքերուն վրայ կենալ: Մէկ վայրկեանի մէջ պիտի կոտրէր զանոնք կնքամոմի պէս:

«Վայ, անկարելի է զայն Քէմտըն Թառւն տանիլ,» ըսաւ Սքրում: «Կառք մը առնելու էք:»

Ծիծաղը որով ըսաւ զայս, ծիծաղը որով վճարեց հնդկահաւին համար, ծիծաղը որով վճարեց կառքին վարձքը, և ծիծաղը որով վարձատեց տղան, գերազանցուեցան միայն այն ծիծաղով որով անշունչ նրաւաւ դարձեալ իր աթոռը և խնդաց մինչեւ լալ սկսաւ:

Դիւրին գործ չէր ածիլուիլ, վասն զի ձեռքն անւաղար կը դուզար: Եւ ածիլուիլն ուշադրութիւն կը պահանջէ, նոյն իսկ երբ չէք պարեր նոյն միջոցին: Սակայն եթէ կարէր իր քթին ծայրը, կտոր մը կը զուն սպիզանի պիտի զնէր անոր վրայ և բոլորովին գոն ըլլար:

Իր լաւագոյն հագուստն հապաւ ու վերջապէս փողոց ելաւ: Ժողովուրդը գուրս թափած էր հիմա, ինչպէս տեսաւ ինք Ներկայ Ծնունդի Ոգիին հետ: Սքրում, ձեռքերը ետին կապած քալելով, ամէն մարդ զիտեց ուրախ ժպիտով: Մէկ խօսքով, այնքան անդիմազքելիորէն հաճելի երեւցաւ որ երեք չորս զուարթ մարդիկ ըսին, «Բարի լոյս, Պարոն, Ուրախ Ծնո՛ւնդ քեզի:» Եւ Սքրում յետոյ շատ անգամ ըսաւ թէ ուրա-

խարար բոլոր ձայներուն մէջ, զորս երբեք լսած է ինք, այդ բառերն ամէնէն հաճելի եկան իր ականջներուն:

Շատ հեռու գացած չէր դեռ, և ահա նշմարեց թէ իր կողմ կու զար դէր այն մարդը որ գրասենեակ եկած էր նախորդ օրը և ըսած, «Կարծեմ, Սքրումի և Մարդի ի գրասենեակն է այս:» Սիրաը ցաւիլ սկսաւ երբ մտածեց թէ այն պարոնն հիմա ի՞նչպէս պիտի նայի իրեն, երբ իրարու պատահին: Սակայն զիտցաւ թէ ուղիղ ի՞նչ ճամբայ կար իր առջեւ, ու անոր հետեւեցաւ:

«Սիրելիս,» ըսաւ Սքրում, քայլերն արագցնելով և մարդը երկու ձեռքերով բոնելով, «ի՞նչպէս էք: Յուսամ թէ յաջողեցաք երէկ: Շատ աղնիւ գործ կը կատարէիք: Ուրախ Ծնո՛ւնդ քեզի:»

«Պ. Սքրում:»

«Այս,» ըսաւ Սքրում: «Այդ է անունս, և կը վախամ թէ հաճելի չէ ձեզի: Թոյլ տուէք որ ներում իննդրեմ: Բարութիւնը պիտի ունենա՞ք» — հոս մըրս մունջով խօսեցաւ Սքրում անոր ականջին:

«Տէր ողորմեա՛,» զոչեց մարդը, որպէս թէ շընչասպառ ըլլալով: «Սիրելիք իմ Պ. Սքրում, լուրջ էք:»

«Եթէ կը հաճիք,» ըսաւ Սքրում: «Ոչինչ պակաս: Անգնար շատ պարտքեր կան ասոր մէջ, ձեզ կ'ապահովցնեմ: Կը հաճի՞ք այդ շնորհն ընել ինծի:»

«Սիրելիս,» ըսաւ միւսը ձեռք թօթվելով, «չեմ գիտեր, ի՞նչ ըսկու եմ այսպիսի առատա—»

«Բան մը մի ըսէք, խնդրեմ,» պատասխանեց Սքրում: «Եկէք, տեսէք զիս: Կու զա՞ք:»

«Կու զամ,» պատասխանեց պարոնը: Եւ յայտնի էր թէ պիտի զար:

«Շնորհակալ եմ,» ըսաւ Սքրում: «Երախտապարտ կ'ընէք զիս: Յիսուն անգամ շնորհակալ եմ: Օրհնեալ ըլլար:»

Եկեղեցի զնաց, փողոցները շրջեցաւ, հոս հոն վազող մարդիկը զիտեց, տղայոց զլուխը շոյեց, մուրացիկներ հարցափորձեց, տուներու խոհանոցներուն ու պատուհաններուն նայեցաւ և տեսաւ թէ ամէն ինչ

հաճոյք կը պատճառէր իրեն։ Երբեք չէր երազած թէ ուեէ պտոյտ — ուեէ բան — կրնար այդքան երջանկուածիւն պատճառել իրեն։ Կէսօրէ ետքը քայլերն ուղղեց դէպ իր քեռորդւոյն տունը։

Մինչև համարձակեցաւ երթալ զարնել դուռը, տասը տասներկու անգամ անցաւ տանն առջեւէն։ Բայց համարձակեցաւ վերջապէս և զարկաւ դուռը։

«Տէրդ տո՞ւնն է, սիրելիս,» ըսաւ Սքրուձ աղջըշան։ Ազուոր աղջիկ, շատ աղուոր։

«Այս, Պարոն։»

«Ո՞ւր է, աղուորս,» ըսաւ Սքրուձ։

«Ճաշարանը, Պարոն, տիկինին հետ։ Ես վեր կ'առաջնորդեմ ձեզ, եթէ կ'ուզէք։»

«Ծնորհակալ եմ։ Ինք կը ճանչնայ զիս,» ըսաւ Սքրուձ, ձեռքն արդէն խսկ ճաշարանին փականքին վրայ դնելով։ «Ես հոս կը մտնեմ, սիրելիս։»

Մեղմով բացաւ գուռոր և գլուխոր ներս մուծեց։ Ահոնք սեղանը կը դիտէին (որ ճոխապէս զարդարուած էր իրենց առջև), վասն զի այս գեռատի տնարարները միշտ բծախնդիր կ'ըլլան այսպիսի բաներու մտնին և կ'ուզէն ամէն բան բարեկարդ տեսնել։

«Փրէտ,» ըսաւ Սքրուձ։

Ահ, ո՛քքան դող եղաւ քեռորդւոյն կինը։ Սքրուձ այդ պահուն մոռցած էր թէ տիկինն անկիւնը նստած էր ոտքերոն, տակ աթոռակով մը։ Ապա թէ ոչ երբեք պիտի չընէր այսպէս։

«Ո՞վ է ան,» գոչեց Ֆրէտ։

«Ես եմ, Սքրուձ Մօրեղբայրդ։ Ճաշի եկած եմ։ Կ'ընդունի՞ք զիս, Ֆրէտ։»

Ինդունի՞լ զինք։ Բարեբախտութիւն եղաւ որ աշոր թեւը թօթվելով չխախտեց տեղէն։ Հինգ վայրկենին մէջ Սքրուձ տնեցի եղաւ կատարելապէս։ Աւելի սրբադին ընդունելութիւն անկարելի էր։ Քեռորդւոյն կինը ճիշտ նոյն ընդունելութիւնն ըրաւ։ Նմանապէս Թոփը երբ ներս եկաւ, նմանապէս զիրուկ քոյրը երբ ներս եկաւ, նմանապէս ամէնը երբ եկան։ Հիանալի

ընկերութիւն, հիանալի՝ խաղեր, հիանալի՝ միաձայնութիւն, հի-ա-նա-լի՝ երջանկութիւն։

Բայց հետեւեալ առաւօտ կանուխ զրասենեալ դնաց։ Շա՛տ կանուխ։ Կարող պիտի ըլլա՞ր արդեօք հոն գտնուիլ և Պոպ Քրէչիթի ուշանալը բոնել։ Այդ էր անոր սրտին բոլոր բաղձանքը։

Եւ եղաւ, այս, կարող եղաւ։ Ժամն ինը զարկաւ։ Զկար Պոպ։ Քառորդ անցաւ։ Զկար Պոպ։ Լման տասնըութուկս վայրկեան ուշացաւ։ Սքրուձ նստաւ իր գուը բաց թողլով, որպէս զի տեսնէ անոր մուտն Աւազանաձեւ Խացին մէջ։

Դուռը բանալէ առաջ Պոպ գլխարկն հանեց, չալն ալ։ Սկնթարթի մէջ նստաւ աթոռին վրայ և սկսաւ փութով զրել՝ իբր թէ ժամը իննէն ի վեր կատարելի գործը լրացնելու և բնաւ պակաս չթողլու չանքով։

«Պարո՞ն,» մրմռաց Սքրուձ իր սովորական ձայնով, որքան կրնար նմանցնել։ «Ի՞նչ ըսկել կ'ուզես օրուան այս ժամուն գալով հոս։»

«Ճատ կը ցաւիմ իրօք,» ըսաւ Պոպ, «ուշ եմ այսօր։»

«Այս, էք,» կրկնեց Սքրուձ։ «Այս, էք։ Հոս եկէք, ինզրեմ։»

«Տարւոյն մէջ անգամ մը միայն եղաւ այս, Պարոն։» ըսաւ Պոպ աղաչական ձայնով և գլուխն Աւազանէն գուրս հանելով։ «Այսեւս պիտի չպատահի։ Երէկ քիչ մը ուրախութիւն ըրի, Պարոն։»

«Նայէ, քեզի ի՞նչ կ'ըսեմ, բարեկամ։» ըսաւ Սքրուձ։ «Ես այս տեսակ բանի չեմ կրնար տանիի այլեւու։ Եւ ուստի,» շարունակեց աթոռէն ցատկելով և այնպիսի հարուած մը տալով անոր կուրծքին որ մարդը գանդաշելով Աւազանին մէջ ինկաւ դարձեալ — «Եւ ուստի պիտի աւելցնեմ ամսականու։»

Պոպ երերաց և քիչ մը քանակին մօտեցաւ։ Խոր ձեցաւ անմիջապէս բոնել ու զետին զարնել Սքրուձը քանակով և պոռալ զաւթի մողովլուին որ օգնութեան փութան և բոնաշապիկ մը բերեն։

«Ուրախ Ծնունդ, Պոպ,» ըստ Սքրուճ՝ անոր կրնակը ծեծելով այնպիսի եռանդով մը զոր կարելի չէր սխալ հասկնալ: «Ճատ աւելի ուրախ Ծնունդ, Պոպ, ով իմ բարի մարդուկս, քան զոր վայելած ես իմ քով տարիներէ ի վեր: Պիտի բարձրացնեմ ամսականդ և պիտի ջանամ օգնել տառապող ընտանիքիդ: Այսօր իսկ կէսօրէ ետքը գործդ ու վիճակդ ի նկատ պիտի առնենք, Պոպ, տաքուկ բաժակներով: Արծարծէ կրակդ, և աման մը ածուխ գնէ անմիջապէս, Պոպ Քրէչիթ, անմիջապէս:»

Սքրուճ աւելի քան հաւատարիմ էր իր խօսքին: Կատարեց զայն լիովին և անհունօրէն եւս աւելի: Իսկ Թայնի թիմի որ ջմեռաւ՝ երկրորդ հայր եղաւ: Այնքան բարի բարեկամ, բարի տէր և բարի մարդ եղաւ: Բարան բարի քաղաքը կամ բարի աշխարհի ուրիշ ուեէ բարի քաղաք, գիւղ կամ աւան կը ճանչնար: Ումանք խնդացին տեսնելով փոփոխութիւնը զոր կրեց: Բայց ինք թողուց որ խնդան և հոգ չըրաւ, վասն զի խելացի ըլլալով գիւղէր թէ այս երկրագունդին վրայ բարի ոչինչ կը պատահի, որու վրայ սկիզբը լիուլի չխնդան ումանք: Եւ զիտնալով թէ այդպիսիներ կոյր կ'ըլլան արդէն, յարմար սեպեց որ իրենց աչքերը ճմոթկեն ծաղրալից ժպիտներավ, ինչպէս կ'ընեն անոնք որ այդ ախտն ունին աւելի խիստ ձեւերով: Իր սիրտն ալ կը խնդար և այդ բաւական էր անոր:

Սյլեւս զործ չունեցաւ Աղիներու (*) հետ, այլ բացարձակ ժուժկալութեան Սկզբանքով ապրեցաւ այնունետեւ, ու միշտ կ'ըսուէր թէ ան զիսէ լաւ պահել Ծնունդը, եթէ ողջ ուեէ անձ ունի այդ զիտութիւնը: Երանի թէ ճշմարտապէս այդ վկայութիւնը տրուի մեզի համար, ամէնուսա ալ համար: Եւ այդպէս, ինչպէս ըստ Թայնի թիմ, Աստուած Օրհնէ՛ Մեղ, Ամէն Մէկս:

(*) Այս բառին Անդղիերէնը կը նշանակէ նաև Աղելիցներ:



2079

ՇԱՀԵԿԱՆ ԳԻՐՔԵՐ

ՄԻԱՅՆ ԳՈՎԻԹԹ	1
ՀԵՐԱՑԻԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐԴԱՐԱՎՈՐԻՑՆԵՐ	16
ԱԽՏԱ ԳՈՎԵՐՈՎԱՐ	16
ԹԵՐԵ ԼԵՎԻԹՈՒ	1
ԱԽՏԱՆԵՐ ԲԱՐԵՎՈՒ	2
ԳՈՎԻ ԽՈՎԻՆՈՒ	1

— 40 —

ԳԻ 25 ՇԱՀԵԿԱՆ